Իր կեանքի առաւօտէն մինչեւ երեկոն՝ իր կէտ նպատակին եղաւ նուիրում իր ուխտին: Ազգ. պատմութեան թողլով յիշատակութիւնը անոր ամբողջ կեանքի կարեւոր մանրամասնութիւններուն կը բաւականանամ ըսել թէ դպրոց եւ եկեղեցի եղան իր գործունէութեան հանգրուաններ եւ հոսոյց իր ազգասէր ձգտումներու ամբողջ տոկոսը մինչեւ որ գերագոյն պաշտօնեայ կարգուեցաւ Լուսաւորչի աւանդական կանթեղին, զոր վառ պահեց ցվերջ, սէր եւ ակնածանք ներշնչելով ի սփիւռս աշխարհի ցրուած հայ զաւակներուն եւ Լուսաւորչի դարաւոր սրբավայրին հիմերը տարածելով ամէն հայ հոգիներու մէջ, որոնք ամէնքն ալ տրտմեցան եւ սփոփուեցան իրենց ձախողանքին եւ անկումներուն մէջ. մտածելով թէ հեռուն ունին Լուսաւորչի քայլերու հետքերը կրող վայրերուն մէջ հայր մը հասարակաց, որ կը հովանաւորէ զիրենք, անոր սիրահարուստ սիրտը կը բաբախէ ուժգին իր որդւոց բարօրութեան համար եւ կ'աղօթէ:

Արժան է մաղթել այժմ. ո՛վ մեծ հովուապետ, քեզ հանգիստ յաւիտենական, երկնային երանութիւններու օթեւանին մէջ:

ՄԱՅՐԱՄՈՒՏ

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌ՝ ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ

ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԿՈՐՍՏԵԱՆ ԱՌԹԻՒ

---

Նման Հրեաներու՝ որոնք զունդագունդ խռնուած Սողոմոնեան տաճարի աւերներուն առջեւ, **որ լացի պատ**(*) անունով հռչակուած է, կողբերգեն անցեալի կորուստը, ես ալ պահ մը մտքով կը թռչիմ դէպի Երուսաղէմ, Սիոնի բարձունքին վրայ հաստատուած Ս. Յակոբեանց մայրավանքը շրջապատող պատերը կը նկատեմ



ԿԻՍԱՆԴՐԻ ՀՈԳԵԼՈՅՍ ԴՈՒՐԵԱՆ Ս.Ի
ԻՐ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ

**Քանդակուած Օր. Այծեմնիկ Վ. Զարդարեանէ, աշակերտուհի** Leonarda di Vinci **իտալական գեղարուեստից վարժարանին Գահիրէի:**

---

[*] *Երուսաղէմ, Հարէմ էլ Շէրի-*

լացի պատեր, որոնց ետեւ եզական հոգի մը իր պայծառ աչքերը յոյսին փակեց Ապրիլ 27ին որ կիրակէի առտուն երբ ծայր կուտար Մայր արեւը Ս. Քաղաքի բանաստեղծական հորիզոններուն խաղաղ տարածութեան վրայ: [**]

Հայ ժողովուրդին սէրը անոր համար կ'երեւակայէր անմահութիւն եւ երբ ան ամէն մահկանացուի ճակատագրին հպատակելով հրաժեշտ առաւ՝ շատեր թերահաւատեցան թէ անկարելի

---

*քին (Սողոմոնի տաճար) հարաւ արեւմտեան անկիւնն է որ կը կոչուի «լացի պատ», անգլիերէն* **Ուիփինկ ուօլ** *Այս պատը Հրեաներուն շնորհուած է մօտաւորապէս 400 տարի առաջ, Սուլթան Րաշիտ Գ. ի օրով, Հրեաներուն եւ Իսլամներուն միջեւ գոյացած համաձայնութեան վրայ: Հրեաներ արտօնուած են այդ տեղը գործածել իբրեւ սրբավայր առանց սակայն որեւէ նորոգութիւն կատարելու անոր վրայ.*

*Ամէն ուրբաթ եւ շաբաթ օրերը բազմաթիւ Հրեաներ այս վայրը կը դիմեն, կ'աղօթեն կուլան ու կողբան, գլուխնին պատին կը զարնեն, նոյն իսկ ինքզինքնին կը վիրաւորեն ինչպէս Պարսիկները Նէվրուզին օրը ու կը սգան իրենց նախնիքներուն այդ տաճարը զոր կորսնցուցած են հիմայ:*

(**) *ՍԻՈՆ, ամսագիր Ապրիլ Մայիս* 1930:

է՞ այս երկնաչու մեկնում, թէ այդ հուրը չէ յաւիտենական, թէ անոյշ հիւանդութեան մը թմբիրն է, զոր շուտով պիտի թօթափէ երջանիկ հայրը, դարձեալ պիտի խմբէ շուրջը իր հօտն, իր աշակերտները բաշխելու անոնց գիտութեան անսպառ գանձեր:

Խաբկանք եւ երազ՝ այս ամէնը. ցուրտ իրականութիւնը կը հեգնէ մեր մտածումները եւ կը զուժէ թէ մեր անենասիրելի Դուրեան ոչ եւս է: Արդէն Եղիայի հրեղէն կառքերով մեր անզուգական բանաստեղծը սլացա՜ւ դէպի արդարներու օթեւանն:

Ո՞վ, գերազանց մշակ, պիտի առատացնէ այսուհետեւ հայ գրականութեան ոստանաց այգիին ողկոյզներն, ո՞վ, սոկրատեան միտք, պիտի մարզէ մատաղերամ սաներ, լաւագոյնին գիտութեամբ, ո՞վ, հայ Ոսկեբերան, պիտի արձակէ պատգամներ պերճախօսութեան՝ մեր սրբավայրերու բեմէն, ո՞վ, ընտրեալ առաջնորդ, պիտի ընծայէ իր անձը տիպար եկեղեցականութեան, վարձատրուած բիւրաւորներու գրուատիքով:

Աւա՜ղ, մեր շուրջը կ'ընդարձակի անապատը, կը պատէ զմեզ անյուսութիւնը, կը չարչարէ զմեզ անստուգութիւնը, պիտի ուզէինք միշտ տեսնել փառքի ճաճանչներով գեղեցկացած այս դէմքը, երէկ դափնիներով պսակուած, այսօր դալկատիպ տժգոյն:

Հայ եղեռնամայրեր, լռեցէ՛ք, ձեր որբ ու կոծ կարող չեն թարգման ըլլալ մեր ցաւերուն, ձեր անձուկ մտքի կարիքինը անկարող է չափել մեր խոր վէրքերուն ծաւալը: Աւա՜ղ, ի՜նչ ահաւոր վայրկեան էր այն, երբ մեծ վարդապետը, շըր-ջապատուած իր սիրական հատորներով, որոնց մէջ մտքով թափառեր էր յիսուն տարիներ, կը փակէր ահա զանոնք, յաւիտենականութեան բաց մատեանը վերծանելու, «յիսուն տարիներ թաւա-լեցաւ արեւու նման ամպէ ամպ, մրրիկէ մըր-րիկ եւ հուսկ մարտնչումի բոլոր ճգնութեամբ նախանձելի վախճան ունեցաւ», [Բազմավէպ] ի՞նչպէս անլուր կսկիծ մը կ'արիւնէր իր հեզ հո-գին, երբ պիտի թողուր իր ձեռնասունները, կիսատ ձգելով թելադրանքներ եւ պարգեւներ իր բար-ձըր իմացականութեան: Ա՜հ, որքան դիւրաբեկ է մարդկային կազմը: Ըսուած է թէ հիւանդութիւնը պայքար մըն է, բայց ո՞վ կարող է այսքան ա-զազուն կազմով կռուիլ: Մեր Դուրեանը ամէն ձիրքերով դիւցազ մը, բայց անզօր եղաւ դաժան ախտերու դաշնակցութեան առջեւ:

Եւ ահա յաղթուած եւ ննջուն ինկաւ, գնաց հանգչելու իր յոգնած գլուխը Ս. Փրկչի մէջ, հոն թերեւս երազելու Յակոբայ սանդուղը հան-դերձ երանութեան:

Թէեւ ինք անէացած յաւէտ, բայց ես կ'ապրիմ իր քաղցր յիշատակներով. կը յիշեմ անցեալը,

դպրոցը եւ մանկութիւնս, Իւսկիւտարը եւ իր օդա-սուն բացավայրերն, այս ամենուն հետ պատկերը դալկահար պատանիի մը, որ Դուրեանն էր, մեր ու-սուցիչը, ոչ, ոչ, մեր ընկերը, մեր երէց եղբայրը, որ յանկարծ կրօնաւորի սքեմն առաւ, իր ամ-բողջ հանոյքները ամփոփելով գրքի հատորի մը մէջ. զայն գրկած անցաւ մարդերու ամբոխին մէջէն, անտարբեր իր շուրջ բոլորին, մինչեւ որ օր մըն ալ ձեռք առաւ իշխանական գաւազան եւ հովուեց իր սիրասուն գառնուկներն, գրաւեց հայութեան ուշն եւ իր մեծ անունը փառքերով հնչեց, իր հռչակը չամփոփուեցաւ իր ժողո-վուրդի մէջ, այլ ընդարձակ հորիզոններ ընդգրկեց, օտարներ իսկ գնահատեցին զանի, մինչեւ անգամ Եւրոպայի ամենէն մեծ վեհապետը պատ-ուեց զանի, Անգղիա ասպետ հրամանատար կար-գեց զանի վերջապէս արծիւ սրաթռիչ բարձուն-քէ բարձունք սաւառնեցաւ, մինչեւ որ նախան-ձոտ մահը իր սուր սլաքով դիտապաստ ձգեց զանի անչափելի բարձրութիւններէ թաւալգլոր, եղո՜ւկ մեզ:

Վա՜յ հայ ժողովուրդին՝ որ դառնացի ար-ցունքներէ կուրացած աչքերով, ահաւոր փոթո-րիկներով խափանուած ուղիներու մէջ մոլորա-քայլ իր սիրելի Դուրեանը կը կանչէ ողբաձայն, չհաւատալով անոր սլացքին դէպի անմահու-

թիւն դէպի երանելի հայրերու լուսեղէն բնագաւառը՝ ուր այս սուրբ հոգին պիտի հանգչի անվախճան երանութիւններու մէջ:

Իսկ ես պարզած կարօտի թռիչներ, կըսլանամ հոն ուր կը հանգչի իմս Դուրեան եւ թոյլ բազուկներովս գրկած անոր դամբանը, զոր սրտիս անձուկ պարտէզին ծաղիկներով կը պճնեմ, կը կնքեմ այս տկար խօսքերն, իր պերճախօս լեզուն փոխ առնելով՝ Օրմանեանի դագաղին առջեւ իր արտասանած սա բառերը Ներայի Ս. Երրորդութեան բեմէն, իրեն կը վերադարձնեմ եւ կը գոչեմ. «Ոտքի ել, Սրբազա՛ն, կանգնէ եւ ոգեւորէ մեզ խորաթափանց քարոզներովդ. ո՞վ իրաւունք տուաւ քեզ այսպէս մեկնիլ անդարձ . . .»:

Ս. Գ.

ԶԵԿՈՅՑ.— Մեր ամփոփած նիւթերու շարքը սկսելէ առաջ հաճոյք մըն է ինծի յուշ ածել այն ամէն համակիր ակնարկներ, որոնք ուղղուեցան ինծի այս փոքրիկ ձեռնարկիս իբրեւ խրախոյս եւ գոզտրիկ գնահատանքով պատուեցին զայն:

Շնորհակալութի՛ւն ամէնուն:

Ատոնցմէ հատ մը միայն կը համարձակիմ հրատարակել, իբր անկեղծ բարեկամներու զգացման թարգման, մանաւանդ թէ զայն ստորագրող գրագէտ Հ. Սիմոն Երեմեանի դիւթական գրչին հմայքը ցոլացնելու միանգամ եւս:

ԲԱՐԵԿԱՄ ԿԱԹՈԳԻՆ

ԳԱԲԱՄԱՃԵԱՆ ՍԻՐԵԼԻ . . .

Հասակով հունտի չափ փոքր, արժանիքով մեծ գունտի չափ ծանր, ձեր տարեցոյցին համար շատ անո՛ւշ շնորհաւորութիւններ:

Երանի՛ ձեզի որ փոքրկութեամբ այդ մտաւոր ձեր մանկիկ մատենին զհայր գրականութեան մեր փառաւորէք:

«Փոքուն ընդ մեծամեծացն դասեալ». Նարեկացի մեր Ս. Գրիգորի այս խօսքն ձեր տարեցոյցին է արժանապէս յարմար:

ՄԱՂԹԵԼՈՎ ԲԱՐԵՇՆՈՐՀ ՆՈՐ ՏԱՐԻ՝

Փատովա 3/1 1930

Ձերդ
Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

# ՈՒՐՈՒԱԿԱՆՔ

## Ա.

Քանի՜ քանի՜ աղջկանց մեռնիլն, աւա՜ղ, տեսայ ես.
Ճակատագի՛ր: Որս մը միշտ պէտք է մահուան դժնդակ.
Հարկ է որ սուր մանգաղին ներքեւ իյնան խոտն ու սէզ,
Հարկ է որ զուարթ հանդէսի պարախումբերն խօլ ու վէս՝
Կոխեն վարդեր ոտքի տակ:

Հարկ է ցամքի այն առուն՝ որ կը հոսի մէջ ձորին.
Հարկ է փայլա՛կը շողայ, ու շողայ պահ մը միայն.
Հարկ է այրէ նախանձոտ Ապրիլի ցօղը ցրտին
Իր աստղակերպ ծաղկներովն հրպարտացած խնձորին՝
Քաղցրաբոյր ձի՜ւնը զարնան:

Այո՛, այս է կեանքն: Անշո՛ւշտ կը յաջորդէ տիւին ցայգ.
Հո՛ւսկ՝ զարթում մը կայ պահուած դիւական կամ երկնային.
Խընջոյքի շուրջ կը բազմի ամբոխ մը հոծ ու անյագ,
Տատեր սակայն հոն թափուր թողլով իրենց տեղն ու կայք՝
Դեռ չաւարտած կը մեկնին:



## Բ.

Քանիներու տեսայ մահն: Էր մին ճերմակ ու փափուկ,
Միւսը զոզցես կ'ունկնդրէր նըւագներու երկնային.
Միւս մ'ալ անզօր վայրահակ ճակատն էր դրած ի բազուկ,
Ու զերդ թռչուն՝ որ թռիչով կը կրքէ ոստը ճապուկ
Հոգին՝ մարմինն էր բեկած:

Մին տժգոյն էր, մըտազբօս, զառանցանքի անձնատուր,
Կը մըրմընջէր անուն մը՝ որ ա՛լ չունի յիշատակ.
Կը նըւաղէր մին ինչպէս քնարին վրայ երգ մ'ընդոյր,
Միւսն ալ անո՛ւշ կը ժըպտէր որհասին մէջ մահաբոյր՝
Իբրեւ սթափող մի հրեշտակ:

Ամէնքն ալ զո՛ղտըր ծաղիկ, այն ինչ ծըլած կը մեռնին.
Աղկիոննե՛ր ընկըլուզուած իրենց բոյնովն ի խոր ծով.
Աղաւնինե՛ր՝ զոր երկինք էր ընծայած աշխարհին.
Մանկութիւն՝ սէր ու շընորհ զարդն էր իրենց. տարիքնին
Կը հաշուէին գարունով:

Ի՜նչ, մեռա՞ծ են արդէն, ի՜նչ, քարին ներքե՞ւ են անձայն.
Այդ սխրալի էակներն երգ ու նայուածք ա՛լ չունի՞ն.
Մարեցա՞ն ա՛յնքան ջահեր, ա՛յնքան ծաղիկներ խըլուեցա՞ն . . .
Թողէ՛ք ուրեմն որ կոխե՛մ չոր տերեւներ ցիրուցան,
Մոլորի՛մ խորն անտառին:

Հ՛եշտ ուրուականք. հոն՝ ուր ե՛ս կը խոկամ շուքը
Նըստած՝
Կարգաւ կուգան ինձ լըսել, ինձ հետ ըլլալ խօսակից.
Աղօտ լոյս մը կը ծածկէ կամ կը յայտնէ՛ թիւն աղջկանց,
Մութ՝ սաղարթուն ոստերու մէջէն կ՚տեսնեմ ես թափանց
Իրենց աչքի ցոլքն անբիծ:

Քոյր մ՚է հոգիս այդ բոլոր ըստուերներուն գեղավոյն.
Կեանք ու շիրիմ մեզ համար չունին օրէնք կամ սահման.
Մերթ իրենց հետ կ,առնեմ թռի՛չ. կ՚օգնեմ իրենց
Քայլերուն.
Անճա՛ռ տեսիլք՝ ուր մեռա՛ծ եմ ես անոնց իսկ
հանգոյն,
Անոնք ալ ո՛ղջ՝ ինձ նըման:

Անոնք իրենց կուտան ձեւն իմ մըտածմանցս համօրէն
Ու կը տեսնեմ ես զանոնք. կ՚ըսեն՝ «Եկո՛ւր մօտ մեզի».
Յետոյ շիրմի մը եզե՛րքը գիրկընդխառն կը պարեն.
Յետոյ տակաւ հեռացած կը ծածկուին խաւարէն,
Ու կը յիշե՛մ յերազի . . . :

Դ.

Մի՛ն մանաւանդ.— հրեշտակ մ՚էր, ըսպասուհի մը
համբոյր,
Ճերմակ ձեռներ, հառաչքով ուռուցիկ լանջք
մ՚անշըշուկ.



Գաղթածինի էր նայուածքն իր աչերուն սեւաթոյր,
Ու լուսեղէն թարմ պըսա՛կ մ՚էր, անծանօ՛թ հըրապոյր,
Տասնհինգամեայ ճակտին շուք:

Ո՛չ, չը մեռաւ նէ սիրոյ հալումաշովը թարթոք,
Սէրն իր համար դեռ չունէր հանոյք կամ կռիւ
բազմազան.
Բան մը դեռ չէր կըրնար տրո՛փ մ՚ազդել սիրտին անդորք.
Ամէնքն ի տես կ՚ըսէին՝ «Ի՛նչ գեղեցիկ է,» ո՛չ ոք
Ականջն ի վար կ՚ըսէր զայն:

Նէ, պարը՛ շա՛տ կը սիրէր, մահուն առիթն ա՛յն օրէն,
Պարահանդէ՛ս կը սիրէր ակնախտի՛ղ հեշտագի՛ն.
Դեռ իր անի՛ւնը սարսռուն կը խըբրտի մեղմօրէն՝
Երբ գիշերուան մէջ պայծառ սիպտակ ամպեր կը
պարեն
Շուրջ երկնային մահիկին:

Նէ պարը շա՛տ կը սիրէր: — Երբ տօն ըլլար՝ ապահով
Երեք գիշեր կ՚երազէր, երեք օրեր մըտախոհ.
Կին՝ պարուհի՝ երաժեշտ, որ դադար չեն գիտեր, ո՛վ,
Իր քունին մէջ կուգային խռովել գըլխիկն. հանելով
Սնարին մօտ ծա՛ղր ու ժըխոր:

Յետոյ պակեր՝ մանեակներ, եւ դեռ ինչե՛ր սքանչելի,
Ի՛նչ զօտիներ պաղպաջուն՝ ցոլքերով վէ՛տ վէտ ծածան,

Ի՛նչ անկումներ նրբահիւս մեղուաց թեւէն աւելի,
Ժապաւէններ, դրասանգներ՝ սապատներով լիուլի.
Ծաղիկներ, զի՛ն պալատան:

Եւ երբ հանդէսն ըսկըսէր, կոյսերուն հետ խընդամոլ
Նէ կը վազէր. հովհարին տալով ձեռքին տակ շրշիւն.
Խլատեռներու մէջ փաղփուն կ'նստէր պարին իբր ամոլ,
Մինչ սիրտը թո՛ւնդ կը շաչէր բարբառներով զուարթ ու խոյ՝
Հետ բիւրաձայն նուագներուն.

Ո՛րքան հանոյք էր դիտել կոյսի կամաւն անվրհաս.
Կը շարժըրէփր շրջազգեստն իր զանակնե՛րը կապոյտ.
Սեւ մեծ աչերն սեւ քցափի՛ն տակ փայլելով անանջատ՝
Կը նմանէին զոյգ մ'աստղի գիշերներուն ի ճակատ
Ամպի ծալքին ներքեւ մութ:

Ամէն ինչ պա՛ր ու ծիծաղ էր ներա մէջ՝ խինդ պէս-պէս.
Ա՛յ տղայ: Զարմա՛նքն էր պարապ մեր ժամերուն տըրտմագին,
Սիրտը երբէք չը բացուիր այդ պարերուն ի հանդէս,
Լօղիկներուն շուրջ փոշին երբ կը թըռչի մըրրատես,
Տաղտուկն ալ շո՛ւրջ հանոյքին:

Նէ շրջշրջիկ պարերէ զի՛լ կը տարուէր յորձասոյր.
Թեւաբուսիկ կ'ընէր դարձ՝ շունչ չառնելով ապաքէն,



Ու կ'արբենար պարծ սրընգին հնչիւններէն հեշտալուր,
Դիւթիչ տօնէն, ծաղկներէն ու ջահերէն ոսկեհուռ,
Ձայնի՝ ոտքի աղմուկէն:

Երանութի՛ւն է կայտռելն ամբոխին մէջ՝ խելացնոր,
Ու զգալ թէ պարն կը յորդէ մեր զգայութի՛ւնը համակ,
Երբ չենք գիտեր թէ ամպի՞ մէջ կը դառնանք թաւալգլոր,
Թէ որս կ'ընենք երկրէն դուրս, կամ կը կոխե՞նք արդեօք խոր
Ու պտուտկող մի կոհակ:

Սակայն, աւա՜ղ, հարկ էր որ՝ երբ ծագէր լո՛յսը այգուն
Մեկնէր, սպասէր սեմի վրայ լոկ սնդուսէ կրկնոցով.
Ու շատ անգամ՝ նո՛յն ատեն՝ աննենգ պարողն այդ անքուն
Ըզգաց սարսո՛ւռը սողոսկ՝ վրայ իր մերկ ուսերուն՝
Առաւօտի շունչին զով:

Խօլ այդ հանդէսն ի՛նչ տըխուր վաղորդայններ կը թողու.
Երթա՜ք բարեւ պար, պըչրանք, եւ մանկական դու ծիծաղ.
Կը յաջորդէր յամառ հա՜զը՝ քաղցրաձայն երգերու.
Կապուտակ տենդին. տայն՝ հանոյքին գի՜րգ ու աղու,
Վառ աչքերուն՝ աչք նըւաղ:

## Դ.

Ու մեռա՛ւ նէ. երջանիկ, տասնհինգամեայ, սրտագրա՛ւ.
Մեռա՛ւ, թողլով այն հանդէսը՝ որ սուզ առթեց մեզ անհուն.
Մեռա՛ւ, ու մա՛հը՝ մոլար մօր մը բազկէն զայն առաւ՝
Դեռ զարդարուած, դնելու ցուրտ ձեռքերովն անիրաւ՝
Դագաղի մը խորն՝ ի քուն:

Դեռ եւս պատրաստ էրնորէն կաքաւել պարն ընտանի.
Ա՛յնքան փութով ապշոպեց մահը չքնաղ այդ մարմինն,
Ու միօրեայ վարդերն այն՝ զարդն իր գլխուն, որ տօնի
Նախերեկին կը բացուէր փթթումով մը հոլանի,
Թառամեցան մէջ շիրմին:

## Ե.

Հէ՛ք մայրը, ա՛խ. անգիտակ իր վիճակին այն դաժան՝
Թէ այդ տկար եղէգին սէր էր տրուած այնքանի,
Ա՛յնքան երկար էր հըսկած իր տառապող մանկութեան,
Ա՛յնքան գիշեր անցուցած՝ երբ կը դնէր լալական
Փոքրիկը՝ գի՛րկն որրանի:

Բայց ի՞նչ օգուտ. օրհասին այդքան մատաղ զոհն անդարձ
Կապարին տակ դագաղի՝ տղմո՛յն ճարակ որդերուն՝
Կը ննջէ, ու հողին տակ՝ ուր զինք մինակ ենք թողած՝
Երբ տօն մը մեռելոց արթնցնէ զայն սառնամած՝
Զըմրան գիշեր մը սիրուն,



Դըժնէժպիտ ուրուական մ'իր մըռայլ ա՛րդ ու զարդին
Ներկայ է մօ՛րը փոխան, ու կը ձայնէ «ժամ է արդ».
Ներա շուրթին կապուտակ՝ կուտայ համբոյր մը ցրտին,
Ու կմախք ձեռքին վարակոտ մատերն ալ հե՛շտ կը պատին
Մազերուն ձի՛գ ու անարդ:

Յետոյ կ'տանի զայն՝ դողդո՛ջ՝ դէպի այն պա՛րը դըժխեմ,
Օդաղընաց խումբին մօտ՝ ըստուերին մէջ բըռչըտուն·
Գորշ ոլորտին մէջ լուսի՛նը կը փայլի լայնադէմ,
Ի'ւերակնի շող կուտայ ցայգուն ծիածանը վըսեմ
Արծաթածոյ ամպերուն:

## Զ.

Դուք որ հրաւէրն կ'ընդունիք ծիծղուն պարի խաղերուն,
Ըսպանուհին յիշեցէ՛ք, ան որ շիջած է ի սպառ.
Մատաղ աղջկո՛ւնք, նէ զըւա՛րթ՝ եւ իր ձեռքո՛վը թրթռուն
Կ'երթար հընձել վարդերը կեանքի՝ հաճոյք, մանկութիւն,
Գեղեցկութիւն, սէր անճառ:

Խե՛ղճ այդ աղջիկն՝ որ տօնէ՛ ի տօն փութաց շարունակ՝
Կը յարդարէր երանգներն իր այդ փունջին ակնաթով,
Բայց եղկելին. ա՛հ, որքան անցաւ կանուխ ու արագ
Գետէն տարուած տարաբախտ Ոփելիային հանգունակ
Մեռա՛ւ ծաղիկ քաղելով:

Թարգմ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆ V. HUGO

# ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ Ի ՀՆՈՒՄՆ

Բժշկութիւնը մարդուս չափ հին ու անոր հետ ծնած ըլլալով, յայտնի իմն է՝ որ նախնի Հայերն ալ անտարբեր ու անուշադիր գտնուած չէին կրնար ըլլալ այդ կենսապահ գիտութեան կամ արուեստին:



ՏՐ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Հայրենի աշխարհի բոյսերու բուժիչ յատկութիւններուն համբաւը շատ վաղնջական է, ու անոր սկիզբը կը կորսուի անյիշատակ դարերու ծոցին մէջ, ըստ այսմ, կ'ընդունիմ թէ բժշկութիւնը նախաքրիստոնէական ժամանակներուն արդէն յարգի ու նուիրական էր մեր մէջ. ապա թէ ոչ՝ ինչո՞ւ Անահիտի մը կամ Աստղիկի մը պաշտումը, իբրեւ մայր առողջութեան:

Մայրենի լեզուի բառարանին պարունակած բուսական եւ բժշկական բազմահոյլ անուններն մէկ օրէն միւսը յա՛նկարծ տպագրութեամբ չի ծնաւ. անոնք երկար մտածութեամբ ու իմաստնօրէն կերտուած են եւ



պատկառելի հնութեան կնիքը կը կրեն, ինչպէս կ'ապացուցանեն զայս լեզուաբանական Հայ եւ օտար գիտական ուսումնասիրութիւնները:

* * *

Ամէն անգամ որ անմահ Ղազար Փարպեցիի գիրքը ձեռքս եմ առած, հիացած եմ իր այն գեղեցիկ հատուածին վրայ, որով Այրարատայ նահանգին բնական գեղեցկութիւններն ու հանքային հարստութիւնը ցուցադրած պահուն, չի մոռնար ըսելու, թէ **«հոն կը գտնուին զանազան տեսակ բոյսերու «արմատներ, որոնք ՍՏՈՒԳԱՀՄՈՒՏ ԲԺԻՇԿ«ՆԵՐՈՒ ՃԱՐՏԱՐԱԳԷՏ ՃԱՆԱՉՈՂՈՒ«ԹԵԱՄԲԸ, դեղերու օգտակարութեանը մէջ «կը գործածուին»:**(*)

Եւ այս տողերը ցոյց կուտան թէ Ե.րդ դարու մէջ արդէն **ստուգահմուտ, ճարտարագէտ** ածականներուն արժանի բժիշկներ գոյութիւն ունէին Այրարատեան աշխարհի մէջ:

Փարպեցիի այդ կարճառօտ տողերը, Հայ բժշկական պատմութեան համար կը յօրինեն խիստ կարեւոր ու վաւերական էջ մը, զոր անշուշտ ուշադրութեան առած ըլլալու էր եւ Մեծն Ալիշան երբ կը գրէր՝

**«Չենք տարակուսիր՝ որ ոչ միայն Ե.րդ «դարու մէջ եղած են Հայ բժիշկք, այլ եւ՝ ա«ռելի առաջ եւ շա՛տ հին ատեն»:(**)**

(*) **«ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ» Տիպ. Վենետկայ, էջ 23—24:**

(**) **ՀԱՅ ԲՈՒՍԱԿ» էջ 3:**

մ'ալ կը գտնանք Ժ.րդ դարու պատմագիր Թովմաս Արծրունիի քով:

Երբ **Արծրունեաց պատմութեան** մէջ նա Աշոտ Վասպուրականի իշխանին 905ին պատահած մահը կը յիշէ, կը գրէ՝

**«Անոր վրայ կը տիրէին հիւանդագին ա՛յն-
«պիսի ցաւեր, որոնք մահուան յառաջընթաց
«նշաններ էին եւ որոնց դէմ ԲԺՇԿԱԿԱՆ
«ԱՐՈՒԵՍՏԻՆ ՃԱՐՏԱՐ ԵՂՈՂՆերն իսկ
«բան մը չէին կարող ընել»:(*)**

Նոյնպէս երբ կը նկարագրէ Արտաշէս Բ ի իր Սաթենիկ կնոջը համար յատուկ շինել տուած Դարաստանը, կ'արձանագրէ սա տողերը.

**«Հոն քաղցրաբոյր եւ գեղերանգ ծաղիկ-
«ներ հոյլ ի հոյլ կը փթթէին ո՛չ միայն աչքե-
«րը խտղտելու, այլ եւ ԱՍԿԼԵՊԵԱՑ ԱՐ-
«ՈՒԵՍՏԻՆ ՀԵՏԱՄՈՒՏ ԵՂՈՂՆԵՐՈՒՆ
«հնարած դեղերուն բաղադրութեանը հա-
«մար»:(**)**

*
* *

(*) **«ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ» Տիպ Օրթա-գիւղի 1852, էջ 279:**

(**) **«ԱՆԴ» էջ 56:**



Այս մասին Եզնիկի եւ Եղիշէի գրածներուն մէջ ալ չեն պակսիր վկայութիւններ եւ կարեւոր տողեր

*
* *

Մեր այս մեծ պատմագիրներուն վկայութիւններէն ազդուելով էր որ ես ալ սկսայ տարիներէ ի վեր հետամուտ ըլլալ Հայ բժշկական պատմութեան, տեսակ մը սիրահարութիւն ունենալ անոր, որ թէեւ ի սկզբան շա՛տ ամուլ շա՛տ ամուլ ու անբերրի դաշտ մը ինծի երեւաց, բայց հետզհետէ տեսայ որ ուսումնասիրութեան եւ հետազօտութեան արժանի շա՛տ նիւթեր կը պարունակէ եղեր այն:

Չե՛մ անդրադառնար յաջորդ դարերու Հայ բժշկական պատմութեան, որու մասին եղած փաստացի վկայութիւններ շատէն շատ են եւ զորս բաւական մանրամասն ներկայացուցած եմ **«Հայոց հին հիւանդանոցները»** աշխատութեանս մէջ»: (*)

Ուրախ եմ որ Երեւանի մէջ գործող բժշկապետ Յովհաննէսեան երկու տարի առաջ հրատարակեց ռուսերէն լեզուաւ Հայ բժշկական պատմութիւն մը, որուն մէջ պատիւ բրած է ինծի յիշել անունս բազմիցս, իմ բոլոր հրատարակութիւններէս փոխառութիւններ ընելով:

**ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄԵԱՆ**

**Բարիզ**

(*) **«ԿՈՉՆԱԿ» 1925**

Քաղած վարդը բոյրին յես զի գայ նորից,
Յես չի գայ յաւերժ ժամն անցած օրից.

Անցած կեանքդ հիմա երա՛զ է, մըշո՛ւշ,
Վիշտ ու սէրդ անյուշ՝ յուշեր են քընքուշ:

Միտքդ մաքուր պահէ ու բարի արա՛,
Որ ամպ չի նստի յուշերիդ վրայ:

Մի՛ փախեր ... մահին կը հասնիս վաղ - ուշ,
Ձեղածի պէս կ'անցնին երազն ու մըշուշ ...:

"Երգեր ու վէրքեր      Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ

---

## ՄԱՀԱՐՁԱՆ

### ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃԵԱՆԻ

Մեծ երգահան, պարծանք հայուն, որ տառապիր՝
Իզմիրի մէջ կնքեցիր կեանքդ անշըքօրէն,
Քեզ յուշարձան այս շիրմին տակ խաղաղ հանգիր.
Թող երկնից մէջ անուշ երգեր հոգիդ օրրեն:

[ Աղէքս. Փանոսեան ]



## ԱՍՔԱՆԱԶ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ

**Ասքանազ** անուան կը հանդիպինք Հին Կտակարանի մէջ երկու տեղ.— Ծննդոց, Ժ. 3. իբրեւ անդրանիկ որդի **Գամերայ**, որ Նոյի Յաբեթ որդւոյն որդին էր. իսկ Երեմիա. ԾԱ. 27 (ըստ Եբրայական բնագրին), իբրեւ մին երեք հիւսիսային ազգերէն, որք Մեդացւոց (**Մարաց**) դաշնակիցներու հանգամանքով կը կանչուին **Բաբելոնի** դէմ: Հին Կտակարանն ասկէ աւելի լոյս չիտար մեզի:

Այս համարներէն երկրորդը յատկապէս արժէք ունի իբրեւ **պատմական** յիշատակութիւն մը, որովհետեւ մարգարէն երեւակայական ու առասպելական թշնամիներ չպիտի հրաւիրէր իրապէս գոյութիւն ունեցող, ժամանակակից տէրութեան մը դէմ:

Արդ, բեւեռագիր արձանագրութեանց ընթերցումն ի յայտ բերած է որ Երեմիայի այն համարին մէջ Ասքանազի հետ միասին յիշատակուող երկու անուններն իրապէս գոյութիւն ունեցող երկու պետութիւններ կը ցուցնէին: Առաջինը, **Արարատ**, ըստ բեւեռագրոց՝ **Ուրարտու**, հզօր ու կարեւոր պետութիւն մըն էր Եփրատի ու Տիգրիսի ափերէն սկսեալ գրեթէ մինչեւ Երասխ ու Կուրի գետախառնուրդը տարածուող ընդարձակ երկիրներով. իսկ երկրորդը, **Միննի**, ըստ

բեւեռագրոց՝ Մաննայ, կը գտնուէր այժմու Պարսից Ատրպատականին մէջ, Ուրմիոյ լճին բոլորտիքը, մէկալէն թէեւ պզտիկ, բայց ոչ արհամարհելի ոյժ մը: Ասորեստանի պետութիւնն ասոնց երկուքին հետ ալ երեք դարէ աւելի մարտնչումներ ունեցած է:

Դժբախտաբար բեւեռագիրները տակաւին այսօր **Ասքանազ** անուան ճշդիւ համապատասխանող անունով ցեղ մը կամ տէրութիւն մը երեւան չեն բերած: Այսու ամենայնիւ, այդ արձանագրութեանց մէջ մը հանդիպինք անունի մը, **Աշգուզ(ա)**, զոր Փրոֆ. Սէյսի եւ Հայնրիխ Վինքլէրի նման քաջ ասուրագէտք չեն վարանիր նոյնացնելու **Ասքանազ** անուան հետ, ցոյց տալով թէ Երբայական այբուբէնքի մէջ **ուաւ** եւ **նուն** տառերն իրարու որչափ կը նմանին ձեւով եւ թէ ձեռագիր ընդօրինակողները շատ դիւրաւ ասոնք մէկը միւսին հետ շփոթելով, կրնային առաջինին տեղ երկրորդը գրել: Այս գիտուն մարդիկ ասկէ զատ, ցոյց կուտան թէ **Աշգուզ** անունով նշանակեալ տեղը կամ պետութիւնը նաեւ չէր արհամարհելի ոյժ մը, որովհետեւ Ասորեստանի ամենահզօր մէկ ինքնակալն Ասուրբանիպալ իրեն նուաճութիւն չի սեպեր անոնց հետ դաշնակցիլը՝ մինչեւ անգամ իր մէկ դուստրը կնութեան տալով Աշգուզացւոց **Բարդատուա** իշխանին: Կատարելապէս ստոյգ կերպով ծանօթ չէ Աշգուզ տէրութեան աշխարհագրական դիրքը, բայց վերոյիշեալ գիտունք, ինչպէս նաեւ մեծ պատմագէտն



Մասփէրօ. կը խորհին թէ այդ ժամանակ ան կը գրաւէր Կովկասեան դռներէն մինչեւ Ատրպատականի ներսերը բաւական ընդարձակ երկամաս մը՝ արեւելքէն Կասպից ծովով եզերեալ:

Սոյն բեւեռագէտ ու պատմագէտ անձինք ուրիշ ենթադրութիւն մըն ալ կը փորձեն — **Աշգուզը** կը նոյնացնեն **Սկիւթ** անուան հետ, ինչոր բնաւ անհաւանական չէ լեզուաբանօրէն· եւ այսպէս Ասքանազ կամ Աշգուզ անուան մէջ կը ճանաչեն Սկիւթացիները, որոնք Ասորեստանեայց մէկ սուր ճգնաժամին, երբ Մեդացւոց Կեաքսար թագաւորը պաշարած էր Նինուէն, օգնութեան փութացին Ասորեստանցւոց, եւ յաղթելով Մեդացւոց՝ ստիպեցին զանոնք Նինուէի պաշարումը թողլով իրենց երկիրը պաշտպանելու: Այս Սկիւթացիք Մեդացիներն իրենց կերպով մը հարկատու ընելէ ետքը, նուաճեցին ուրիշ հիւսիսային ժողովուրդներ ալ տարածուելով մինչեւ Փոքր Ասիոյ խորերը: Մեդացիք եւ Սկիւթացիք վերջապէս Ն. Ք. 608ին ատեններն իրարու եւ Բաբելոնի հետ հասկացողութեան եկան ու միասին կործանեցին Ասորեստանի պետութիւնն ու անոր հռչակաւոր մայրաքաղաքը: Ետքէն, աւարի բաժանման առիթով գժտուած կ'երեւին. որով Ն. Ք. 593ին, երբ Երեմիայի պատգամն արձակուած է, Մեդացիք եւ անոնց դաշնակից Սկիւթացիք (Աշգուզ, Ասքանազ), այս վերջիններուն ստորադաս ու հարկատու (Ուրարտու) եւ Միննիի (Մաննայ) հետ, սպառ-

նական դիրք մ'ունին հարաւային մեծ պետութեան դէմ: Ահա այս է բուն Սէյսի, Վինքլէրի եւ Մասպերոյի՝ Ասքանազ անուան պատմական ծագումը:

Գալով Ծննդոց, Ժ. 3ի համեմատ Ասքանազի եւ **Գամերի** առնչութեան, նոյն գիտունք կը յիշեցնեն թէ բեւեռագիր արձանագրութեան մէջ շատ կը կրկնուի **Գիմերրայ** անուն մը, որով նշանակեալ ժողովուրդը ամէն պատճառ կայ նոյնացնելու դասական հեղինակաց յիշած **Կիմմերեաններուն** հետ, — այս հզօր ցեղը, որ նախապատմական ժամանակներէ ի վեր կը բնակէր Սեւ Ծովու հիւսիսային կողմի ընդարձակ տափաստաններուն մէջ, եւ Քրիստոսէ առաջ Ը. դարուն, արեւելքէն կովկասեան դռներու ճամբով, իսկ արեւմուտքէն Գանուբի վրայ, թերեւս Կիմմերեան Վոսպորոսէն նաւերով ալ, դէպի հարաւ արշաւեցին, կործանեցին Փռիւգիոյ մեծ պետութիւնը, նուաճեցին Լիւդիական հզօր թագաւորութիւնը եւ լման մէկ դար ամբողջ Փոքր Ասիան իրենց զօրութեան ներքեւ պահեցին: Ամէն պատճառ կայ հաւատալու թէ ինչպէս Կիմմերիացիք [Գամեր] եւ Սկիւթացիք [Աշգուզ, Ասքանազ] միեւնոյն լեզուն խօսող եւ միեւնոյն բարքի ու կենցաղի տէր արենակից ժողովուրդներ էին, ու թէեւ ետքէն Սկիւթացւոց անունն աւելի հռչակաւոր եղաւ, սակայն ինչպէս կարելի է տեսնել Հոմերոսի երգերէն, Կիմմերիացիք նախապէս աւելի հզօր ու անուանի էին, որով Հին Կտակարանը կատարեալ իրա-



ւունք ունէր ցեղագրական սովորական ոճով Գամերն իբրեւ **հայր** եւ Ասքանազն իբրեւ անոր անդրանիկ **որդին** ներկայացնելու:

Մեր ոսկեդարեան հայրապետք կ'երեւի թէ ճշդիւ գիտէին սոյն անուններու պատմական տարողութիւնը, որով Կապպադովկիան **Գամիրք** անունով կոչած են, Երեմիայի յիշեալ համարը թարգմանած են գրաբարին մէջ կարդացուած ձեւով, եւ **Ասքանազեան** կոչումին տուին այդ հանրածանօթ ցեղաբանական իմաստը: Իրենց այս ճշգրիտ ծանօթութեան բուն աղբիւրը չենք գիտեր, բայց առանց վարանումի կրնանք ըսել թէ Ասորի կամ Արեւմտեան եկեղեցեաց հայրապետաց մեկնաբանութիւնները չէին. ոչ ալ Հրեայ Յովսեպոսը, որոնք զմեզ շատ հեռու եւ սխալ տեղեր կ'առաջնորդեն:

Յուլիս 24 1930 **ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ**

---

ՀԱՆՃԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ. — Պետրոս Դուրեանի անունը կը քանդէ մոռացութեան բարձրացուցած պատուարները, ինչպէս ջուրի անզուսպ հոսանքը կը քշէ կը տանի կրանիթ քարերով ամրացուած վիթխարի թումբեր:

# ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ

Իբր մեր բնաշխարհի յատուկ բնական հարստութիւն



ՈՐԴՆ ԿԱՐՄՐՈՅ

Նկատուած է այս ճճին, որմէ որդան կարմիր անուն ազնիւ ներկը կ'ելնէ: Ասոր թուրքերէն **չիչէք** կ'ըսեն, ինչպէս Հայաստան ալ տեղ տեղ ծաղիկ կ'անուանեն. երբեմն ալ **գըրմըզ**, լատիներէն քոքչինելլա, ֆրանսե-



րէն cochnille: Հինէն ի վեր այս որդը Արարատի գաւառէն կ'ելնէ, ինչպէս Խորենացին աշխարհագրութեան մէջ կ'ըսէ, «Ունի Արարատ . . . եւ որդն յարմատոյ սիզոյ, ի զարդ կարմրութեան գունոց»: Ղազար Փարպեցին ալ կը յիշէ զայն Արարատի զանազան բերքերու կարգին: Ճամբորդներու պատմածէն գիտենք որ նոյն գաւառին մէջ կը գտնուի այս որդը **չայիր** բուսած սէզին վրայ, տարին երկու անգամ, մէկ մը Մայիսին, մէյ մըն ալ Օգոստոսի կէսէն մինչեւ Սեպտեմբերի վերջերը: Սաստիկ հովոտ տարիներ քիչ կ'ըլլայ, խոտերու տակ կամ մանր փոսերու մէջ կը պահուի, բայց Քիւրտերը գիտեն անոնց տեղը, կը ժողվեն մեծ ջանքով եւ տաք ջրով կ'եփեն եւ անով կը ներկեն իրենց բրդեղէններն ու կապերտները. այսպէս անոնց վաճառումէն մեծ շահ կ'ընեն: Այս որդերուն ներկովը կը շինուի Էջմիածնայ կաթողիկոսին կնքամոմը, նաեւ անոր ծիրանեփառ կարմիր գոյնը կը ծառայէ մագաղաթներու վրայ գրելու կամ ուրիշ արքունական կնքոց եւ նամակաց եւ արքազան գրքերու մէջ զարդեր նկարելու համար, որուն յաճախ կը պատահինք հայոց կաթողիկոսաց եւ թագաւորաց հրովարտակներու մէջ:

Հռովմէացի պատմիչ մը կ'ըսէ թէ [ Քրիստոսի 275 թուականին առեններն ] պարսից թագաւորը Աւրելիանոս կայսեր ընծայ ղրկեց բրդէ բանուածք մը ըսելով· « Ընկալ զծիրանին մերոյ աշխարհիս »: Յիրաւի այնպէս պղւոր ծիրանի ներկած էր, որ բոլոր հռովմէացիք զար-

մացան, կ'ըսէ պատմիչը։ Եւ որովհետեւ այն ատենը Հայաստան Պարսից իշխանութեան տակն էր, շատ հաւանական է որ Հայաստանի որդանովը ներկած ըլլայ այն բրդեղէնը, ինչպէս Համել (*) ալ կ'ըսէ. ինք կը կարծէ թէ Ս. Գրոց մէջ ստէպ յիշուած Որդան Կարմիրը Հայաստանի բերք ըլլայ, [ Տես Հայկազեան Բառագիրք ի բառն Որդան Կարմիր, ուր նշանակուած են Ս. Գրոց բազմաթիւ վկայութիւնք ]:

Ընդհանրապէս յայտնի եղած է որ երկու գլխաւոր տեսակ է այս որդը։ Մէկը սէզի վրայ կեցող, միւսը ուրիշ թուփերու եւ ծառերու:

Սէզի վրայ կեցող որդը մինչեւ հիմայ միայն Հայաստան ու Լեհաստանի մի քանի տեղուանքը տեսնուած է: Թէպէտ Հայաստանինը Լեհաստանինէն տարբեր կ'երեւայ։ Ամենէն անուանին է Ամերիկայինը, որ Նոփալ ըսուած ծառին վրայ կը գտնուի եւ հաշուուած է թէ ամէն տարի 800.000 լիբրէն աւելի Եւրոպա կը բերուի: Ամերիկացիք այս Նոփալ ծառը մասնաւոր կերպով կը շատցընեն, վրան որդերուն համար մանր բոյներ ալ կը շինեն ու տարին երեք չորս անգամ որդերը կը ժողուեն, տաք ջրով կամ փուռը դնելով կը մեռցնեն ու կը ծախեն։ Այսպէս կ'ընեն նաեւ Սպանիացիք եւ ուրիշներ։

(*) Փէթէրպուրկի ճեմարանին բազմահըմուտ ուսուցիչ 1843ի ատենները, որ ճառ մը խօսած է Որդան Կարմիրի վրայ։



Որդան կարմրոյ արուն կը զանազանուի էգէն, նախ եւ առաջ իր մարմնոյն փոքրկութեամբը համեմատելով էգին հետ. երկրորդ իր թեւերովն՝ որոնցմէ էգը բոլորովին զուրկ է, երրորդ գլխոյն վրայ ունեցած երկու եղջերիկներուն աղուամազերով ծածկուած լինելովն եւ չորրորդ, պոչին վրայ ունեցած երկու մազերովը եւ որոնք զգալի կերպով որչափ որ երկարին, այնչափ եւս իրարմէ կը հեռանան, ձեւացնելով այսու իրենց միութեան կէտին վրայ սուր անկիւն մը:

Իսկ էգը, որ եւ կարեւորագոյնն է եւ ուսկի կը հանուի որդան կարմիր կոչուած գոյնը, բեղմնաւորութենէն առաջ փոքրամարմին, կարմիր, գնդաձեւ եւ ողորկ միջատ մը, իսկ բեղմնաւորութենէն ետքը կը դառնայ կ'ըլլայ գնդակ մը զուրկ թաթերէ եւ եղջիւրներէ եւ ծածկուած եղջերային թաղանթով. թրթուրները կարմըռագոյն են եւ մինչդեռ որովայնի բաժանումներուն վրայ հազիւ աղուամազերու հետքը կը նշմարուի, իր կողերուն ամէն կողմէն անհամեմատ երկայն կնաձեւ եւ սուր փուշեր կ'արձակէ:

Այս միջատը, ըլլալով ամէնափոքր, հաւաքելն է առանձին եւ դժուարին արհեստ:

Որդան կարմրոյ առատութիւն կախում ունի բոլորովին ձմեռնային խստութենէ եւ կամ թեթեւութենէ ասկից վերջ կ'ելլեն այս միջատք փնտռելու: Փորձուած է որ որչափ ձմեռը մեղմ ըլլայ, այնչափ այս բերքը առատ կ'ըլլայ:

Գարնան սկիզբը իրենց մեծութիւնը կը հաւասարի կորեկի մը մեծութեան, սակայն աճումնին խիստ արագ է եւ մինչեւ Ապրիլ կը հաւասարին հաղարջի մը հասիկի մեծութեան, որուն կը նմանին մասամբ մեծութեամբ եւ գոյնով իսկ: Մայրերնին կը մեռնի Մայիսի մէջ եւ նոյն ամսուն վերջերը կը գտնուին մէն մի խոզանակին մէջ յորում ամփոփուած էին 1 800 - 2,000 հաւկիթներ, ուրկէ պիտի ծնանային նոյնչափ թրթուրներ ամսէ մը վերջ: Այս խոզակները կը ժողվեն թրթուրներու ելնելէն առաջ, որ ըսել է Յունիսի սկիզբները: Այս միջատները հաւաքողները կ'ըլլան ընդհանրապէս հովիւներ, տղայ եւ կին, որոնք այնպիսի վարժութիւն մը ստացած են, որ երբեմն կարող կ'ըլլան օրուան մը մէջ հաւաքելու երկու լիպրա որդան կարմիր: Հաւաքելէն ետքը պէտք է ուշ դնել քանի որ թրթուրները հաւկիթներէն չեն ելած, հանել եղունգով մայրը որ արդէն մեռած է, սակայն սպասելով որ հաւկիթները իրենց մեծութեան վերջի աստիճանին հասնին, որպէսզի անով գոյնն ալ առատ ըլլայ կարելի եղածին չափ:

Հրաշալիք մըն է նաեւ որ այս որդը տեսնուած է 14,800 ոտք Մասիսու բարձունքը, ինչպէս տեսած է զայն Մարկով Ռուս ճանապարհորդը իր վերելքին ատեն Նոյեմբեռը 1889ին, մինչդեռ շատ կենդանիք կամ մարդկային տոհմեր բնաջինջ եղած են, բազմադարեան քաղաքակրթութիւններ իսկ անհետ կորած են. կարմիր ճարճուն



# ՔՆԱՐԹՈՂԻՆ ԱՂԵՐՍԸ

Ա՜խ, ո՜վ դարձընէ պիտ' ինծ
Թամբի՛ռնը վաղեմի
Ու փըչէ մէջըս աստուածային
Շունչը հրեղէն
Որ ես գոռամ, ո՜վ իմ ցեղս,
Երգը զարթումի:

Ու ցցուելով ըստրկութեան
Անարգ մոխիրէն
Բոցավառուած սուրբ
Խանդովը դիւցազնի,
Վերականգնես արեւուն տակ
Տունը հայրենի . . .

**Վերյիօում** **Ա. ՉՕՊԱՆԵԱՆ**
Քերթուած

---

կէտ մը, անընդհատ յաջորդութեամբ, եւ ապրած է յարաճուն ժամանակին հետ զուգընթացաբար: Այսու ուզելով մեր երկրին հսկայ լերան հետ յաւերժանալ:

Քաղուածք.— ԲԱԶՄԱՎԷՊ Ա. տարի 1843 Հ. Գաբրիէլ Վ. Այվազովսքի [ էջ 56 - 57 ] ԲԱԶՄԱՎԷՊ ԽԷ. տարի 1889 [էջ 186 - 187] ԲԱԶՄԱՎԷՊ ԽԸ. տարի 1890 [ էջ 275 - 277 ]:

# ՆԱԽՆԻ ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԸ

## ՍԱՀԱԿ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁՈՐԱՓՈՐԵՑԻ ( 677 - 703 )

---

**( Էջ մը մեր եկեղեցական պատմութենէ )**

---

Քրիստոսի 351-352 թուին երբ Արիոսի աղանդը սաստկապէս արծարծուած էր, ահա յանկարծ մեծ հրաշք մը կը գործուի Երուսաղէմի մէջ. Քրիստոսի խաչը Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց լեռ բարձրանալով լուսեղէն կը փայլի եւ կ'ապշեցնէ հանդիսատեսները։ Այդ օր բիւրաւորներ կը հաւատան Քրիստոնէութեան եւ կը մկրտուին։

Սուրբն Կիւրեղ Եպիսկ. Երուսաղէմի այն սքանչելիքը եւ կատարուած հրաշքները գրելով կը յղէ Կոստանդ կայսեր։ Եկեղեցին ի յիշատակ այս մեծ Հրաշքին տօն սահմանեց, Երեւման Սուրբ Խաչի, որ կը կատարուի Կարմիր Կիրակիէն վերջ։

Այս տօնի առթիւ երգուած Ս. Խաչի շարականներ կընծայուին Սահակ Գ. Ձորափորեցիին։

Ո՞վ է Ս. Սահակ։

Ս. Սահակ Ձորափորեցի՝ Գուգարաց [այժմ Լոռի եւ իր շրջանակները] գաւառի Արքունաշէն գիւղէն էր, աշակերտ Թէոդորոս Քռթենաւորի։ Անոր օրով



Հայաստան տակնուվրայ էր. Հիւսիսէն Խազիրք, Արեւմուտքէն Յուստինիանոս Բ. Հարաւէն ու Արեւելքէն Արաբները փոխն ի փոխ կը յարձակին Հայաստանի վրայ։ Աւանդութիւնը Սահակի կ'ընծայէ անձնուէր դեր մը, անոր սուրբ կեանքին մէկ դրուագն է Մահմատի կամ Մուհամմէտի հետ ունեցած յարաբերութիւնը։ Պէտք է գիտնալ թէ աւանդութիւնները շատ անգամ ենթակային նկարագիրը ճշդիւ կը պատկերացնեն։

Այդ միջոցին Հայաստան մատնուած է աղէտներու, Կաթողիկոսն Ապտըլլահի ձեռքով շղթայուած՝ Դամասկոս գերի կը տարուի, նոյնպէս Հայ Նախարարներ։ Հոն պատուով կը մնայ ժամանակ մը, բայց վերջապէս Կամսարական իշխան Վանանդեցի քաջերով կը հասնի կը ջախջախէ Արաբական բանակը, Արաբ ոստիկանը Դամասկոս կը հասնի եւ եղելութիւնը կը զուժէ Ամիրապետին, ահա նոր բանակ կը կազմուի։ Սահակ Կաթողիկոս կը լսէ, կը հասկնայ թէ ազգը սոսկալի աղէտի պիտի մատնուի, թէեւ հիւանդ, ճամբայ կ'ելնէ, Ամիրայ ոստիկանին ոտներուն պլլուելու եւ թողութիւն հայցելու։ Բայց հազիւ թէ կը հասնի, կը մեռնի Խառանի մէջ, եւ հոգեւարք վիճակի մէջ Արաբ լեզուով աղերսագիր մը կը գրէ եւ կը պատուիրէ իրեններուն թէ երբ յայց գայ Ամիրան, թողուն տեսնել զինքը եւ առնուլ իր ձեռքէն աղերսագիրը։ Ամիրան լսելով Կաթողիկոսին մահն ու փափաքը զինքը տեսնելու՝ պատգամաւորներու ձեռքով կը հրամայէ չթաղել մինչեւ որ ինքը գայ։ Ուր ուրեմն կը հասնի, կը մտնէ ներս եւ

իր լեզուով կ՚ողջունէ, ՍԷԼԱՄ ԱԼԷՔ: Աւանդութիւնը կ՚ըսէ թէ Կաթողիկոսի աչքը կ՚երկարի, տալու համար Ամիրային աղերսագիրը, որով կը խնդրէ Հայրապետը խնայել Հայերուն, տուք առնել եւ չվնասել, «Եթէ կատարես առաջարկս, Տէրը յաջողութիւն տայ քու իշխանութեանդ, իսկ եթէ չկատարես, Տէրը ցրուէ քու խորհուրդդ»: Կը յուզուի Ամիրան եւ գլուխը խոնարհած՝ կ՚ընդունի թուղթն եւ կարդալէն յետոյ հեծեծելով կը գոչէ. «Այո՛, խնդիրքդ կատարուած է, ո՛վ պատուական մարդ Աստուծոյ»: Յետոյ կը հրամայէ իսկոյն ներումի թուղթ գրել Հայոց նախարարներուն եւ Հայրապետին մարմինը պատուով եւ փառքով Հայաստան տանիլ եւ հոն ամփոփել:

Ահա այս Ս. Հայրապետն է որ Երեւման Ս. Խաչի տօնին կ՚երգէ այս հարցը.

«Այսօր ընդ ամպս լուսաւորս երեւեալ նշան Տէրունական խաչին բոցանիշ փայլմամբ, տեսողացն ընթացեալ ի քաղաքն պատմէին զնշան քո, Տէր Աստուած հարցն մերոց:

«Գաւազան զօրութեան ետուր մեզ Քրիստոս եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն: Սա է զէն յաղթութեան սրեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ: Սա է աթոռ Տէրունական եւ ի նմա է բազմեալ Քրիստոս Որդին Աստուծոյ: Սա է Սեղան Սրբութեան եւ ի սմա է պատարագեալ Քրիստոս՝ Գառն Աստուծոյ: Սա է կարապետ յաւուր Գալստեան Փրկչին եւ պսակ պարծանաց հաւատացելոց եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն»:



# ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ
## ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԱՆԿՈՂՆԻՆ ՄԷՋ

(Գրուած 1872ին զոր ստորագրած է Միհրան Դուրեան եղբայրը, (յետոյ Եղիշէ Սրբազան)

Գլուխը գամուած է թրջած բարձին, ձեռքերը կուրծքին դրած՝ մտիկ կ՚ընէ իր ներքին որոտումը, հոն մերթ ահաւոր լռութեան մէջ կը լսէ ձայն մը որ հոգւոյն հետ կը խօսի, մահուան երկաթեայ ոտքերուն զարզափն է ան: Կը լռէ, կը սարսռայ, կը քրտնի. կը հեւայ, սարսափահար կը ծածկէ իր գլուխը վերմակին տակ, աչքերը կը յառէ հորիզոնին, ուրկէ կ՚ընդնշմարէ թերեւս երկնքի ադամանդեայ յատակը, ու գիշերուան պահուն մինչ ցոլքի մը տեղափոխութիւնը կը տեսնէ՝ տխուր ու եղերական ստուեր մը կը տարածուի իր ճնշուած սրտին վրայ, աղքատութեան արհաւիրքն ու մահուան սոսկումը զինքը կը պաշարեն, կը քսմնի՛ ու կուլա՛յ...

Դիտէ՛ այդ բանաստեղծը, այդ դալկահար ճառագայթը որ մօտ է նուաղելու, որուն ճակտին վրայ կը փողփողի յետին «մնաք բարեաւ»ի մը տխուր վերջալոյսը, այլ եւս ան չուզեր ցոլքերու հետ ընդհարիլ ու

լուսնի հետ խոկալ, հովին հետ շնչել, տերեւին հետ դողալ, լոյսին հետ ժպտիլ, շուքին հետ շարժիլ, ցողին հետ արտասուել, ան իր ներքին մոխիրները կը խառնէ հիմայ:

Այլ այդ յուսահատական վիճակին մէջ ո՞վ է իր սփոփիչը. ոչ ոք, բայց միայն արտասուալից մայր մը:

Վերջին անգամ գրիչը ձեռք կ'առնէ, վերջին անգամ կ'ամփոփէ իր կարճ ու մութ մտածումները, որոնք արդէն իսկ դէպի անմահութիւն կը սլանան, եւ այսպէս կը գրէ մտերմական նամակի մը մէջ.— «Այս օրերս դարձեալ մշտնջենաւոր վէրքս շունչ առաւ կուրծքիս տակ, երկնքիս այս սեւ շողը, ձգէ՛ սա «նոճեաց տղան», սա «դաշնակաց բուն», որուն սըրտին անդունդը կ'ալեծփի ու շրթունքը քար կը կտրին»:

---

ՄԱՐԴԱՏԵԱՑԸ.— Տիմոն, աթենացի փիլիսոփայ էր, Քս.է 440 տարի առաջ ծնած, իր բարեկամներուն ըրած բարիքին փոխարէն ապերախտութիւն գտնելով՝ այնպէս ատելութիւն մը ունեցաւ մարդոց վրայ, որ մարդատեաց ըսուեցաւ: Անգամ մը ծառի վրայէն ինկաւ եւ ոտքը կոտրեցաւ եւ որովհետեւ բնաւ մարդու հետ չէր տեսնուեր, անխնամ անօգնական մեռաւ:

---



# ԱՍՄԱԶՈՒՆ

( Հեղինակաւոր կարծիք մը )

Այս բառին գործածութիւնը ընդհանրացնելու նիզը ինծ զարմանք պատճառած է: Ի մասնաւորի Տիկին Սիպիլ անսահման գուրգուրանք ունի անոր նկատմամբ եւ կարծես կ'ուզէ նոյն իսկ երկնագոյնը ջնջել հայ բառարանէն իր **ասմազունին** տիրապետութիւնը ապահովելու, առանց սակայն կարենալ ապացուցանելու բառին հարազատութիւնը կամ ճշդութիւնը, որովհետեւ ոչ միայն իր դասագրքերով, այլ եւ իր սանուհիներուն թարգմանութեանց մէջ ինչպէս **Ճէյն Էյրի**, **Փրկարար Վէսուբեան**, **Հէլլէի**, **Ծօ՛ պզտիկի** մէջ գործածած է յաճախ ասմազունը: Ուստի առանց տարակուսելու իմ պնդումներուս վրայ թէ ան իրաւունք չունի գործածութեան, ժամանակին դիմած էի նամակով իմ բազմահմուտ ուսուցչիս, Դուրեան Սրբազանի եւ ուզեցի իր կարծիքը, զոր հաճեցաւ ինծ հաղորդել, ահա եւ ես նոյնը կը ներկայացնեմ հետաքրքիր ընթերցողներուս յօգուտ բանասիրութեան:

«Սիրելի Գաբամաճեան,

«Նամակովդ խնդրած էիր որ «Ասմազուն» բառին համար յայտնեմ կարծիքս: Պիտի համարձակիմ ըսել որ մեր «երկնագոյն»ին տեղ գործածուելիք բառ

մը չէ ան, վասն զի սխալ գրչութեան պէտք է վերագրել բառին այդ ձեւը, թողունք բոլորովին նոր ու օտար բառ մը ըլլալու անպատեհութիւնը։ Շուշանի կամ Irisի համար [էլ սուսէն էլասիւմա - Lilium coeliste] Գաղիանոսի բառերու մէջ կը տեսնենք «սամազուն»է որ պարսիկ «Սամակիուն»ին արաբական արտաբերութեամբ առած մէկ ձեւն է, համեմատ Կեամուս [պարսկ.] Ջամուս, [արբ.] Կէվհէր = Ջէվհէր եւայլն «Սամազուն»ն կ'արդարանայ այս ձայնաբանական տեսութեամբ, իսկ «սամադուն»ը հակառակ հայեցի տառազ մը կրելուն [հայկազուն, դիւցազուն] չեմ կարծեր որ իրաւունք մը ունենայ գոյութեան։ Բայց մեր բանաստեղծները ինչպէս կարելի պիտի ըլլայ հրաժարեցնել այդ «**խալալ**» «երկնազոյնէն, բայց պիտի ըսուի. ինչո՞ւ ուրեմն ընձեռնը ընդունած է այդ **սամազունը**։ Զըլլա՛յ որ տպագրական սխալ մը սպրդած ըլլայ «սամադուն»ի տեղ։

Շատ հաւանական է, թէեւ «սամազուն»ը կայ Երեմիայի բառագրքին մէջ «լուրջ շուշան ծաղիկ» նշանակութեամբ, բայց ո՞վ կրնայ երաշխաւորել բառին ճշդութիւնը բառգրքի մը մէջ ուր կը վխտան տպագրական սխալներ եւ անիմաստ կամայականութիւններ։ Այս խնդրական բառին շուրջ պէտք է կարդալ Շթայնշնայտէրի կարծիքը Անառեանի արմատական բառարանին մէջ։»

**ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ**



ՃՇԴՈՒՄ ՄԸ.— Ըստ Գաթրճեան Յովսէփ վարդապետի հրատարակչին.— Տես նոյն հեղինակին ՀԱՆԳԱՆԱԿՀԱՒԱՏՈՅ գործին գրադատումէն քաղուած [Հանդէս 1891, Սեպտ. Ե. Տարի էջ 284]։

«Առանձին մտադրութեան արժանի է հրատարակչին, յէջն 13 Ներսէս Բ.ի նկատմամբ գրած մէկ ծանօթութիւնն, առնելով հեղինակին ուրիշ մէկ գործէն. սոյն ծանօթութեան մէջ վերոյիշեալ Ներսէսի համար կ'ըսուի «555ին դեռ կենդանի»։ Եթէ ստոյգ է այս ժամանակագրութիւնն ապա ուրեմն ըսել է թէ Դւնայ Գ. ժողովն [551ին] ոչ եթէ Մովսէս Բ.ի ժամանակ եղած է, ինչպէս ցայժմ կը գրուէր, այլ Ներսէս Բ.ի ժամանակ, հետեւաբար պէտք է որ ընդդէմ հին աւանդութեան, ընդունինք նաեւ մեր հայկական տոմարին [որ ինչպէս յայտնի է նոյն 551 տարւոյն կը սկսի,] ոչ եթէ յԵղիվարդեցւոյն, այլ յԱշտարակեցւոյն ըլլալը»։

---

ՍԷՐ.— Սէրը նման է մարգարտածաղիկին, որ լայնաբաժակ կը բացուի գիշերը հասնելուն եւ նման հարսնուկին զոր թեթեւ հով մը կը փակէ եւ որ կը մեռնի երբ իրեն հպիր։

---

ՀԻՆ ԷՋԵՐ

# ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Անցաւ, եղբայր, մեր պարզամիտ մանկութիւն,
Էլ հրաշքների չենք հաւատում մենք վաղուց,
Եւ մեր աչքում չունին այլեւս թովչութիւն
Աւանդ հասած առասպելներն հինաւուրց...

Բայց մի զրոյց, որ սրբութեան դրոշմով
Դարէ ի դար հասել է մեզ պապերից
Եւ իբրեւ գանձ նուիրական խնամով
Պահպանել է մոռացութեան աւերից,
Միշտ սրբազան ակնածութեան մի զգացում
Եւ վեհ խոհեր յարուցել է իմ հոգում:
Ամէն անգամ. երբ վերջալոյս ծիրանի
Հանգչում է մեղմ՝ Արագածի կատարին

Եւ զերդ մանկան պայծառ աչեր գեղանի,
Աստղերն երկնից փայլ են տալիս կամարին,
Նայում եմ ես եւ սպասում, որ վառվի
Մի այլ ճրագ ծերուկ լերան ճակատին:



Ո՜չ բնութեան ստեղծված է այն հրաշալի
Եւ ոչ կերտված ճարտարարուեստ մարդկային,
Այլ մի ուրիշ չնաշխարհիկ զօրութեան.
Արարչութեան խորհրդաւոր մի գաղտնիք,
Այն մեր հոգու լուսի ջահն է նուիրական,
Ողջոյն ազգի կենդանութեան երաշխիք...
Եւ այդ ճրագն, եղբա՛յր, անշէջ կը լինի,
Քանի վառող Աջն է մեզ միշտ հովանի:

Թ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ՔԻՉ ՄԸ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԿԻՆԹ (զիւմպիւլ). Յակինթն էր չնաղագեղ յոյն պատանի մը զոր Ապողոն չափազանց կը սիրէր. մինչեւ անգամ անոր հետ բոլորակով կը խաղար. Զեփիւռ անոր նախանձելով՝ բոլորակին փչեց եւ զայն դիպեցնելով պատանիին գլխուն՝ սպաննեց զանի: Երբ Ապողոն շատ տրտմեցաւ, երկիրը բուսցուց այս ծաղիկը:

# ՈՉԻ՛ՆՉ ԵՒ ՈՉԻ՛ՆՉ

Ծափեր որոտընդոստ, կեցցէներ խլացուցիչ, հիա-ցումի աղաղակներ, միաձոյլ համակրանքի պոռթ-կումներ, զանգուածային յորդումներ աւիւնի եւ սի-րոյ. որոնցմով կը փառաւորուին հանճարներ: Այս ամէնը կարող չեն սակայն ամրապնդել կեանքի թոյլ կապերը, երկարել աշխարհի վայելքներուն պահերը: Եւ մարդ այս ամէնը խորհելով կը հառաչէ. ոչինչ եւ ոչինչ:

Այս է որ կ'արձագանգէ մեռելական պղնձին ընդ-հատ ընդհատ զանգիւնը որ հեռուէն հեռու հնչած, ռուզի սարսափը տարածող գուժկան ձայնն է, որ եր-բեք չխեղդուիր, այլ մշտապէս կը գոռայ, սարսելով մեծատունը ծերանեփառ, տնանկը ցնցոտիներով դող-դոջուն: Ան է որ սիրունակ մանկիկին կը հրամայէ լքել իր մօրկան գիրկը եւ իր խաղերը, գեղանի կոյսին՝ իր երազները եւ իր տարփելիին սիրահարուտ ծոցը, որպէս եւ կեանքէն բնաւ չյափրացած մարդուն ալ իր այլազան մտածումները եւ անվերջ ծրագիրները եւ ահա անյայտ անդունդին մէջ կը խորասուզուին մարդկային հսկայ թափօրներ, կարծես ամբողջ տիե-զերք արձագանգ մը ունի, ոչինչ եւ ոչինչ:

Այս ահաւոր վճիռը բեկանելու համար հնար-ուած են սակայն միջոցներ՝ յաւերժութիւնը կապտելու եւ տեւականութեան դրոշմը քանդակելու իրենց գոր-ծերուն վրայ, այսպէս մեծազօր իշխաններ փառա-շուք դամբաններով, զոր օր. Եգիպտոսի բուրգերը կը մշտնջենաւորեն իրենց գոյութիւնը. գիտունը իր հան-ճարեղ գիւտերով կ'ապրի, եւ անոր յուսաւոր դէմքը կը ճաճանչէ խոր անցեալին մէջէն, նոյնպէս բարե-գործը կը կանգնէ յիշատակարաններ, դպրոց, եկեղեցի եւ յառաջ կ'անցնի սրբել արցունքներ մութի եւ լռու-թեան մէջ թափուած եւ օրհնութիւններով եւ աղօթք-ներով սրբացած հոգին անմահութեան պսակը կը խլէ: Ահա Վիրգիլ, որ տօնուեցաւ անցեալ տարի Ի-տալիոյ մէջ, կենդանացաւ յանկարծ, թէպէտ իր մահէն ի վեր հազարաւոր տարիներ անցած են: Ահա Գոռ-նէյլ, որուն մահուան հարիւրամեակները կը խանդա-վառէր երբեմն Ֆրանսա եւ կը հպարտանար իր այս դասական մեծ մատենագրով, նոյնպէս Հոմեր, որ Քրիստոսէ դարեր առաջ ծնած, բայց Քրիստոսէ վերջ ալ դարեր կ'ապրի ու պիտի ապրի իր նկարագրած պատերազմներով եւ երգած դիւցազներով: Տեսէք սա պարզուկ հովիւը՝ որ իր կերտած կամուրջով կը սանձէ Եփրատի ըմբոստ ալիքները, անմահութեան պսակը կը կրէ:

Ոչ ոք կ'ուզէ դառնալ ափ մը մոխիր: Անմահու-թեան արձանը կանգնուած է ամէն հոգիի մէջ: Բիւ-րաւոր ձեռքեր որ կ'երկարին պարապութեան մէջէն, անմահութեան արձանը գրկել կը խորհին:

Չըլլանք յոռետես եւ վհատ շեշտերով գոչենք.

Ոչինչ եւ ոչինչ:

Ս. Գ.

# Ե՞Ր ԹԷ Է՞Ր

Ուղղագրական սխալ մըն է, երբ գրուի չէր տեսէր, չէր գացէր, բերէր, մնացէր էր եւն. եւն: առանց միտ դնելու որ այդ «էր» վերջաւորութիւնն ոչ թէ կը համաձայնի իր օժանդակ բային «էր» երրորդ դէմքին հետ, այլ պէտք է ըստ օրինաց տառափոխութեան յառաջ գայ գրաբարի «եալ» անցեալ դերբայի վերջաւորութենէն: Եւ յիրաւի, նախնիք կը գրէին «իմ տեսեալ էր, մեր գնացեալ էր, նոցա մեկնեալ էր. եւայլն: Բայց յետ ժամանակաց այդ «եալ» վերջաւորութիւնն կորսնցնելով իւր «ա» տառը եղեր է «ել», որ կը գրուի միջին դարուց հայերէնի մէջ, այսպէս «տեսել էր, մնացել էր» եւայլն, եւ ըստ օրինաց փոխանակութեան տառից «լ» կակուղ տառն փոխուեր է հուսկ ուժեղն «ր» հայ տառին հետ, եւ կը հնչուի այժմ «տեսեր էր, չէր նայեր, անցեր էր» եւ ոչ թէ «տեսէր, նայէր, անցէր» եւայլն, որ յայտնի սխալ է ընդդէմ ուղղագրութեան:

**Հ. Ս. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ**

**(Բազմավէպ 1890 խմբ. հատոր)**



# ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փոստուռայ մը, դաշտի խոտին տակ դալար,
Աստղերու պէս կը ցոլար,
Եւ կ՚ուզէր որ միշտ վեր պարզած իր թեւեր,
Ամէն աչքի երեւէր:

«Օ՜հ, կ՚ըսէր ան, ես ալ երբ մէջ եթերին,
Թռչիմ աշխոյժ, նըմա՜ն աղուոր թիթեռին,
Այն ատեն մեծ յաղթանակ
Պիտի տանիմ շարունակ,
Եւ ամէն աչք, անխընա՜յ,
Վըրաս պիտի հիանա՜յ…:»

Լուսանըճին այս ճառէն ետք խանդագին՝
Շարժեց իր թեւ ու ագին,
Եւ վառելով իր ճըրագ՝
Վե՜ր թըռաւ արագ:

Բայց, յանկարծ, տըղեկ մը չար ու գըծուծ.
Ձայն նշմարելով վազեց ետեւէն,
Եւ զայն բռնելով իր ճակտին փակցուց·
Օ՜հ, երջանկութիւնք ի՜նչ կարճ կը տեւեն…:

Mme. SOPHIE HUE

**ԳԷՈՐԳ ՍԻՄՔԷՃԵԱՆ**

# ՁԻՒՆԻ ԳԻՇԵՐ

---

Դաշտագետինն է ճերմակ, արձանացած ու լըռիկ.
Չըկայ ո՛չ ձայն, ո՛չ շըշուկ, ո՛չ ալ կեանքի մէկ նշան,
Մինակ, երբեմն կը լսուի, լըռութեան մէջ անդորրիկ,
Ոռնումը խուլ, ողբագին անպատըսպար, խե՛ղճ մէկ շան:

Ո՛չ հետք նըւագ մ'օդին մէջ, ո՛չ դալար բոյս մ'ոտքի տակ,
Ձըմեռն իր մերկ թեւերով դաշտն ու ծըմակն է գրկեր,
Ծառերը վեր կը ցցեն իրենց կըմախքն այլանդակ,
Ցուցադրելով ամէն տեղ դժխեմ մահուան սեւ պատկեր:

Լուսինն ալ՝ խոնջ ու տժգոյն հիմա լըռի՛կ կ'արտօրայ,
Երկնից ծոցին մէջ տըրտում, կարծես մըսե՛ր է ան ալ.
Իր աչուըները տըխուր կը սեւեռէ երկրի վրայ,
Եւ այս մըռայլ ամայքէն կուզէ ան շուտ հեռանայ:

Բայց իր շողերը հիւանդ՝ դեռ յամրօրէն կ'իջնեն վար.
Նըշոյլնե՛ր ցուրտ, ուրուային, որոնք իր մահը կ'երգեն,
Ձիւնն ալ հեռուն կը շողա՛յ, անոր լոյսին տակ խաւար,
Պաղ չարաշուք ցոլքերով թափթըփելով երկինքէն:

Օ՜հ գիշերն է ահաւոր՝ թռչնոց համար ընտանի,
Ձմրան հովեր սառնագին՝ սարսըռալով կը վազեն,



Անոնք չունին բոյներ տաք՝ սաղարթներով հովանի,
Եւ հեշտաւէտ օրերու անոյշ քունը կ'երազեն:

Ու մերկ ու չոր ճիւղին վրայ, որ ծածկեր է սառն արդէն,
Խեղճերն հիմա կը դողան իրենց մարմնով նուրբ, տըկար,
Անոնք ահռած աչքերով ձիւնին էջքը կը դիտեն,
Ըսպասելով, ակնդէ՛տ, անոյշ լոյսին, որ չի գա՛ր…:

GUY DE MAUPASSANT

ԳԷՈՐԳ ՍԻՄՔԷՃԵԱՆ

---

ԵՐԳԸ — Երգը բանաստեղծութիւն է. անոր առաջին շեշտերը օրրանի սնարէն կ'արձագանգեն: Որեւէ ազգի երգը այն ազգին ոգին կը ցոլացնէ:

Մ. Միանսարեանց իր **Քնար Հայկականի** մէջ [էջ 8] կը գրէ. «Պատմաբանները ազգային երգերը պատմութեան աղբիւրների կարգն են դասում եւ աշխատում են գտնել նրանց մէջ ժողովրդական ձայնի արձագանգը: Մովսէս Խորենացին մի պատմական երեւոյթի գոյութիւնը հաստատելու համար ազգային երգերին ու աւանդութիւններին է դիմում, վկայ Վահագնի Տորքի, Արտաշէսի, Սմբատի եւ Արտաւազդի վրայ երգուածները»:

# ՎԵ՞Ց ԹԷ ԵՕԹԸ

Գեղջուկին մէկը, ի՛նչ ըրաւ չըրաւ,
Օր մը շատ աժան վեց հատ էշ առաւ.
Բայց երբոր հեծած անոնցմէ մէկուն,
Գիւղ պիտի դառնար յոգնած ու նըկուն,
Յանկարծ տեսաւ ան, խորի՛ն զարմանքով,
Հինգ հատ էշ միայն՝ շարուած քովէ քով.
Գեղջուկն աջ ու ձախ դիտեց ըն, երկար.
Բայց վեցերորդ էշն ա՛լ մէջտեղ չըկա՛ր.
Համրեց ու համրեց, տասն անգամ ուշի,
Նորէն ճիշդ չելաւ իր ըրած հաշիւ:
Խեղճը, ներսիդին պարտըկած իր ցաւ,
Լեռ, դաշտ ու բըլուր անդուլ շըրջեցաւ,
Եւ ամէն ծակ, ծուկ քններ անշըշուկ,
Բայց դարձեալ մէջտեղ չելաւ իր իշուկ:
Այն ատեն, խոնջած, գիւղ դարձաւ մէկէն
Երբ դեռ վար չիջած էշուն կռնակէն,
Պատմեց իր կնկան, սրտով վշտահար,
Իր գլխուն եկած տխուր պատահար.
Կինը, անտարբեր, բնութեամբ ալ շէն.
«Ա՛հ, մարդո՛ւկս, քաւ, նախ իջիր էշէն,
Եւ տեսնենք թէ ո՛վ քեզի դէմ դաւեց...:»
«— Չեմ գիտեր, բայց իմ էշուս թիւն էր վեց:»
«Լա՛ւ, կ'ուզե՞ս որ ես ըլլամ ճշտախօս,
«Ոչ թէ վեց, այլ ճիշտ եօթը էշ կայ հոս... »

ԳԷՈՐԳ ՍԻՄՔԷՇԵԱՆ



# ՏԱՐԻՈՅՆ 12 ԱՄԻՍՆԵՐԸ

Ահա՛ քեզ, մանկի՛կ, տասներկու ամիս,
Անոնք քեզ հետ են, ինչ որ ալ կամիս,
Եւ որոնք, գիշեր ըլլայ թէ ցերեկ,
Կը քալեն քեզ հետ միշտ երեք երեք:

Նախ ՅՈՒՆՎԱՐՆ դրած մէկ ձիւնէ գդակ,
Կ'երթայ թափօրին առջեւէն շիտակ,
Ու իր ետեւէն ալ փո՛յթ, սըրավա՛ր,
Կ'ընթանայ յառաջ ծերուկ ՓԵՏՐՎԱՐ:

ՄԱՐՏՆ ալ կուգայ շուտ խանդով կորովի,
Ցուրտ, սառ հովերու հետ ընկերովի,
Բայց ԱՊՐԻԼՆ իսկոյն կը հասնի վրայ,
Ծաղկեայ փունջով մ'որ հովէն կ'երերայ:

ՄԱՅԻՍՆ ալ անոր կ'երկարէ իւր թեւ,
Ծաղկահիւս յօդիկ մ'ըզգեցած թեթեւ,
ՅՈՒՆԻՍՆ ալ, իբրեւ երկնատուր պարգեւ,
Միրգեր կը կախէ ծառերուն ներքեւ:

ՅՈՒԼԻՍՆ, արեւուն հետ անկարեկիր,
Կ'այրէ, կը մրկէ երկինքն ու երկիր,
ՕԳՈՍՏՈՍՆ ալ տաք, բայց սրտով բարի,
Մեզ կուտայ առատ ցորեն ու գարի:

## ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիւմիւշխանէի հանքերուն բացուած ու բանուած բովերը տեսնել հետաքրքրական է: Դեղնակարմիր գոյնով տնկուած քար մը կայ. զոր **Ալ չուխայով քար** կ'անուանեն եւ ամէն բնակիչ միահամուռ կը հաստատեն թէ առատ ոսկի կայ այդ քարին տակ: Ասոր մօտերն կայ երկար փլածոյ մը, ուր կ'ըսեն արծաթ հանելու համար աշխատող յոյներէն Քառասուն անձեր փլածին ներքեւ մնացեր մեռեր են, Քառասունին անունն ալ Պալյօ: Ասոնց ընտանիք եւ բարեկամներ աղէտի պատճառով լալով կը լեցնեն քաղաքը՝ կրկնելով, Պալյօ, Պալյօ:

Այս դէպքէն շինուեր է առածն. «Ամէն ոք իր Պալյօն կուլայ:»

**(Բնաշխարհիկ բառարան)**

---

ՍԵՊՏԵՄԲԵՐը վերջն է ձեր հանգըստին,
Պէտք է ա՛լ դպրոց դառնալ վերըստին.
ՀՈԿՏԵՄԲԵՐՆ իր հետ կը բերէ աշուն,
Ա՛լ մնաք բարով դաշտ, դալար նախշուն:

ՆՈՅԵՄԲԵՐՆ իր զով ջուրովն անխնայ,
Զմրան ցուրտերուն ալ դուռ կը բանայ,
ԴԵԿՏԵՄԲԵՐՆ է որ կը փակէ տարին.
Ո՜հ, հէք ամիսներ, ձեզի ո՞ւր տարին:

**ԳԷՈՐԳ ՍԻՄՔԷՃԵԱՆ**





# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԱԾ ՎԱՌԱՐԱՆ ՄԸ

## ԱՄՍԹԷՐՏԱՄ

«Եւրոպայի Կայսրուհին» տիտղոսին շատ իրա-
ւամբ արժանացած այս հոլանտական քաղաքին մէջ
բացուած է առաջին հայ տպարանը 1660ին, ուր կային
շատ ճարտար փորագրիչներ: Մատթէոս Ծարեցի սարկա-
ւագ1600ին երկու տեսակ գիր փորել տուաւ,մէկը մեծ՝
որով սկսաւ տպել Շնորհալւոյ Յիսուս Որդին, միւսը
միջակ՝ բայց մեծէն ձեւաւոր: Ասիկա չաւարտած թէք
վախճանեցաւ ու Երեւանցի Ոսկան վարդապետին Աւե-
տիս եղբայրը լրացուց, որուն ընկերացաւ Կարապետ
վարդ. Անդրիանեցի եւ միասին գործեցին: Այն ատեն-
ները հոն եկաւ նաեւ Ոսկան վարդապետ եւ նօտր գիր
փորել տուաւ միջին գրին համեմատ: Ոսկանի գործու-
նէութիւնը Հոլանտայի մէջ տեւած է 4 տարի (1666—
1669) եւ հրատարակած է 16 գիրք: Այբենարանը իր
նախընծայ գործն է. իսկ ամէնէն հոյակապ գործն է
Աստուածաշունչը. Յակոբ Կաթողիկոսի հրամանով գոր-
ծեց: Իր վախճանելէն ետքը գրի կաղապարները կոր-
սուեցան եւ Մատթէոս Վանանդեցի, որ արդէն աղէկ
գիտէր տպագրութեան արհեստը եւ Ոսկանի հետ մէկտեղ
աշխատեր էր, նոր գիր փորել տուաւ, փայլուն շրջան

մը ունեցաւ տպարանը 10 տարիի չափ եւ 14 գիրք տպագրեց մին քան զմիւսն կատարեալ եւ օգտակար:

Այսպէս Ամսթէրտամի հայ տպարանը 60 տարուան արդիւնալից գործունէութիւն ունեցաւ եւ 1717էն յետոյ բոլորովին լռեց Մատթէոսի եղբօր՝ Ղուկաս Վանանդեցիի մահէն ետքը տպարանի ամբողջ գոյքը անցաւ Վենետիկոյ Մխիթարեան Միաբանութեան ձեռք եւ ծառայեց Մխիթարեան Տպարանի ծաղկման:

Յիշենք այս առթիւ Ամսթէրտամի Հայոց եկեղեցին, Ս. Հոգի, կանգնուած Ջուղայեցիներէ, ուր հայ գաղութ չըլլալուն՝ Գէորգ կաթողիկոսի հրամանով ծախուեցաւ. թէեւ Մասեհեան եղբայրներէն մին կ'ուզէր ինք ծախել իբր սեփականատէր ներկայանալով հոլանտական պետութեան առջեւ, բայց Գէորգ կաթողիկոս Փեթերսպուրկի կառավարութեան հզօր աջակցութեամբ իրաւատէր կանգնեցաւ եւ ծախելով՝ արդիւնքը յատկացուց իր հիմնած Գէորգեան ճեմարանին ի Ս. Էջմիածին: Եկեղեցին գնուած է «Ամենասուրբ Փրկչի Բարեգործական Միութենէն» որ որոշեց եկեղեցին եւ նորա յարակից շէնքը յատկացնել միայն կրօնական բարեգործական նպատակի եւ յանձնեց իր հսկողութեան զանուած կրօնաւորական կարգին [*]:

[*] **ԾԱՆՕԹ.— Ջերմապէս կը յանձնարարենք մեր ընթերցողներուն կարդալ Առաքել Սարուխանի ՀՈԼԱՆՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԺԶ, ԺԷ դարերում, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1926:**



Այս կարգի հոլանտացի մայրապետները Հայ եկեղեցւոյ շէնքը վերածեցին աղջկանց դպրոցի եւ արտաքին մեծ դրան հայերէն արձանագրութեան վրայ աւելցուցին հոլանտական լեզուով՝ «Ս. Անտոնի դպրոց, Հռովմէական կաթոլիկ աղջկանց ժողովրդական դպրոց, Մրէօպէլեան եւ մանկական դպրոց»:

Իրաւամբ յիշատակուած է. «Հայ համայնքի պատմութիւնը մի ոսկեայ էջ է Ամսթէրտամ քաղաքի գրքում»:

## ՍԻՐԵՆՔ ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

Պոլշեւիքեան հայերէնը իրաւամբ ընդունելութիւն չգտաւ մեր ազգէն. հայ լեզուի հարազատութիւնը իր արժանաւոր ջատագովները երեւան բերաւ եւ մայրենի լեզուն իրեն գծուած ուղիին հետեւեցաւ անսայթաք. հայ գրագէտին կ'իյնայ պահակ կանգնիլ անոր սահմաններուն վրայ, որպէս զի չբռնաբարուին անոնք կամայականութիւններով:

Ագուլիսի բնակիչներ որոնք կը համարուին հարազատագոյն սերունդ Գողթնեաց, իրենք զիրենք կը կոչեն զօկ կամ զոկ եւ իրարու մէջ կը խօսէին յատուկ բարբառով մը, որ զոկերէն կը կոչուի: Այսպէս Համշէնցիները՝ Սամսոնի վիճակէն, ունին յատուկ լեզու մը, որուն վրայ ընդարձակ ուսումնասիրութիւն մը հրատարակած է Բաբգէն Սրբազան (Տես Բիւրակն ԺԷ տարի 1900) ինչպէս նաեւ Մառացինէ

րը։ Այս անցողակի յիշատակութիւններէն յետոյ գոհու-թեամբ կը դիտենք այն ազնիւ ճիգը, զոր ունեցան մի քանի օրիորդներ հայ գրականութեան համար, հրատարակելով վէպերու թարգմանութիւններ։ Բայց ինչո՞ւ արդեօք հիւրընկալէին իրենց էջերուն **կոր** ռամիկ թարմատար մասնիկը. կ'ուզէ **կոր**, կ'ընէ **կոր**։ Կարդացէք **Հելլէն** եւ **Թօ՛ Պզտիկը**։ Այսուհանդերձ նոյն օրիորդներուն փախուստի ելք մը կը թողում, յառաջ բերելով Որատեան սա պատգամը. **«Սակայն յերկար ի վաստակ մարթի թէ հասպրդիցի»**։ Ուրիշներ ալ եւս մեղաւոր են երբ գրուածքը գեղազարդել կարծելով՝ անիմաստ սեթեւեթներով կը խճողեն իրենց տողերը անհասկնալի ըլլալու աստիճան։ Հազար ափսոս Կիւթէմպէրկի գիւտին, որ կը դիւրացնէ անպէտ գիրքերու առատութիւն մը։ Ասոնց նպատակն է գիրքերու սէրը մարել ընթերցողներու սրտին մէջ։ Պէտք է նոր Լէնկթիմուր մը՝ որ այսպիսի գիրքերու այրումով բաղնիքներ տաքցնէ։

---

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Հաց ուտելով ո՞րչափ պիտի ապրիս, շատ շատ ութսուն տարի. իսկ հացի տեղ իմաստութիւն շահելով՝ յաւիտենականութիւն մը կը շահիս։

Հացը մարմին կը շինէ, իմաստութիւնը՝ հոգի։

**ԽԻԿԱՐ**



# ՀԱՅ ԿՈՒՍԱՍՏԱՆՆԵՐ

---

Կը կարծուի թէ Ս. Բարթողիմէոս առաքեալը հիմնած է առաջին կուսաստանը Հայաստանի մէջ։ Անձնեւացեաց գաւառին մէջ հիմնած եկեղեցւոյն Ս Կուսին պատկերն միանձնուհիներու ձեռքն յանձնելով եւ անոնց իշխանութեան ենթարկելով նաեւ ուրիշ կիներ, որոնց համար խրճիթներ կը շինէ, եւ «Տեսուչս հրամայէ լինել հաւատացելոց, կացուցեալ անդ եւ քահանայս յիւրոց աշակերտաց» [Խորենացի]։

Լուսաւորչայ օրով Երուսաղիմայ մէջ Ամատունեաց նախարարներն երկու երկսեռ վանքեր հիմնած էին, ուր կուսանք Սիոնի կողմը կը բնակէին։ Մեծն Ներսէս համօրէն Հայաստանի մէջ կուսանաց վանքեր հիմնած է, ինչպէս կը վկայէ Բիւզանդ պատմագիր։

Յաջորդ դարերու մէջ կուսաստաններ եղած են եւ կանգուն մնացած։ Ստեփաննոս Օրպէլեան եւս սրտաշարժ դրուագ մը ունի թէ ի՛նչպէս Աղուանից Վարազդատ իշխանին աղջիկը Շահանդուխտ, անհամեմատ գեղանի, հայազգի իշխանի մը հարս տարուած պահուն Սիւնեաց գաւառի Բաղուց սահմանին մօտ դարանակալ իսմայելացի զօրագունդ մը յանկարծ հարսնցուին ընկերացող հեծելազունդին վրայ կը յարձակի եւ զայն կը կոտորէ, հարսնցուն յափշտակելու համար։

Սա իրեն օգնութեան կանչելով Ս. Աստուածածին եւ Ս. Հռիփսիմէ, երիվարը մտրակելով ինքզինքը վար ձգեց երիվարով մէկտեղ լերան բարձրէն եւ աներեւոյթ զօրութեամբ անվնաս՝ մինչեւ գետին իջաւ: Հոն ուխտեց կուսութեամբ ապրիլ մինչեւ իր մահը, իր ինչքերը աղքատաց բաշխեց Սիւնեաց եպիսկոպոսին միջոցաւ եւ իր քով ժողվեց կոյսեր. ապրեցաւ 30 տարի այսպէս մեծ ճգնութեամբ: Ազգ. յիշատակարանաց մէջ բարեպաշտ հայ տիկնանց անուններ ալ կը յիշուին, զոր օրինակ Ս. Վարդանայ եղբօր՝ Հմայեակի կինը, Զուիկ, Ստեփանոս Սիւնեցիի քոյրը Սահակդուխտ, որ հմուտ երաժշտութեան, տաղեր կը յօրինէր, կը նուագէր եւ կ'ուսուցանէր:

[ՔԱՂՈՒԱԾՔ]

---

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Ամէն աննախանձ՝ կամ բարեգործ կամ բարեկամ է, ամէն նախանձոտ ալ՝ կամ չարագործ կամ չարակամ է: Եւ ո՛րչափ է տարբերութիւն այսպիսի գործոյ կամ կամաց մէջ:

*** Յամառութեան եւ ամբարտաւանութեան մէջ բաժնելու ճեղք չեմ գտած:

ԽԻԿԱՐ





# ՊԷԿՈՆԵԱՆԵՐԸ

Ամէն տարի յաջորդաբար եւ կանոնաւորաբար հրատարակուած տարեցոյցի մը մէկ նոր թիւը՝ տարեդարձի հանդէս մըն է ինծի. եւ որովհետեւ ո եւ է հանդէս — գէթ ծաղիկներու բարեկամի մը կարծիքով — չի տօնուիր առանց ծաղկի, այս տարի եւս ուզեցի — մտականան համառօտ դասով մը — ծաղիկներ նուիրել մեր բարեկամ Պրն. Գաբամանեանի Տարեցոյցին բազմաթիւ համակիրներուն:

Բայց ահա ի՛սկապէս դժուարին կացութեան մը առջեւ կը գտնեմ ինքզինքս: Մեր ծանօթ, իրարմէ փայլուն ու բազմապիսի ծաղիկներուն մէջ պարագային յարմար ընտրութիւն մը ընելը, հաւատացէք, դիւրին գործ չէ. ո՞րը առնուլ եւ ո՞րը թողուլ, ամէ՛նքն ալ գեղեցիկ են, ամէնքն ալ հրապուրիչ:

Կ'ընտրեմ, վերջապէս, պէկոնեան. որ փոքր ամաթէօռներու աշխարհին մէջ իրաւամբ ամէնէն սիրուած փնտռուած ծաղիկներէն մէկն է: Իրա՛ւ, չունի ան վարդին թագուհիի տիտղոսը, եւ սակայն գերազան-

ցայտէր ազնուապետական. միւս պատուոյ տեղը գրաւած է ճշմարտապէս խնամուած ու ներկայանալի պարտէզներու մէջ, որովհետեւ շատ աչքառու ու առինքնող, շատ նուրբ ու գեղարուեստական է այս բոյսը, որքան ծաղիկներուն, նոյնքան նաեւ տերեւներուն այլազան ձեւերով ու գոյներուն պէսպիսութեամբ:

Պէկոնեաները իբր բոյս եւ իբր ծաղիկ, իրենց ունեցած մասնայատկութեանց ու մշակման պայմաններուն համաձայն, մասնագէտներուն կողմէ զանազան դասակարգերու բաժնուած են. բայց որովհետեւ Տարեցոյցի մը նեղ էջերը թոյլ չեն տար մեզ խօսիլ անոնց ամէնուն վրայ, պիտի փորձենք ծանօթացնել միայն առաջինները (Begonias tubereux) որոնք այս բազմանդամ ընտանիքին ամէնէն փայլուն ներկայացուցիչները ըլլալով. մանաւորապէս Ֆրանսայի, Անգլիոյ Պելճիքայի ու Գերմանիոյ մէջ, մի՛ զարմանաք եթէ ըսեմ, միլիոններով կը մշակուին:

Այս ուռազգի պէկոնեաներուն մէջ կան միապսակ [simple] եւ բազմապսակ [double] ծաղիկներ ունեցողներ, որոնց գոյները տասնի կը հասնին, իսկ ձեւերը՝ շատ աւելի են:

Առաջիններուն մէջ, բացի սովորականներէն՝ կան ալեծածան [ondulé], խաչաձեւ [cristata], թիթեռնաձեւ [papillon], տարբեր գոյներով եզերուած [margi né] ու կէտկիտուած [picta marmorata] թերթերով՝ իրարմէ գեղեցիկ տեսակներ, իսկ բազմաթերթերուն



մէջ, բացի վերջին երկուքէն, կան մանաւանդ մեխակի, խաչխաչի, քամելիայի ու վարդի կոկոնի ձեւ ունեցող ծաղիկներ:

Պէտք չէ բնաւ պէկոնեաները ենթարկել արեւին, անոնք կը նախասիրեն ապրիլ շուքին մէջ, ուր մեծապէս կ'աճին, կ'ուռճանան ու առատօրէն կը ծաղկին: Կան սակայն պէկոնեաներ, որոնք կրնան ապրիլ ու զարգանալ արեւին մէջ, ինչպէս Bertiniները, որոնց գեղեցկագոյններն են Wortiana Versailles եւ Triomphe անուանուած տեսակները: Յիշենք նաեւ Discolor պէկոնեաները, որոնք՝ իրենց վարդագոյն ծաղիկներու ճոխ ու բազմաթիւ ողկոյզներով ու վրան կանանչ ու տակը կարմիր տերեւներով, սրահներու ու սենեակներու մէջ զուարթութիւն մը կը սփռեն: Ասոնք կրնան ապրիլ նաեւ պարտէզներու մէջ, եթէ շուք ու զով տեղ մը յատկացուի իրենց:

Թէեւ ուռազգիներուն մաս չեն կազմեր, սակայն չեմ կրնար չյիշել հոս Rex կոչուած պէկոնեաները, որոնց՝ ծաղիկներէն աւելի, պռազիլեան Քալատիօմներու պէս, նրբին ու գեղեցիկ գոյներու անհուն պէսպիսութիւն մը ունեցող տերեւներն են մանաւանդ թանկագին: Ասոնք կարծես ոչ թէ բոյսեր, այլ գերազանցապէս գեղարուեստական առարկաներ են, եւ կ'ապրին միայն ջերմանոցներու, եւ առատ լոյս ունեցող սրահներու մէջ,

* * *

Պէկոնեաներու մշակութիւնը, զէթ հոս, մեր մէջ շատ ընդհանրացած չըլլալով, անմատչելի, դժուարին կը կարծուի։ Անշուշտ մանիշակներ ու շահոքրամներ մշակելու չափ դիւրին չէ. բայց վախցուածին չափ դժուարին ալ չէ այն։

Ահա թէ ի՛նչ պէտք է ընել գեղեցիկ ու ծաղկալից բոյսեր ունենալու համար։

Քանի որ ջերմանոց մը չունինք, Ապրիլի առաջին կիսուն ընթացքին, երբ այլեւս շատ չի վախցուիր ցուրտերէն, 8 10 սանթիմ. տրամագիծ ունեցող պաղարներու խորքը քանի մը ածուխի կտոր դնելէ վերջ լեցուցէք զանոնք տերեւի եւ մացառի հողի խառնուրդով մը [ձոնսա], լաւ մը ջրեցէք ու պահիկ մը սպասեցէք որ աւելորդ ջուրը դուրս ելլէ. յետոյ իւրաքանչիւր պաղարի մէջ դրէք միայն մէկ ուռ [tubercule], բայց ա՛յնքան միայն խոր որ **ուռին վերնամասը կատարելապէս չի ծածկուի**։ Դրէք ձեր պաղարները պատուհանին մօտ [ներսէն] եւ **ուշադրութեամբ հսկեցէք խոնաւութեան ու շուքին տեւականութեան**։

Բաղդատաբար բազմաթիւ բոյսեր մշակողները կրնան պաղարներուն տեղ գործածել **ոչ խորունկ** տուփ մը, որուն ընդարձակութիւնը համեմատական ըլլալու է ուռերու թիւին։ Այս վերջինները իրարմէ ամէն կողմէ տասնական սանթիմ. հեռաւորութեամբ տնկուած ըլլալու են։



Ուռերը 20 – 25 օրէն կ'սկսին բողբոջիլ. երբ առնուազն 3 տերեւ ունենան, աւելի մեծ քաղարի մը մէջ դրէք. եթէ ձեր բոյսերը սենեակներու մէջ պիտի պահուին, իսկ եթէ պարտէզը պիտի ապրին անոնք, **շուք ու զով տեղ մը յատկացուցէք անոնց**։

Այս վերջին պարագային, մեծ պաղարներու չափ եւ իրարմէ 25 սանթ. հեռաւորութեամբ ծակեր բացէք, լեցուցէք այդ ծակերը տերեւի, մացառի հողով եւ ձեր փոքր բոյսերը — առանց սակայն անոնց կազմը խանգարելու — դրէք իրենց յատկացուած տեղերը. ծածկեցէք ածուին մակերեսը կովու հին աղբով ու ջրեցէք առատօրէն։ Յաջորդական ոռոգումները համեմատական ըլլալու են բոյսին զարգացման. **պէտք է հողը տեւականապէս խոնաւ մնայ**։

Յունիսի կիսուն արդէն իսկ ծաղիկները կ'սկսին երեւիլ եւ կը տեւեն մինչեւ աշնան առաջին ցուրտերը։

* * *

Մեզ ծանօթ ծաղիկներուն մեծամեծ մասը **երկսեռ** են, քանի որ իւրաքանչիւրը իր մէջ կը պարունակէ իր սերունդը տեւականացնող արու եւ էգ գործարանները. մինչ այս պէկոնեաններուն ծաղիկները **միասեռ** են, այսինքն իգան եւ որձան զատ զատ ծաղիկներու մէջ կը գտնուին. եւ սակայն անոնք, երկուքը — սիրակցորդ ամոլ! — քովէ քով կը բուսնին ու կ'ապրին։

Արուն է իսկապէս գեղեցիկը ու ներկայանալին,

այնպէս որ երբ անոր քովիկը ապրող էգը, կոկոն ելած ատենն իսկ՝ կտրուի. ան շատ աւելի կը զարգանայ, եւ ահա, այս ամլացման շնորհիւ է որ մինչեւ 18 սանթ. տրամագիծ ունեցող ծաղիկներ կարելի եղած է ձեռք բերել մանաւանդ միապսակներուն մէջ:

Չէ՞ որ արդէն խիստ խոշոր տահլիաներ, քրիզանթեմներ ու մեխակներ ունենալու համար, անոնց կոկոններուն մէկ մասը կը փրցնեն:

Առաջին ցուրտերուն, եւ մինչ այն արդէն հիւծած բոյսերը կ՚սկսին թօշնիլ. պէտք է զանոնք խլել. հանել հողէն եւ թողուլ 10-15 օր, որու միջոցին ցօղունը ինքնին կը զատուի ուռէն: Ժողվեցէք ուռերը, դրէք մէկ կողմ, քանի մը օր, որպէս զի ջուրը քամուի. յետոյ մաքրեցէք՝ զանոնք պատող հողը եւ արմատի թելերը վերցնելով, առանց սակայն վիրաւորելու ուռերը, զորս պիտի պահէք **սառելու վտանգէն զերծ տեղ մը**, փոքր հեռաւորութեամբ իրարու քով շարելով:

Յառաջիկայ Ապրիլին դարձեալ հողին պիտի յանձնէք զանոնք, եւ այս անգամ, մշակութեան մասին բաւական փորձառութիւն ստացած, լաւագոյն ծաղիկներ պիտի ունենաք:

**ՉԱՐԼԶ ԲԼԱՏԵԱՆ**



# ՀԱԿԻՐՃ ԱՂՕԹՔ ՄԸ

Կան այնպիսի հեղինակներ օծումնալից, որոնց գրչէն ելած մէն մի բառը իբրեւ ոսկի կ՚ընդունինի ժողովուրդն: Չենք սխալիր կարծեմ երբ ըսենք, որ այնպիսիներէն է նաեւ մեր հանրածանօթ Հիւրմիւզեան Եղուարդ Արքեպիսկոպոսն, որուն գրած գոհարիկ տողերը ամէն անգամ կարդալուն այնքան կը զգացուէր խաչասուր Պուէտ Միսաքեան, որ յափըշտակուած կը գոչէր. «Ոսկունքներդ ունեմ, Հա՛յր Եղուարդ...»:

Ահա այս մեղրածորան հեղինակը, որ — բնաւորութեան եւ լեզուի անուշութեան մասին — ճշգրտիւ կը պատկերացնէ իր մէջ մեր Ս. Ն. Շնորհալին ու Ֆրանսացւոց Ֆենելոնը, ասկէ իբր 61 տարի առաջ շարադրած է գրաբար լեզուով հակիրճ աղօթք մը երեկոյեան, ներշնչուած Հին Կտակարանէն եւ Ս. Գ. Նարեկացիէն, ու ինքնագրովն թողուցած իր արենակիցներուն, բաղձալով որ ամէն օր ըսեն զայն անկողին մտնելէն առաջ:

Իր հարազատներն շքեղ շրջանակի մը մէջ առած կախած են զայն իրենց անկողնի սնարէն, ու հաւատարիմ պատուէրի իրենց անուշիկ պապուն, որդւոց որդի մինչեւ ցայսօր կ՚արտասանեն ամէն երեկոյ անկողին մտնելէն առաջ, զուրգուրալով այդ ինքնագիր թղթիկին վրայ՝ իբր անգին գանձի:

Հեղինակիս թոռնիկներուն յօժար հաճութեամբ ընդօրինակելով յիշեալ Աղօթքս, կը դնեմ զայն հոս ստորեւ անոր յանձնարարական յառաջաբանիկով միասին, յուսով որ օգտուին անկէ նաեւ ուրիշ բարեպաշտներ:

Հ. ԵՓՐԵՄ Ծ. Վ. ԱՊՐՈՑԵԱՆ

## ԲՆԱԳԻՐԸ

Հիւմիւզեան Հ. Եդուարդ Տիրակայ Արքեպիսկոպոսը կը բաղձայ որ ամէն օր ընեն, որպէս զի Աստուած արժանի ընէ ամէնքս ալ արքայութեան մէջ յաւիտեան մէկտեղ ըլլալու:

**Յամին 1869 Հոկտ. 3**

**Իջցէ Տէր, հեղցի ի վերայ մեր արիւն քո սուրբ. զհրէական անէծսն յաղօթս յեղեալ մաղթեմք. Արիւն քո ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց: Հեղցի արիւն քո աստուածային ի վերայ մեր եւ ի վերայ բովանդակ ընտանեացս, եւ որպէս արիւնն գառինն դրոշմեալ ի վերայ սեմոց դրանց Իսրայէլացւոց՝ փրկեաց զնոսա յանդրանկածախ սատակմանէն, այսպէս արիւն քո պատուական փրկեսցէ զմեզ յաւիտենից ի մահուանէն, եւ լիցի գրաւ փրկութեան մերոյ:**



## ՀՋՕՐՆԵՐՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ

«ՎԱՆԵՑԻՈՑ ՍԻԱՆԴԱՎԷՊԵՐԻՑ»

Աղուէսն ու գայլը չը գիտեմ ի՞նչ խելքով
Եղբայր լինելու պայմանի մտան.—
Որ միշտ իրար հետ համերաշխ ապրին,
Եւ հանգիստ կերպով ապրուստին հոգան:

Փոքր ինչ ժամանակ անցնելէն յետոյ՝
Աղուէսը կ'զգայ որ գայլ՝ խիստ ագահ է,
Ինչ էլ որ ճարեն, կամ ինչ որ որսան՝
Կ'ուտէ անխղճայ «Եղբօրը» դրկէ:

Խեղճուկ աղուէսը երբեմն կը տրտնջայ,
Երբեմն կը խորհի —հոգ չէ, նա մեծն է...
Բայց վերջը. ճարահատ, եղբայր— գայլին հետ
Առիւծին կ'երթան. ինքը բողոքէ ..

Վեհանձն առիւծը մինչ կը տնտնայ,
Աղուէսի տրտունջ, բողոքն լսելու·
Կը շօշափէ նաեւ իշխան-վագրին կամքն
Որ բարեհաճին միջբան անելու...·

Բայց չարաղէտ վագրն անտիրս դիտումով՝
Կ՚նախանձէ իսկոյն աղուէսի մորթին...
Խօլ հեգնանքով մը կը հանէ կռնակէն,
Աղուեսն կը սարսռայ՛ եղած զրկանքին...:

Վերի առիւծն, թէեւ, տհաճ սառնութեամբ՝
կը դիտէ եղածն... բայց վերջը. անվրդով,
կը պատասխանէ աղուէսին —գայլին,—
«Գործն արդ վերջացա՛ւ, դէ երթաք բարով...:»

ՅԱՐ. ՔՀ. ՍԱՐՀԱՏԵԱՆ

Յօրինեց՝ 1922 Թէհրան

---

# ՄԵՆԱԽՈՐԻ ԽՈՀԵՐԻՑ

Առանց փուշի՝ վարդ չի՛ լինիր,
Առանց հոգսի՝ մարդ չի՛ լինիր.
Բնութեան օրէնքը անխտիր է,
Անբարեխառն կեանք չի՛ լինիր:

Կեանքի հաճոյք՝ ընտանիքն է.
Եւ ճոխ վայելք՝ մաքուր սէրն է.
Սէրը սրտէն պէտք է բղխի.

Բռնի ուժով՛ սէր չի՛ լինիր:
Պատուի ետեւ միշտ վազող մարդ՝
Ջուրին երես կը ցանէ յարդ...



Պատւոյ հիմքը ազնիւ գործն է,
Առանց գործի վարկ չի՛ լինիր:

Խելքն ուղեղի զօրութիւնն է,
Յարատեւ գործը կամքի ուժն է.
Կեանքը կ՚առնի խելօք ջանքով,
Առանց ղեկի նաւ չի լինիր:

Ինչպէս միշտ ջուր՝ նոր տունկերուն,
Այնպէս խնա՛մք խակ փոքրերուն,
Արտը հերկող պիտ մշակէ,
Պարապ յոյսով հունձ չի՛ լինիր:

Մարդ՝ աշխարհում մի ճանբորդ է.
Բախտ՝ կեանքին հետ՝ միշտ էլ խորդ է.
Արցունք, ժպիտ, քոյր-եղբայր են.
Կեանքի ուղին հարթ չի՛ լինիր:

Համբերութիւնը կեանքի հիմքն է,
Եւ բուն օրէնքը խղճի ձայնն է.
Արթուն խղճո՛վ միշտ քուն մտիր.
Տուն քանդողին բոյն չի՛ լինիր:
Կեղծաւոր մարդ՝ կամք, գոյն չունի.

Եւ հպարտ կին՝ հմայք չունի.
Ամէն բանին չափ, սահման կայ.
Ագռաւի ձայնը երգ չի՛ լինիր:

Ամէն մետաղ՝ փայլ չունենար.

Ամէն լեզուն՝ համ չունենար,
Հազարներ կան՝ մէկ չե՛ն արժեր,
Զմռան ծաղկին բոյր չի՛ լինիր:
Մարդ՝ Աստուծոյ վեհ պատկերն է,
Մարդ կոչումով բարձր ու վեհ է...
Արարչին փառք կ'օրհներգող՝
Հոգւոյ աչքը լոյս չի՛ լինիր:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀ. ՍԱՐՀԱՏԵԱՆ**

**1921 Թէհրան**

---

ՀԻՆ ԷՋԵՐ

## ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ

**Անցեալն ի՞նչ է.— Ծուխ մը սառ.**
**Ապագա՞ն.— Մըթին անտառ,**
**Իսկ ներկա՞ն.— Փայլակ մը սուր:**
**Մարդու կեա՞նքն հապա.— Ծոզի,**
**Որ կը ցնդի փանաքի՝**
**Զուր հովերուն անձնատուր:**

**Տժգոյն ստուեր, կորէ՛ք,**
**Ցորձանուտ հիւլէներ հէզ**
**Ձոր տարտղնէ ամէն հով:**
**Այս աշխարհիս վրայ խախուտ՝.**
**Ամէն բան երազ եւ սուտ՝**
**Մահն է միայն ապահով:**

**Թարգմ. ԱԼՓԱՍԼԱՆ**





# ՇԱՔԱՐԱԽՏԱԿՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ԱԶՆ. ՏԻԿԻՆ
Պ. Ս. Գ.

---

*Բժիշկներն ու առողջաբաններն յաճախ կը գրեն անհատական, ընտանեկան ու ընկերային հիւանդութիւններու մասին եւ ընդհասարակ նախապատուութիւն կ'ընծայեն առանձինն՝ հիւծախտի, ալքոլամոլութեան, սակաւածնութեան, մանուկներու մահացութեան, վեներական ախտերու, եւայլն: Սակայն կան դեռ քանի քանի չարաշուք հիւանդութիւններ որոնց մասին խօսիլ, գրել, ամենուն ուշադրութիւնը հրաւիրել եւ միտքերը լուսաբանել խիստ օգտակար պիտի ըլլար:*

*Ասոնցմէ ինչո՞ւ չյիշատակել շաքարախտը:*

*Անուշաբոյր անուն մը դառնակսկիծ պատահարներով դրոշմուած: Հազուադէպ նկատուած, սակայն իրականին մէջ յաճախադէպ ու անտեսուած ախտակրութիւն մը:*

Շաքարախտը ծածուկ ու գաղտնապահ է: Միայն աչալուրջ բժիշկ մը կարող է դիմա-կազերծ ընել սկիզբէն արեան անբնականն ու յաւելուածական շաքարագործութիւն մը:

Ամէն տարիք իր շաքարախտը ունի, ինչ-պէս նաեւ ամէն խառնուածք ու ամէն կազ-մուածք:

Այսպէս երախան, մանուկը, երիտասար-դը, հասունը, վերջապէս ծերունին շաքարախ-տի զոհեր եղած են:

Նմանապէս շաքարախտաւոր կրնան ըլլալ անոյշ նայուածքով, մեղրածորան շրթունքով, քաղցր բնաւորութեամբ անձերը, այնքան որ-քան դաժան նկարագիրով, դառն ու կծու աչ-քերով եւ լեղի արցունքներ թափող անհասա-կանութիւնները, ինչպէս նաեւ գէրերն ու նի-հարակազմները:

Ընդհանրապէս շաքարախտը իր ծննդեան օրերուն դիմակաւոր կը ներկայանայ, համեղի դուրեկանութեամբ մը, սուր եւ ղորձնաշուրքն ա-խորժակով մը զինուած, երբ մարմնոյն ներ-քին միջավայրը արդէն ախտակիր, անկարող է



օգտագործել ու վատնել իր տրամադրութեան տակ գտնուած շաքարային ու ալիւրային տար-րերը:

Երբ այս սկզբնական շրջանին երեւու-թապէս առողջ բայց ներքնապէս խաթարուած հիւանդը թող գտնուի օրինական պատշաճ սնըն-դապահութեան հանդէպ, եւ երբ իր անզուսպ ախորժակին անսալով, հետ ի հետէ շատակերու-թեամբ եւ խառնակերութեամբ ծանրաբեռնէ ներքին օրկանները, մասնաւոր ապագայի մը, ենթական ո՛չ միայն շաքարային կամ եռա-տարրեան (շաքարեղէն, ալիւրային, եւլն.) այլ նաեւ սպիտային (մսեղէն, հաւկիթ, ձուկ, հա-ւեղէն եւլն.) ու ճարպային (կարագ, ձէթ. ճարպ եւլն.) մարմինները անկարող պիտի ըլ-լայ իւրացնել եւ օգտագործել բնականոն պայ-մաններու մէջ:

Այո՛, տագնապալի խառնաշփոթութիւն:

Առողջ արիւնը կը պարունակէ մէկ լիտ-րի մէջ 0,98. առ առաւելն մէկ կրամ տասը սանտիկրամ քանակութեամբ շաքար կամ քաղց-րանիւթ: Երբ այս քանակը բարձրանայ երկու

կրամի, եւ քիչ մըն ալ աւելի, շաքարամիզութիւնը գլուխը կը տնկէ երիկամներէն դէպի դուրս. ըսել է նախ արեան մէջ շաքարախտը հիմ կը դնէ եւ յետոյ, աւելի ետքը շաքարամիզութիւնը ծայր կու տայ, երբ շաքարի ներքին մթերքը իր բնական համեմատութեան կրկնապատիկն եղած է, ստեղծելով այսպէս անկայուն ու անառողջ վիճակ մը:

Մէկ խօսքով մարմնոյն մէջ շաքարի առեւտուրի տագնապ կայ: Երբ մեր ամէնուս բարեկամ տքնաջան հրապարակագիր Տիար Արտաշէս Գալփաքճեան՝ Ֆինանսի, ճարտարագէտի եւ խանութպանի ներկայանալի լեզուն մեզ փոխ տար պահ մը, հետեւեալ կերպով պիտի կրնայինք պատկերացնել շաքարախտաւորի մը կացութիւնը: Այս միջոցին, պիտի ըսէինք, արեան մէջ իրարանցում մը կայ: Գիտէք թէ ի՛նչ է այս իրարանցումին պատճառը: Մթերքը առատ է, մեծաքանակ շաքար կայ, բայց սպառում չկայ, գնորդ չկայ: Սպառումի նուազման հետեւանքով արեան հրապարակը նեղ դրութեան մատնուած է: Հիւսիսէն հարաւ՝



լեարդի, մեանի, աղիքներու, ուղեղի եւ ջղային նահանգներու մէջ տագնապի հով մը կը փչէ: Տագնապ ընենք ու չանցնինք: Շաքարի միլիոններով, միլիառներով հիւլէներ, ահագին սրով մը անշարժութեան մատնուած է: Գործերու կայունութիւն. տնտեսական ընդհանուր տակնուվրայութիւն մը կայ: Ըսել է ելեւմտական հաւասարակշռութիւնը խախտած է: Խնդրանքի եւ մատուցումի տիեզերական օրէնքը կը կաղայ եւ ասկէ կը տուժէ անշուշտ ենթական:

Շաքարի արտադրութեան առաւելութիւնը մեծաքանակ ապրանքի մատուցման դէմ, մըսխումի եւ գնորդի չգոյութիւնը շատ զէշ է, որովհետեւ այս վիճակին անխուսափելի հետեւութիւնը սնանկութիւն ու փճացում է, չըսելու համար մահ կամ մահացութիւն: Ուրեմն այս պարագային պէտք է կարգ մը միջոցներ ձեռք առնել որպէս զի հրապարակը կարելի եղածին չափ քիչ ազդուի այս տագնապէն:

Նախ պէտք է հասցնել արտածման ու ներածման յատուկ ապրանքներ, սնունդներ ու

տարրեր որոնք լաւ, անվնաս տեսակէն եւ ար-ժան հրապարակի վրայ գտնուող նոյնատեսակ ապրանքներէ գերազանց ըլլան:

Ասոնցմէ զատ վաճառման մեծ կազմակերպութիւն մը ստեղծելու է: Արդ, ինչպէս կը տեսնուի այս շաքարի Ֆորդին մէջ անանկ կնճռոտ գործեր եւ բարդ խնդիրներ կան, զոր լուծելու համար հարկ կ'ըլլայ դիմել փորձառու բժիշկ մասնագէտներու եւ էքսբէռներու:

Պիտի հարցնէք անշուշտ, ի՞նչպէս պիտի լուծուի շաքարի այս խնդիրը: Մեր փորձառու բարեկամ Արշամ, այսինքն Տիար Աբիկ Մուպահեաճեան, որ զարկերակային գերճնշումի դէմ կը պայքարի աննկուն ու բծախնդիր ծոմապահութեամբ մը, այսպէս պիտի պատասխանէր այս հարցման. «Անշուշտ ցաւալի է որ մարմինը զրկուած է իր արժանաւոր առողջութենէն եւ շաքարախտը մէջտեղ եկած է. բայց այլեւս պէտք է զբաղիլ այդ կացութիւնը անշքացումէ փրկելու համար, խորհելով կարեւոր միջոցներուն վրայ եւ գործադրելով ինչ որ կը պարտադրէ խոհականութիւնը, աչքի առջեւ ունենալով գործին պայմանները»:

Խնդիրը պարզուեցաւ:

Բայց ի՞նչ է ասոնց ամէնուն պատճառը: Ինչո՞ւ շաքարի սպառումը կանոնաւոր պայմաններու մէջ չի գործեր:

Բացատրենք: Երբ առողջ ենք եւ մեր ներքին օրկանային գործառնութիւնները բնականոն կերպով կ'ընթանան եւ երբ առատ անուշեղէն կամ ալիւրային սննդեղէններ կը ճաշակենք առանց հակակշռի, արեան հազարին մէջ շաքարը առժամաբար ու անցողակի կ'աւելնայ, երկու-երեք ժամ տեւողութեամբ: Այդ ժամանակաշրջանի վերջաւորութեան մարմնոյն մէջ շաքարը օգտագործուելուն եւ կերպարանափոխուելուն բերմամբ, մաս առ մաս աստիճանաբար կը նուազի եւ իր սովորական համեմատութեան կը վերադառնայ.

Հակառակ պարագային, այսինքն երբ գեղձերու թերի պաշտօնավարութեամբ՝ ներքին խանգարումներ ծայր տուած են եւ երբ իւրաքանչիւր օրկան չի կատարեր իրեն ինկած

պարտականութիւնը. շաքարակերութեան յաջորդող յաւելումը ո՛չ թէ անցողակի այլ տեւական հանգամանք մը կ՛ստանայ, արդիւնք խաղրանիւթերու օգտագործումի դանդաղման կամ անբաւարարութեան:

Այս անկանոն ու թերի շաքարափոխումի առաջին շրջանին մարդս արիւնով միայն շաքարախտաւոր է, առանց շաքարամիզութեան: Այս վերջինը, ինչպէս վերեւ յիշեցինք, գոյութեան իրաւունք պիտի ստանայ երբ արեան շաքարեղէններու մթերքը առնուազն հազարին երկուքի բարձրացած է:

Ըսել է շաքարամիզութիւնը շաքարախտը չի յատկանշեր միշտ. Չէ՞ մի որ նաեւ՝ հակադարձաբար բացառիկ պարագաներու մէջ, ջերմի, երիկամներու ցիղերու կարգ մը հիւանդութեանց եւ երբեմն առատ ու անհաշիւ շաքարակերութեանց կրնայ ընկերանալ շաքարամիզութիւն մը, որ ո եւ է կապ ու կապակցութիւն չունի բուն եւ իրական շաքարախտի հետ:

Պէտք է աւելցնել նաեւ թէ, ալիւրա-շաքարային շատակերութիւնը շաքարախտի հետ միշտ ուղիղ չի համեմատիր: Քանի որ որկրամոլ շաքարակեր մը կրնայ զերծ մնալ շաքարախտէ, մինչդեռ չափաւոր կամ սակաւակեր անհատ մը տեղնի տեղօք շաքարախտաւոր կարող է ըլլալ: Անհատական խառնուածքի եւ ենթակայութեան մշտնջենական խնդիր:

Անհատականութեան ու տարողութեան միջեւ նոյն հարցը կը ցցուի շաքարախտաւորներու առջեւ:

Այսպէս օրական հարիւր կրամ շաքարային մարմիններ ճաշակող Այրեան կամ Բնեեան շաքարախտաւոր մը 25 կամ 50 կրամ շաքար կ՛արտաքէ երիկամներէն, մինչդեռ անդին Գիլեան շաքարախտաւոր մը հարիւր կրամով 725 կրամ շաքարարտադրութեամբ կը փայլի օրեր ու շաբաթներ: Որմէ պէտք է եզրակացնել թէ անհաւասարակշիռ օրկանիզմով անհատ մը ո՛չ միայն շաքարային, այլ նաեւ ոչ շաքարային (միս, հաւ, ձուկ, հաւկիթ, ճարպ եւլն.) մարմինները շաքարի վերածելու կենսաբանական տեսակէտով վատ դրութեան մը մէջ կրնայ գտնուիլ երբեմն:

Ուրեմն անոնք անհաս չափ մը, չափանիշ մը, ինքնայատուկ կարողութիւն մը ունին. ի մասնաւորի շաքարը. անուշեղէններն ու ալիւրային տարրերը իւրացնելու, ծախսելու եւ օգտագործելու օրկանային պաշտօնավարութեան մէջ։ Դարմանող բժիշկին անկ է ճշդորոշել այդ տարողութիւնը, քննութեան արդիական մեթոտներու ենթարկելով արիւնն ու միզը եւ ըստ այնմ պատրաստել ու դեղափարել պահեցողութեան ցանկն ու ցուցակը, կարգն ու կանոնը:

Շաքարախտաւորը դժբախտաբար շատակեր է, շատակերութիւնը կը սիրէ. դաւ եւ սուր ախորժակի տէր է, քանի մը որ բժիշկին դէրը յաճախ կը դժուարացնէ: Բայց համբերութեամբ ու համբերատարութեամբ, խրատատւութեամբ եւ փոխադարձ հասկացողութեամբ կարելի է վարժեցնել զինքը սակաւակերութեան: Այս սակաւակերութեան ինչպէս նաեւ չափաւոր ու երկարատեւ ննջապահութեանց շնորհիւ միայն շաքարախտաւորին կենսանիւ-կրնանք փոխադրել դէպի ապահով ու անվտանգ ճանապարհ, ուր թող ընթանայ խաղաղօրէն, առանց վաղաժամ ջախջախման երկիւղի: Լաւ խնամուած շաքարախտաւոր մը շաքարամիզութիւն չունենար: Ով որ շաքարամիզութիւն ունի, ինքզինքը լաւ չի խնամեր, պատշաճ կերուխումի մը չի հետեւիր:



Յանկարծամահութիւնը անխնամ թողուած շաքարախտաւորներուն անխուսափելի վախճանն է:

Անշուշտ պահեցողութեան ու սակաւակերութեան պէտք է ընկերանան թեթեւ մարզանքներ եւ անդորրաւէտ պտոյտներ: Անշարժութիւնը կամ նստողական կենցաղավարութիւնը շաքարախտաւորին թշնամին է: Յաճախակի թեթեւ զբօսաշրջութիւններ յանձնարարելի են:

Ուրեմն երբ շաքարախտաւոր մը կը հիւրասիրէք վարդի անոյշ, Ֆոնտան, օշարակ, շաքարախառն սուրճ, «Հայ Կին»ի յանձնարարած խոհագիրերով պատրաստուած ախորժահամ մայոնէզեան պուտինկներ եւ քէքսեր մի՛ հրամցնէք:

Շաքարախտաւորին կերածին-խմածին «անուշ ըլլա՛յ», «անուշ հրամմեցի՛ր», անուշ շաքար ըլլա՛յ» մի՛ ըսեր:

Ասոնք քաղցրապատ մաղթանքներ չեն, այլ՝ դառն անէծքներ:

ՏՕՔԹ. Ա. Ն. ՄԷՋԳՈՒՐԵԱՆ

## ԿՌՈՒՆԿ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Սկիզբէն ի վեր Հայը եղած է թռչուններու բարեկամ մը: Ունի իր նախասիրած թռչունները: Ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ: Հայաստան բազմազգի թռչուններու բնավայր մըն է: Իր ծաղկալից լեռներ, ջրարբի դաշտերը, բազմաթիւ գետերն ու լիճերը, բազմազան ծառերով անտառները, հովիտներն ու ձորուտները լեցուն են թռչնազգիներու ամենազգի ներկայացուցիչներով:



ԱՐԱԳԻԼ

Հայ ժողովուրդը՝ իր շինականներովն ու քաղքենիներովը, կղերականներով թէ աշխարհականներով, գուսաններով թէ աշուղներով, խօսած թէ երգած է արծիւին, բլբուլին, ծիծեռնակին, արագիլին, կռունկին, տատրակին, լորիկին, ծիտին, բազէին եւ ուրիշ հոյլ մը թռչուններու հետ:



ԿՌՈՒՆԿ.— Այս թռչուններուն մէջէն ո՞վ չի ճանչնար կռունկը՝ թռչունը դարիպ հայուն: Գաղթական թռչունը՝ սիրելին գաղթական հայուն:

Երբ աշնան՝ կռունկի երամներ շարք շարք կ'անցնին դէպ ի տաք երկիրներ, Հայաստանցի գեղջկուհիներ, մազերնին փօփուելով կ'երգեն:

« Կռունկներու անցքին՝ թող երկնայ մազերնիս:» Թէեւ հիմա կարճ մազի նորոյթի շրջանին մէջ կ'ապրինք, նորոյթ մը, որ եւրոպացին՝ շատ առողջապահական կը գտնէ:

Իսկ մեզմէ ո՞վ չ'գիտեր Քուչակին աղերսը:

**Կռունկ ուստի՞ կուգաս ծառայ եմ ձայնիդ,**
**Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.**
**Մի վազեր երամիդ շուտով կը հասնիս,**
**Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:**

**Աշունն է մօտեցել, գնալու ես պէտպիր,**
**Երամ ես ժողվել հազարներ ու բիւր,**
**Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.**
**Կըռունկ մեր աշխարհէն գնա՛, հեռացիր:**

Քառորդ դար մը առաջ էր, երբ մեր սիրելին Կոմիտաս վարդապետ, Աղեքսանդրիոյ Ալհամպրայի թատրոնին մէջ կուտար իր առաջին երգահանդէսը, ար-

մաւենիի պէս սիլուէթ հասակով եւ կռունկի մը նման սեւ շորերու մէջ պարուրուած՝ խորհրդաւոր լռութեան մը մէջ, դաշնակին վրայ կը կանչէր կռունկը. Հայ սգաւոր աշխարհէն մուրալով խապրիկ մը: Սեւ եւ սգաւոր կռունկներ կարծես կը թեւածէին թատրոնին



ԿՌՈՒՆԿ

կամարներուն տակ: Վարդապետը կարծես անոնցմէ մին բռնած կը համբուրէր ուժգին կերպով: Իր տաք արցունքները կը վազէին կռունկին երկայն վարսերէն:

Եւ իր երգչախումբը Կոմիտասեան եղանակով կերգէր, Վարդապետին սիրտին քամուքը:



**Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի գարուն է,**
**Պարիսպներու սիրտը զունդ զունդ արուն է:**
**Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արօտ է.**
**Աշխարհն է արեգակ, սիրտս կարօտ է:**
**Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արեւ է.**
**Աշնան կերպաս երկիր, եարիս բարեւէ:**

Իսկ այսօ՛ր, Հայաշխարհը սովաշխարհ մը դարձած, անմարդաբնակ եւ ամայացած, որջ դարձած բարբարոսներու պաշտելի թռչուններուն՝ բուերուն եւ չղջիկներուն. այլեւս կռունկներն անգամ հանգրուան չեն ունենար Եփրատներու, Մեղրագետներու, Արածանիներու, Տիգրիսներու, Բիւրակներու եզերքները. գետեզերեայ ծաղկալից պուրակներու մէջ հանգստանալու, իրենց մազերը հայկական ջուրերով լուալու եւ սանտրելու համար:

Իսկ Կոմիտաս՛... քաւարանի մէջ կը քաւէ իր չունեցած մեղքերը·:.:

Իսկ մե՛ք, Նեղոսի ափերուն վրայ, յալկան ուռիներու սգաւոր շուքին տակ ընկողմանած, լրաբեր կռունկէն մեր կարմիր հայրենիքի կանանչ խապրիկներ կը սպասենք.-,

**Քիչ մըն ալ կենդանաբանական.** կռունկը՝ բարձրաւորուն ընտանիքէն թռչուն մըն է: Կտուցը եւ

վիզը շատ երկայն են։ Երամովին կը թռչին՝ եռանկիւն մը ձեւացուցած։ Կտուցը սրածայր եւ ուժով է։ Ունի 12 տեսակ։ Ճահիճներէ եւ լիճերէ հաճոյք կը զգան։ Ձմռան կը գաղթեն դէպ ի հարաւ։ Կան բազմազան, դրախտային, մոխրագոյն եւ այլ տեսակի կռունկներ։ Այս վերջինը կ'այցելէ Ֆրանսա։

Ֆրանսերէն լեզուին մէջ կան փոխաբերաբար խօսքեր։ Faire la pied de grue կը նշանակէ միեւնոյն տեղւոյն վրայ երկար ժամանակ ոտքի կենալ։ Avoir un cou de grue կը նշանակէ երկայն վիզ ունենալ։ Ֆրանսերէնի մէջ կռունկ բառը փոխաբերաբար անմիտ եւ ապուշ ալ կը նշանակէ։ Իսկ Անգլիացիք պոռնիկը ռամկօրէն [crane] կ'անուանեն։

ԱՐԱԳԻԼ։ — Իր կապկապներով, շաղակրատութեամբ եւ կռուազանութեամբ որքան փոքր ցեղ, նոյնքան երկրագործներու սիրելին է արագիլը, միեւնոյն ժամանակ վնասակար որդերու, իժերու եւ դաշտի մուկերու հասուցած իր ջարդերով։ Նմանապէս բարձրաւորուն ընտանիքէ, գաղթական եւ երկայնակտուց թռչուն մըն է։ Արագիլը գթութեան եւ երախտագիտութեան խորհրդանշանն է, որովհետեւ իր հայրն ու մայրը ծերութեան տարիքին կը կերակրէ եւ կը խնամէ։ Արագիլը ժամանակին շատ տարածուած էր Եւրոպիոյ մէջ։ Այժմ հազուագիւտ է եւ հալածական քաղաքակրթութենէն։ Առաւօրէն կը գտնուի Ալզասի, Գերմանիոյ եւ Հոլանտայի մէջ, ուր մասնաւոր կանոնադրութիւններ



կը պաշտպանեն զինք։ Հազուագիւտ չէ այս երկիրներու մէջ տեսնել արագիլներ, որոնք, մեր երկիրներու նման, իրենց բոյները կը շինեն ծխնելոյզներու եւ տանիքներու վրայ՝ մացառներով, սէզերով եւ խոտերով։ Արագիլը ունի հինգ տեսակ, որոնցմէ երկուքը միայն կը բնակին Եւրոպայի մէջ։ Ճերմակ արագիլը, որ խոշոր թռչուն մըն է 1,15 մեթր երկայն եւ 2,30 մեթր տարածութիւն ունի մէկ թեւին ծայրէն միւս թեւին ծայրը։ Իր թեւերուն ծայրերը սեւ են։ Կտուցն ու ոտքերը կասկարմիր են։ Կռուազան թռչուն մըն է։ Սեւ արագիլը՝ ճերմակ արագիլէն աւելի փոքր է եւ մենիկ վայրերու մէջ կ'ապրի առանձին եւ վայրի։ Արաբները արագիլը **լաքլաք** կը կոչեն։

Ֆրանսերէն լեզուին մէջ արագիլի համար ալ կան փոխաբերաբար խօսքեր։ Ֆրանսերէն արագիլ բառը կը նշանակէ երկայնահասակ եւ նիհար կին։ Contes de la կամ à la cigogne կը նշանակէ առասպելներ։ Cou de cigogne երկայն եւ նիհար վիզ ունեցողին կ'ըսուի։

Արագիլը, ինչպէս ըսինք, բարեկամն է երկրագործին։ Գարնանացանի հերկերուն ժամանակ, արօրին բացած ակօսին մէջէն քալելով կը հետեւի երկրագործին եւ որդերն ու ճճիները կը մաքրէ համբերատար ոգիով մը, ինչպէս Եգիպտոսի մէջ ալ նոյն պաշտօնը կը կատարէ ֆէլլահին սիրական թռչունը՝ **Աբու Կէրտանը։**

Մենք դպրոցական տղաքներս՝ ամառ առտու մը կանուխ մեր գեղէն դէպ ի անտառը կ'ուղղուէինք մեր սիրական այծերուն համար թեղօշի ճիւղեր եւ ծիլեր հաւաքելու համար: Մեր ճամբուն վրայ փռուած գտանք երկայն օձ մը՝ գինովցած վիճակի մէջ: Արեւին տաք ճառագայթներուն տակ օձին անշարժացած կենալը զարմանք պատճառեց մեզի: Մէյ մըն ալ ի՞նչ տեսնենք: Բարտիի մը գագաթը դարանակալ սպասող արագիլ պապան շանթի մը սլացքով յարձակելով օձին վրան կը կտցահարէ գլուխը եւ նորէն անմիջապէս կը թռչի ծառին գագաթը: Այսպէս բազմաթիւ կտցահարումներէ ետքը, երբ այլ եւս վստահ էր թէ անշնչացած էր օձը, շալկելով զայն թռաւ դէպի իր բոյնը: Հայերը այս մասին ունին նաեւ առած մը. «Օձին փուշը լաքլաքը «արագիլ» կը մարսի»:

Տեսա՞ծ էք արագիլը իր բոյնին մէջ մէկ ոտքին վրայ կայնած: Կարծես հայու մը տառապանքը շալկած ըլլար իր ուսերուն վրայ: Այդ զուարթ թռչունը՝ կտուցը կախ տխուր վիճակ մը կը պարզէ:

Որքա՜ն հիանալի է նաեւ իր երկնասլաց թռիչքը ուր այդ հսկայ թռչունը ճնճղուկի մը չափ փոքրնալով, կը մխրճի ամպերու ծոցը եւ կը կորսուի եթերին կապոյտին մէջ: Մանաւանդ իր դարձդարձիկ վայրէջքը շատ բանաստեղծական է:

Իսկ դրացիներու միջեւ մղուած, մէկըմէկու բոյները իրարմէ խլելու նպատակով կատարուած եւ հիմը



իգային շարժառիթ կազմող կռիւները իսկապէս հետաքրքրական են, Պարանոց պարանոցի կը փաթտուին եւ տանիքներու կատարներէն գլտոր մլտոր վար կ'իյնան: Հեւասպառ եւ լորձնակտուց, անխնայ կը կտցահարեն զիրար:

Արագիլը կարգ ու կանոնը սիրող թռչուն մըն է: Գարնան, Մարտի սկիզբները, երբ նա դառնայ մեր երկիրները, կը սկսի անմիջապէս իր բոյնը կարգի դնել: Իրեն հետ միասին ճնճղուկներն ալ կը ծուարին իր բոյնին շուրջը եւ անոնք ալ կը շարեն բոյներնին: Ապրիլը բոլորին համար տռփանքի ամիսն է: Մայիսին արդէն արագիլ թէ ճնճղուկ ունեցած են իրենց արագիլիկներն ու ճնճղիկները եւ բոյները կ'եռին ու կ'եփին խժալուր ճռուողիւններով.

Վերջացնելէ առաջ, գրչիս տակ կուգայ Վարուժանի «Պատգամաւորները» զգայուն քերթուածը, որով, 1910ին Կովկասի Մետէխի բանտին մէջ բանտարկուած Աւետիս Ահարոնեանին, ծիծեռնակներու, կռունկներու, արագիլներու եւ բազէներու միջոցաւ կը ղրկէր իր համբոյրները, արցունքները, զգացումները եւ դափնիները.

**Ա՛խ, գնա՛, արագի՛լ, կարօտը կտուցիդ,**
**Հոն կապանքի տակ Հայրենիքն ունի հանճար**
**մ'ողջակէզ:**

**Ա՛խ, գնա՛, արագ՛իլ, սիրտըս կըտուցիդ:**

Քանի որ Ահարոնեանը յիշուեցաւ եւ որուն յո-

բելեանը [*] անցեալ տարի մեծաշուք տօնուեցաւ ամէն կողմ եւ որ մեր Հայ Գիւղատնտեսականն ալ այդ առթիւ իր համալսարանական ուսանողներէն 3 հատը անուանեց «Ահարոնեան Սաներ», հոս կ՚արտագրեմ յոբելեար գրագէտին «Արագիլները» վերնագրով իր մէկ գեղեցիկ գրուածքին հետեւեալ տողերը, հրատարակուած Ամերիկայի **Հայրենիք** ամսագրի 1927ի Սեպտեմբերի թիւին մէջ:

«Ամէն առաւօտ յուսաբացի զանգի հետ, երբ շողերը բաց են եւ գունազեղ շամանդաղը կը շողայ արագիլների կտուցների չրխչրխոցը հնչում էր մթնոլորտում ու հանդարտ փռւում էր գիւղի կտուրների վրայ, որպէս օրհներգ մի խաւար Աստծու, որ կեանքի դիւթական թելերն ունի իր ձեռքին, ինչպէս ծերուկ ժամհարը եկեղեցու զանգի թելերը:»

ՍԵՊՈՒՀ ՍՏԵՓԱՆԵԱՆ

---

[*] ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ քառասնամեայ գրական գործունէութեան հանդէսը Հայ գրականութեան փառաւորումն էր, ինչ որ բոլոր գրասէրներու սրտին շատ մօտիկ եղաւ եւ ամէն կողմ վայելուչ հանդէսներով տօնուեցաւ եւ յարգելի գրագէտը այս առթիւ պատգամ արձակեց այսպէս. «Մշակեցէք բազմաթիւ լեզուներ, բայց սիրեցէք մանաւանդ հայ լեզուն»:



ՍԵՊՈՒՀ ՍՏԵՓԱՆԵԱՆ ծնած Պիղաջի [Տարտանէլ] մէջ: Գիւղատնտես: Մեծ հայրը տիտան մշակ մը:



ՍԵՊՈՒՀ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Հայրը՝ թռչուններու բարեկամ: Մայրը՝ վարպետ ջերմաբոյծ եւ մետաքսահիւս: Եղբայրները՝ հողագէտ եւ հնտաբոյծ: Աւելի քան 50 որբ եւ աղքատ ուսանողներ զետեղած է համալսարաններու մէջ. իբր գիւղատնտես, կաթնատնտես, անասնաբոյժ ոռոգումի ճարտարապետ, ելեքտրագէտ, մեքենագէտ, հանքաբան, քիմիագէտ, բուսային ախտաբան, եւն. եւն. առանց ազգային սնտուկին վրայ բեռ ըլլալու: Իր այս առաջին առաքելութիւնը յաջողապէս աւարտելէ ետքը, այժմ նուիրուած է երկրորդ առաքելութեան մը: Այն է հիմնել «Խրիմեան Գիւղատնտեսական Մատենաշար» մը հրատարակելով, իր սաներուն աջակցութեամբը, ամերիկեան դրութեամբ գործնական եւ պատկերազարդ գրքոյկներ, իւրաքանչիւր մշակութեան վրայ առանձինն եւ զանոնք ձրիաբար ցրուել Հայաստանի, Սու-

րիոյ եւ Մուսույի հայ գիւղերուն մէջ: Ամերիկացիք կ'ըսեն թէ՝ Աստուած գիւղը ստեղծեց, իսկ մարդիկ՝ քաղաքը: Ո եւ է հայրենիքի մը, մանաւանդ Հայ Հայրենիքին հիմն է աստուածակերտ գիւղը: Հայաստան գիւղացիներու հանրապետութիւն մըն է: Հայ Հանրապետութեան անսասան պահպանումն իր գիւղերուն եւ գիւղացիներուն, կրթական, տնտեսական եւ ընկերային մարզերուն մէջ, ներդաշնակօրէն զարգացումէն կախում ունի: Ֆրանսացի ընկերաբան մը կ'ըսէ. «Շէնցուցէ՛ք գիւղերը, քանդեցէ՛ք քաղաքները:» Ահա իր բոլոր ճիգերն ու ջանքերը կը ձգտին հայրենասիրական այս բարձր նպատակին: Կ'ուզէ գիտութեան արդիական լոյսով լուսաւորել այդ քաջ, մաքրասիրտ եւ աստուածահաճոյ հայ գիւղացիները:

Գ. Սեպուհ Ստեփանեան իր հանրօգուտ գործունէութեամբ գնահատուած է միշտ: Ան մեր համայնքին արժէքաւոր անդամն է եւ իբր այն՝ սիրելի հանրութեան: Թէեւ Եգիպտոս ապաստանած՝ բայց հեռու չէ մենէ իր բազմապիսի օգտակարութիւններով:



# ՈՂՋԱՊԱՀԻԿ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

*Հիւանդութիւնը կռուի արտայայտութիւնն է, որ կը կատարուի մարմնի մէջ վնասակար պայմանների դէմ մարմնոյ փրկութեան համար:*

*Հիւանդութեան ժամանակ մեծ նշանակութիւն ունին մարմնի բնական ոյժերը, մինչդեռ առողջակազմ մարդը յաճախ դիմանում է նոյնիսկ ծանր հիւանդութիւններին, թոյլ, վատառողջ մարդիկ հեշտութեամբ զոհ են գնում մինչեւ անգամ թեթեւ հիւանդութիւններու:*

*Թէ առողջապահութեան եւ թէ բժշկութեան նպատակն է օգնել մարմնին իր կռուի մէջ վնասակար պայմանների դէմ:*

բժ. Լ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

*Զգուշացէք փոշիներէն, անոնց մէջ միքրոպներու սաղմեր կան. զգուշացէք ձեռքերու սեղմումներէ, քանի որ չէք գիտեր ձեր սեղմած ձեռքին մաքրութեան աստիճանը: Այդ բա-*

ռեկլամական սիրոյ զեղումները կը ծածկեն իրենց մէջ փոխանցիկ հիւանդութիւններու չարիքներ: Երբ տուն մտնէք,– նախ մաքրուեցէք, յետոյ ձեր կնոջ եւ ձեր զաւակներուն ողջագուրումները ընդունեցէք: Նոյնպէս երբ եկեղեցի մտնէք, ջերմեռանդութեամբ մի՛ համբուրէք եկեղեցւոյ դուռը, սուրբերու պատկերները կամ ըզգալով մի՛ խմէք օրհնած ջուրը: Պաշտեցէք անոնց սրբութիւնները, բայց ոչ շրթունքներով:

բժ. ԼԵՒՈՆԵԱՆ

Բժիշկներ, սորվեցուցէք ձեր հիւանդներուն, որ քաջ ըլլան, ապրիլը յաղթել է: Յուսահատներուն համար այս կեանքին մէջ տեղ չկայ...: Վա՛յ հոգեւոր եւ մարմնաւոր տկարներուն, վա՛յ երկչոտներուն, վա՛յ յոռետեսներուն, վա՛յ թերահաւատներուն, վատերուն հատերուն համար այս աշխարհիս մէջ տեղ չկայ:

Յառա՛ջ, ապրիլը յաղթել է:

ՏՕՔԹ. Ռ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(Սեւակ)



# ԱՄԻՐՏՈՎԼԱԹԻ ԳՈՐԾԸ

Ամիրտովլաթի՝ Ամասիացի հայ բժշկապետին մասին որքան շատ գրուի, այնքան քիչ է, զի Ամիրտովլաթ եղած է մեր բժշկական գրականութեան մէջ եզական դէմք մը, որ գիտցած է օգտուիլ իր ժամանակին (ԺԵ.րդ դար) ծանօթ նշանաւոր բժիշկներու գործերէն, աւելցնելով անոնց վրայ իր անձնական բազմամեայ փորձառութեան արդիւնքը:

Ամիրտովլաթի գիտութեան աստիճանն հասած է իր գագաթնակէտին, երբ նկատի ունինք թէ նա՝ մեզի ժամանակակից Վորոնոֆէն հինգ դար յառաջ գիտէր գոյութիւնը հիւթաբուժական զօրութեան (opothèrapie) եւ կը հաւատար կենդանեաց ինչ ինչ գեղձերուն՝ մարդկային մարմնոյն համանման մասերուն վրայ կատարած բարերար ազդեցութեան, զոր հաստատած էր զանազան գործերով:

Ամիրտովլաթի Անգիտաց Անպէտ անունով ծանօթ երկասիրութեան մէջ օրինակներ շատ կան այս մասին: Նա կ՚ըսէ.

Թիւ 3345. Արիւնի վրայ խօսելով կ'ըսէ թէ. «Ոչխարին արունն աղէկ արուն բըժ-նողին»:

Ամիրտովլաթ գիտէ նաեւ արեւաբուժու-թիւնը. օրինակ՝

Թիւ 1120. «Խաթմին (guimauve) տուղտ կիւլ խարբէմ թէ սպիտակին (vitilligo) ներ-մակ ֆոս մարմնոյ, ածես՝ որ յարեն նստի, աղէկ»

Թիւ 2586 Թուրունճն (cédrat) կիտրոն ա-ղան զավունն է. «այրեն եւ զմոխիրն արեւն տէ ածին, աղէկ պաղարին (impétigo):»

Թիւ 2726. Վայրի ածին ապտուրն օգտէ արծուոյ (hydropisie) ջրգողութեան սըսգա, «յորժամ ածեն եւ յարեն նստին:»

Իսկ կիրի մասին երբ կը խօսի (թիւ 2415), կ'ըսէ թէ «չոր կիրն որ տեղայ որ արուն երթայ. յորժամ ի վերայ դնես կտրէ»: Ճիշդ ինչպէս արդի բժիշկներն այսօր կիրի մէկ բաղադրութիւնը [chlorure de calcium] կը գործածեն վէրքերու արիւնահոսութեան դէմ:

Եւ այսպէս շատ տեսակ համաձայնու-թիւններ նոր բժշկութեան հետ:

Պարիս Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ



## ԿԱՐԵՒՈՐ ԳԻՐՔ ՄԸ

**Ամիրտովլաթի Ամասիացւոյ ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ** կամ բառարան բժշկական նիւթոց, ի լոյս էած հանդերձ ծանօթութեամբ **Կ. Յ. Բասմաջեան**, փոխ ատենապետ Պարիսի Հայ Բժշկական Միութեան, Վիէննա, Մխիթարեան տպարան, 1927 մեծ 8º էջ XIIV + ՀԱ + 766 եւ Զ Տխտ:

Գինն է 150 ֆրանք:

---

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԳԱՐՈՒՆԻՆ, 77 օր 7 մախաղ կարմիր չամիչ կուտը հանէ, կեր, լաւ է, միտքը կը բացուի, պաղղամը դուրս կը հանէ:

ԱՄԱՌԻՆ, 77 օր շատ կանուխ նօթի կա-նաչ սոխը ծեծէ, քացախ խառնէ կեր:

ԱՇՈՒՆԻՆ, 7 կում կոճապղպեղ (զէնճէ-ֆիլ) կեր ամէն ցաւոց դեղ է (առտուն կա-նուխ):

ՁՄԵՌԻՆ. եղածիդ պէս անկողինէն 3 պատառ հալած մեղր կեր:

(300 տարուան ձեռագիր բժշկարանէ մը քաղուած:)

## ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

*Ոտքի կոշտերու պարզ դեղ մը.—*

*Կոշտի ամէն տեսակին համար հետեւեալ պարզ դեղը կը յանձնարարուի: Պէտք է մաքուր դեղին մեղրամոմը կտոր մը թղթի վրայ քսել եւ թուղթն կոշտին մեծութեամբ կտրել եւ կոշտին վրայ դնել: Քանի մը օրէն կոշտը կ'անհետանայ:*

* * *

**Շատ անգամ մետաքսեղէն դիպակները քիչ մը խոնաւ տեղ որ կենան՝ կը բորբոսին ու բիծ բիծ կ'ըլլան, եւ զանոնք մաքրելու կերպը չգիտցողները ներկել տալ կը հարկադրուին:**

**Արդ այնպիսի ատեն պէտք է երկու հազար կրամ ջրոյն մէջ խառնել հարիւր կրամ անուշադր (նիշատըր) եւ այն բաղադրութեան մէջ թաթխել արատաւորուած մետաքսեղէնը, յետոյ հանել, պարզ ջրով ցօղել, չորցնել ու արդուկել:**



## ՖՐԻՏՈՖ ՆԱՆՍԷՆ

Ժամանակակից պատմութեան էջերը փառքով կը հռչակեն այս նշանաւոր բեւեռախոյզին գիտական արարքներն, որ բեւեռի աշխարհակալութեան ձեռնարկեց իր քաջութեան միացնելով յանդըգնութիւն: Տարերային արգելքներու յաղթահարեց, հոն ուր իր նաւը սառոյցներու հատորներով շղթայուեցաւ, ինք ըստեղծեց ամէն միջոցներ՝ նպատակին հասնելու եւ ահա նոյն իսկ բալխիրով արշաւներ կատարեց սառնապատ ընդարձակ ամայութիւններ կտրելով անցնելով: 1893ին ձեռնարկեց այս ճամբորդութեան՝



ՖՐԻՏՈՖ ՆԱՆՍԷՆ

որ 3 տարի տեւեց ո՛չ երբեք ընկճուած ցուրտէն եւ քաղցէն եւ ցոյց տուաւ իր անձը նոր առաքեալ գիտութեան եւ անով հռչակուեցաւ անունը ամբողջ աշխարհի մէջ, որովհետեւ յաջողեցաւ բեւեռի այնպիսի տարածութիւններու հասնիլ, ուր ոչ մէկը գացած էր:

Իրաւամբ եւրոպական ընթերցարաններ մարզելու համար նոր սերունդը, անոր սխրագործութիւններէն զմայլելի դրուագներ կ'աւանդեն եւ կ'ուրուագծեն անոր եզական դէմքը՝ ներշնչելով բարձր նպատակներու ձգտումներ ամէնուն:

Ծնած է 1861 Հոկտ. 10 Քրիստիանիա (այժմ Օսլոյ) ուր 27 տարեկանին՝ տեղւոյն համալսարանին դասախօս կարգուեցաւ: Նա եղած է նաեւ քաղաքական դէմք, Նորվեկիոյ դեսպան՝ Լոնտոնի եւ Ուաշինկթընի. հանդիսացաւ խաղաղութեան նպաստող հզօր ազդակ, ազգերու լիկայի կողմէ նշանակուեցաւ 1920ին ղեկավար Ռուսիոյ Գերմանիոյ փոխադրութեան գործին:

1921ին մեծապէս նպաստեց սովահար ռուս ժողովուրդին՝ Միացեալ Նահանգներէ հասցնելով մեծ օգնութիւններ: Առանց անոր՝ միլիոնաւոր մարդիկ պիտի մեռնէին:

Երկար տարիներէ ի վեր իր հայրենիքը կը ներկայացնէր Ազգերու Դաշնակցութեան ժողովներուն մէջ: Նանսէն միջազգային նշանաւոր դէմք մը եղաւ:

Նորա՝ մարդկորթեան մասուցած շատ մը ծառայութիւններու շարքին յիշենք ինքնութեան այն անցա-



գիրները, որոնք տրուած են անոր անունով հպատակութենէ զրկուած հայ եւ ռուս տարագիրներուն:

Նանսէն եթէ դիւցազն մ'է իբրեւ գիտնական կամ բեւեռախոյզ, աւելի իրաւամբ դիւցազն մ'է մանաւանդ իբրեւ մարդասէր:

Հայ գաղթականութիւնը երախտապարտ է անոր, որ տարիներէ ի վեր աշխատեցաւ, իրեն համար. կը բաւէ յիշել իր կատարած երկարատեւ ուղեւորութիւնները 1925ին ի նպաստ հայ գաղթականներու տեղաւորման: Գնաց Մոսկուա, անցաւ Երեւան ու քննեց, որպէս զի կարելի ըլլայ Սարտարապատը ոռոգել եւ 15.000 հայ տեղաւորել: Դժբախտաբար իր ջանքերը յաջողութեամբ չպսակուեցան ընդհանուր չկամութեան հետեւանքով:

Իր ուղեւորական քննութեանց իբր արդիւնք հրատարակեց «Հայաստան եւ Մերձաւոր Արեւելքը», որ թարգմանուեցաւ «Նոր Լուր»ի իբր թերթօն Պ. Զարեհ Նեմցէի ձեռամբ:

Մեռաւ 1930 Մայիս 13ին, 69 տարեկան, սրտի պայթումէ: «Ոչ մէկ պետական մարդ, ոչ մէկ գործիչ ներկայ ժամանակներու մէջ կրնայ չափուիլ Նանսէնի հետ, ինչպէս նաեւ շատ քիչ գրիչներ եւ գիտնականներ: Ան անմիջապէս Էտիսընէն ետքը կուգայ՝ Ռահվիրայ, բնախոյզ, գեղարուեստագէտ եւ մանաւանդ կարող եւ անաչառ ՄԱՐԴԱՍԷՐ, մէկը որ շաղակրատութիւնը կ'արհամարհէր»:

Իր մահուան առթիւ ամէն կողմ հնչած արձագանգն է թէ մեր ժամանակի ամենալաւ մարդոցմէ մէկը մեռաւ:

# ԱՆԱՆԱՍ

Անանասը մշակուած խոտային բոյս մըն է շատ յարգի, ծննդավայր ունենալով արեւադարձային Ամերիկան: Ունի երկայն խստաբարոյ տերեւներ՝ շատ անգամ ծայրերնին փշային, առանց



ԱՆԱՆԱՍ

արմատ կը ձգեն, որոնց երկայնութիւնը մէկ ոտքէն մինչեւ երկու ոտք կ'ըլլայ, լայնութիւնը երկու երեք բթաչափ: Այս տերեւներուն ծայրը սուր է, երկու կողմը փըշոտ, մէջտեղը դէպի վեր կ'երկարի ցօղուն մը երկու ոտնաչափ բարձր, մէկ բթաչափ հաստ: Այս ցօղունը առաջ կապոյտ ծաղիկներ կուտայ հասկի ձեւով, այն հասկը կը չորնայ ու տեղը պտուղը կ'ելնէ, որ երթալով այն ծաղիկներուն տակէն կը մեծնայ տերեւներու խուրձով մը թագազարդ. իր մի քանի տեսակները իբր զարդածաղիկ կը մշակեն ջերմանոցներու մէջ, բայց ընդհանրապէս իր պտուղին համար է որ կը մշակուի: Ուտելի անանասին ծննդավայրը Անթիլեան կղզիները ըլլալով, հոնկէ Լուի ԺԵ.ի ժամանակ Եւրոպա ներմուծուած



եւ առաջին անգամ Ֆրանսայի մէջ մշակուած է: Բոյսը անվրէպ ջերմանոցի մէջ զետեղուելու, թաղարի կամ ջերմոցի հողին մէջ եւ նուազագոյն երկու տարի սպասելու է պտուղ տանելու համար:

Իր բազմացումը կը կատարուի հունտով. շամիլներով, բոյսին արմատին շուրջ ծլող աչքերով կամ պտուղը կրող բունին ծայրի մասերով: Եւրոպայի մէջ իր մշակութիւնը անտեսուած է, քանի որ արագընթաց շոգենաւեր իր թարմ եւ պահծու պտուղները Քանարեան կղզիներէն, Սենեկալէն, Անթիլեան կղզիներէն, Ազորեան կղզիներէն եւ Արեւմտեան Հնդկական կղզիներէն կը բերեն եւ աժանագին կը ծախուին անոնք:

Անանասը կը ծաղկի բոյսին կեդրոնէն, երբ բոյսը 12էն 20 ամսու ըլլայ, կարմրորակ կապոյտ ծաղիկներ ունի, իր ծաղկումի գլխաւոր ամիսներն են Յունուար եւ Փետրուար, բայց պատահաբար կը ծաղկի նաեւ Նոյեմբերի եւ Դեկտեմբերի մէջ ալ: Ծաղկումէն ետքը, իր պտուղը հասուննալու համար չորս ամիսի պէտք ունի: Նոյն կոթունը երկրորդ անգամ պտուղ չի տար. այլ արմատէն բուսած նոր կոթունի մը վրայ պտուղ կուտայ, մոլի է տաքին եւ կը խրտչի խոնաւութենէ:

Միացեալ Նահանգներու անանասի պէտքը գլխաւորաբար կը հոգացուի Հավայի կղզիներէն, Փորթօ-Ռիքոյէն, Քուպայէն, Պահամեան կղզիներէ, Ճամայիքայէ, Սան Սալվատորէն եւ Երրորդութիւն կղզիներէն: 1850ին Ֆլորիտայի նահանգին (Միացեալ Նահանգներ) մէջ

միայն յաջողապէս մշակած են: Ֆլօրիտան միակ նահանգն է Ամերիկայի, ուր անանաս կը մշակուի:

Փիլիպպեան կղզիներու մէջ իր տերեւներէն տեսակ մը չուան կը շինեն:

Անանասը զերազանցապէս մարսողական յատկութիւններ ունի եւ յարմար է բէբբօնի փոխարկելու ազօթային սննդական նիւթերը [միս, հաւկիթ եւ պանիր]:

Անանասի հիւթ քամեցէք կտոր մը պիֆթէքի վրայ, պիտի տեսնէք որ քիչ ժամանակուան մէջ պիֆթէքը տեսակ մը ժելաթինի պիտի փոխուի, զոր բնականաբար շատ դիւրին կ'ըլլայ մարսել:

Անանասը՝ տնկելէն երեք շաբաթ ետքը սկսելու է ջուր տալ, ու քանի որ արմատները կ'երկննան, ջուրն ու ջերմութիւնն ալ աւելցնելու է: Պարզ ջուրը բարակ անձրեւի պէս պէտք է բոյսին վրայ սրսկել: Երբ պտուղը հասուննայ, ջրելը դադրեցնելու է, որպէս զի շատ ջրոտ չըլլայ ու անուշանոտութիւնը չերթայ:

---

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ.— Մեղուի, Իշամեղուի, Բզէզի, Պիծակի խածուածքին դէմ ամենադիւրին եւ շատ զօրաւոր դեղ է քափուր (քաֆիրի) ու սպիտակադեղի (իւսթիտպէճ) բաղադրութիւնը, որպէսզի քափուրը չցնդի, պէտք է որ այս բաղադրութիւնը գոց տուփի մէջ պահուի:



ՊԱՏԱՌԻԿ. — **Մի՛ խմեր.** — Կեսարիայէն 2 ու կէս ժամու ճամբայ հեռու, հարաւային արեւմտեան կողմը կը գտնուի **Եըլանլը** լեռը՝ որ այսպէս կոչուած է շատ օձ գտնուելուն համար: Այս լերան դիրքը բաւական գեղեցիկ է, մանաւանդ կուշտին վրայ գտնուող բազմաթիւ ամառանոց այգիներով: Ետեւի կողմը լերկ ու խոպան է եւ դեռ շատ վնասակար օձեր կը գտնուին: Գագաթը կան երկու խոշոր քարեր իրարու կից: Աւանդաբար կը պատմուի թէ շատ հին ժամանակներ այր ու կին այս լեռը կ'ելնեն. հոն կը խմեն կը գինովնան եւ վերջին բաժակը կը քամեն՝ ըսելով. «Կը քամեմ այս բաժակը Աստուծոյ կենացը», կամ ըստ այլոց, բաժակը երկայն գաւազանի մը վրայ դնելով՝ դէպի երկինք կ'երկնցնեն՝ իբր թէ Աստուծոյ հրամցունելու համար: Եւ այս խօսքին վրայ Աստուած զանոնք կը փոխարկէ զոյգ մը քարի, որոնք այս լերան գագաթը անշարժ կը կենան եւ դիտողներուն ուշը կը գրաւեն: Մայրերն՝ այս իրարու կից ու մարդաձեւ քարերը ցուցնելով իրենց որդւոց, իբրեւ պատուէր կ'ըսեն. «Ահա այս է գինիին ու օղիին արդիւնքը, ու զայն գործածողին վախճանը. քեզ օրինակ ըլլայ, երբեք մի՛ խմեր»:

**[Բնաշխարհիկ բառարան]**

---

# ԿԵՆԴԱՆԱԿԱՄԱՐ ԿԱՄ ԶՈԴԻԱԿՈՍ
# ՈՒ ԱՆՈՐ ՆՇԱՆՆԵՐԸ

---

## ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԲԱՆԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ
## ԱՅԴ ՆՇԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

---

Օրացոյցի գործածողներու համար կարեւոր է անշուշտ գիտնալ Զոդիակոսի նշաններու մասին հին ըմբռնումներ, հոգ չէ թէ անոնք առասպելական կամ դիցաբանական զրոյցներու սահմանին մէջ ըլլան:

Ուստի հարկ համարեցանք հետաքրքիր ընթերցողին ամփոփել զուարճալի գիտելիքներ անոնց նկատմամբ, քաղելով զանազան վստահելի աղբիւրներէ:

**Կենդանակամար** կամ **Զոդիակոս** (բառ յունարէն) իտէական լայն գօտի մըն է երկնային: Աստեղահմաններու եւ աստեղագէտներու տեսութեամբ թէ արեւը եւ թէ երկիրը երկնքին մէջ միշտ 18 աստիճան լայն միջոցի մը մէջ կը պտտին, որ կ՚ըսուի նաեւ ծիր խաւարման․ որ բաժնուած է ամբողջ իր երկայնութեամբ երկու հաւասար կէտերու: Այս գօտին կը բաղկանայ տասներկու մասերէ, որոնք կենդանիներ կը ներկայացնեն: Ամէն մէկ մաս 30 աստիճանի կը բաժնուի, այդ մասերը իբր թէ ամսական ճամբաներ են, ուր երկիրս երկնքին մէջ կ՚ընէ: 12 անգամ 30ը կ՚ընէ 360 եւ այս է աշխարհագիրներու ըսած 360 աստիճանները, որով երկրի բոլորտիքը կը բաժնեն եւ արեւը կամ երկրի օրը գրեթէ մէկ աստիճան քալելով կ՚ըլլայ տարին 365 օր 5 ժամ 49 վայրկեան:

Արդ այս 12 մասերը կը կոչուին խորանք արեւու կամ աստեղատուն: Եւ իրաւցնէ աստղեր կամ համաստեղութիւններ կան այն տեղերը, որ բոլոր մէկէն 1144 աստղ է եւ անա այդ աստղերուն ցանին մէջ մէյ մէկ կենդանւոյ անուն տրուելուն պատճառը մէկ մը ան է որ այն համաստեղութիւնները քանի մը աստղէ ձեւացած առաջին ակնարկով կենդանիի մը նմանութիւն ցոյց կուտան, ինչպէս երբեմն, ամպերուն մէջ ալ ասանկ նմանութիւններ կը տեսնուին: Յետոյ մեր նախնիք աստղաբաշխ եւ հովիւ ու երկրագործ ըլլալով, ինչպէս որ երկնքի աստղերը իրենց տոմարի տեղ կը գործածէին, այսպէս ալ իրենց հովուական պարանքը երկնքին երեսը կը կարծէին տեսնել: Այս անուանումներն են ծնունդ նաեւ զանազան առասպելներու կամ դրուած են երեւելի բաներու յիշատակի համար:

Այս կենդանակամարը եւ իր բաժանումները ամէն հին ազգաց մէջ կան, զոր օր. Չինացւոց. Հնդ-

կաց, Բաղդէացւոց, մանաւանդ Եգիպտացւոց մէջ:
Կենդանակերպերուն անուններն են.

Խոյ, ցուլ, երկաւոր, խեցգետին, առիւծ, կոյս, կշիռ, կարիճ, աղեղնաւոր, այծեղջիւր, ջրհոս, ձուկն: Եգիպտացիք այս անունները հնարեր են կամ ուրիշներուն հնարածը իւրացուցեր են: Այս կենդանակերպերը օրացոյցներու մէջ ամսոց նշաններ են եւ երեք երեք տարւոյն չորս եղանակները կ'որոշեն:

Գարնանայինները. Խոյ [Մարտ], Ցուլ [Ապրիլ], Երկաւոր [Մայիս]: Ամառնայինները. Խեցգետին [Յունիս], Առիւծ [Յուլիս], Կոյս [Օգոստոս]: Աշնանայինները. Կշիռ [Սեպտեմբեր], Կարիճ [Հոկտեմբեր], Աղեղնաւոր [Նոյեմբեր]: Ձմեռնայինները. Այծեղջիւր [Դեկտեմբեր], Ջրհոս [Յունուար], Ձուկն [Փետրուար]: Մարտէն կը սկսին, վասն զի Մարտը տարւոյն գեղեցիկ օրերուն դուռն է. այս ամսոյ 22ին ըստ նոր տօմարի արեւը կը մտնէ խոյ աստեղատունը եւ այն օրը գիշերահաւասար կամ հասարակած կ'ըլլայ, այսինքն գիշեր եւ ցորեկ հաւասար 12 ժամ եւ այս կ'ըսուի գարնանային գիշերահաւասար. անկէ մինչեւ Յունիսի 22ի Խեցգետին կը մտնէ, օրերը աւելի կ'երկարին, Յունիսի 22ին ամառնամուտ է, եւ արեւն ալ կը սկսի վար իջնալ, որով օրերը կը կարճընան: Սեպտ. 22ին կը մտնէ Կշիռ աստեղատունը եւ երկրորդ անգամ գիշերահաւասար կ'ըլլայ որ Աշնանային կ'ըսուի, որովհետեւ այն օրը աշուն կը մտնենք: Անկէ վերջ կը շարունակուի եւ



ձմեռնային արեւադարձ կ'ըլլայ. այն օրը ձմեռ կը մտնենք, արեւը կը սկսի բարձրանալ, օրերն ալ կամաց կամաց կ'երկարին:

Արդի գործածական ամիսներու անունները Հռովմայեցիներէն առնուած են: Ասոնց շատին անունը մէյմէկ աստուծոյ անուն է: Հռոմուլոս Հռոմայ առասպելական առաջին թագաւորը շինեց իր ժողովուրդին տօմարը, առաջին ամիս դնելով Մարտը: Ահա այդ ամիսներու համար եղած առասպելական եւ դիցաբանական զրոյցներ:

Ա. Մարտ, խոյ.—Այս ամսոյ անունը առնուած է Մարս-չաստուածէն, որ Արէս ալ կ'ըսուի եւ իր նշանն է ոչխար մը: Կ'ըսեն թէ Բաքոս կամ Սպանդարամետ Ափրիկէի տիրելու ատեն՝ իր ընկերներովը աւազուտ անապատին մէջ ծարաւէն կը պապակէր, ոչխար մը աւազին մէջէն բղխած աղբիւր մը տեսաւ եւ ցցուց անոնց: Բաքոսն ալ այն



ոչխարը աստեղաց կարգը դրաւ: Բայց այս կենդանակերպին վրայ եղած ընդհանուր կարծիքը այս է: Բէովտիոյ Աթամաս թագաւորը իր Նեփելէ կինը յանկարծական խենթութեան համար թողուցեր ու տեղը Ինովը առեր էր: Երբ Նեփելէին խելքը գլուխը եկաւ ու

դարձաւ ամուսնոյն քով, Ինով անոր վրայ նախանձեցաւ ու վախնալով որ անոր տղաքը Արամազդին յաջորդեն, այնչափ աշխատեցաւ եւ սուտ պատգամներ բերել տուաւ չաստուածներէն, որ Արամազդ հաւատացուց թէ իր Փռիքսոս որդին եւ Հելլէ աղջիկը զոհ ընէ Ապողոնին, որ աստուածներուն կամքը ըլլայ: Այս բանը իմացուց Արամազդ Փռիքսոսին եւ ոչխար մը ղրկեց անոր ոսկի բուրդով: Անոր վրայ հեծան եղբայր եւ քոյր ու օդին մէջէն սկսան երթալ: Հելլէին գլուխը պտտելով վար ինկաւ ծովը, որ մինչեւ հիմայ իր անունովը Հելլեսպոնտոս կը կոչուի (այժմ Չանաք գալէսի ծով), իսկ Փռիքսոս հասաւ Կողքիս (որ Հայոց եւ Վրաց սահմանը երկիր մըն է) Այէտէս թագաւորին քով. հոն ոչխարը մորթեց զոհ ըրաւ, բուրդն ալ պահեց: Այէտէս՝ որ Փռիքսոսը իրեն փեսայացուցեր էր՝ նախանձով սպաննեց զանիկայ եւ այն ոչխարին բուրդը՝ որ ոսկեգեղմն կ'ըսուի՝ յափշտակեց: Աս որ տեսաւ Փռիքսոսին կինը, իր զաւակները Յունաստան փախուց, Յունաց քաջերն ալ Յասոնին առաջնորդութեամբ նաւ մը շինեցին որ Արգոնաւ ըսուեցաւ իբր առաջին նաւ եւ գացին Կողքիս, Փռիքսոսի մահուան վրէժը առին, ոսկեգեղմն ալ ետ դարձուցին. ահա այս ոչխարն է, որ երկինք դասեցին եւ հիմա խոյ համաստեղութիւնն է եւ այս է այն ոսկեգեղմն, որուն համար մարդիկ նաւ շինել սկսան եւ բանաստեղծներ գրքեր շիներ են: Բայց Յունաց իմաստնոց կարծիքն ալ



այս է որ այն ոսկեգեղմն ոչխարը նաւ մըն էր, ոչխարի անունով կամ նշանով, որ Փռիքսոս հօրը հարստութիւնները անոր մէջ դրած Կողքիս գնաց եւ ստոյգն այս կ'երեւայ թէ Փռիքսոս եւ թէ Արգոնաւորդք վաճառականութեան պատճառաւ Հայաստան գացեր են, որովհետեւ Կողքիսը Հայաստանի մէջ կը սեպեն ոմանք եւ կը կարծեն թէ այս ոչխարին գեղմն ալ ոչխարի կամ այծի մորթ կը նշանակէ՝ Հայաստանէն բերած վաճառք եւ անոր տեղը ոսկի առած:



Բ, Ապրիլ, Ցուլ.—Այս ամսուն անունը լատիներէն Ափէրի բառէն առնուած է, որ բանալ կը նշանակէ, վասն զի այս ամսուն մէջ երկիրը կը բանայ իր ծոցը, գարնան բերքերը կը յայտնէ: Իսկ ցուլը քանի մը դիպուածներու յիշատակ է՝ ամէնքն ալ առասպել. բայց հաւանականը այս է իբր թէ Արամազդ ուզելով որ Եւրոպէ՝ Փիւնիկէի Ագենովր թագաւորին աղջիկը առանց իմացնելու իրեն առնէր, ցուլի կերպարանք մտաւ ու գնաց Ագենովրի եզներուն մէջ մտաւ, Եւրոպէն ալ չգիտնալով վրան հեծած ատենը՝ Արամազդ ծովը ցատկեց եւ լողալով Կրետէ կղզին գնաց եւ այն ատեն երկիրը ուր որ անցաւ՝ Եւրոպէին անունովը Եւրոպա կոչեց. ահա աս ցուլին համար է, կ'ըսեն, այս երկրորդ կենդանակերպը:

Գ. Մայիս. Երկուորեակ.— Լատիներէն Մայուս բառէն առնուած է, որ մեծ ըսել է, որովհետեւ այս ամսուն անունը Հռովմայեցւոց մեծամեծներուն պատուոյն համար դրին, իսկ երկուորեակին



յիշատակն է Կաստոր եւ Պոլիդեւկէս զոյգ եղբարց դիպուածը։ Ասոնցմէ Պոլիդեւկիսը Արամազդայ որդի սեպուելով անմահ էր, իսկ Կաստոր մահկանացու եւ Յասոնին հետ մեկտեղ Կողքիս գացողներէն էին ասոնք ալ։ Տաս քաջութիւններ ընելէ ետքը՝ Կաստորը Իտաս իշխանէն սպաննուեցաւ, անոր դէմ անիրաւութիւն ընելուն համար։ Պոլիկեւքիսն ալ Իտասը սպաննեց։ Բայց իր սիրելի եղբօրը մահուան վրայ սաստիկ տրտմած՝ աղաչեց Արամազդին որ կամ Կաստորը ողջնցնէ կամ զինքն ալ մահկանացու ընէ։ Արամազդի սիրտը շարժեցաւ անոր վրայ, բայց խնդիրն ալ ծանր երեւնալով՝ անմահութիւնը մէջերնին բաժնեց. այսինքն անանկ ըրաւ որ մէյմը մէկը ապրի՝ մէյմըն ալ միւսը եւ այսպէս երկուքն ալ անմահ եւ մահկանացու ըլլան, վերջը երկուքն ալ տարաւ երկինք համաստեղութիւն ըրաւ, որ կ'ըսուին երկուորեակք, իսկ երկրիս վրայ Դիոսկորեանք կոչուեցան, որ Դիոսի զաւակներ կը նշանակէ։

Դ. Յունիս, Խեցգետին.— Ամսուն անունը առնուած կ'երեւայ Յունոնէն, որ է Հերա չաստուածուհի, կամ Եունիորէս անունէն, որ երիտասարդ ըսել է, իբր



թէ այս ամիսը մանկական հասակին նուիրուած ըլլայ։



Իսկ խեցգետնին յիշատակը այս է ըստ բանաստեղծից Յունաստանի Արգոնիս գաւառը Լերնեան լճին քով ահագին անճոռնի վիշապ մը կար, որուն Հիդրա ալ կ'ըսեն, որ այն կողմերը շատ վնասներ կ'ընէր, ինը հատ կամ ըստ այլոց հարիւր գլուխ ունէր եւ թէ որ մէկը կտրուէր, տեղը ուրիշ մը կը բուսնէր, ու անոր դէմ միակ միջոցն էր՝ կտրելուն պէս անոր տեղը մէկէն այրելով խարելը, բայց ո՞վ կրնար համարձակիլ։ Հերակլէս որ Յունաց Վահագն էր եւ ամէն դիւցազանց մէջ անուանի, անոր ճարը գտաւ, իր Յոլաս բարեկամը մեկտեղ առած՝ վիշապին վրայ գնաց, ինքը անոր գլուխները կը ջարդէր. Յոլաս ալ շուտ շուտ կ'այրէր, իսկ Հերա դիցուհին, որ չէր ուզեր վիշապին մահը, խեցգետին մը խրկեց որ Հերակլէսին ոտքը խածնելով արգիլէ վիշապին գլուխները կտրելէն, բայց Հերակլէս զանիկա ալ բռնեց, զարկաւ գետինը ջախջախեց։ Հերա ալ առաւ խեցգետինը երկինքը համաստեղութեանց կարգը դրաւ։

Ե. Յուլիս, առիւծ.— Ամսուն անունը առած է Յուլիոս Կեսարին անունէն, որ թէ՛ քաջութեամբ, թէ՛ իմաստութեամբ եւ թէ բարեկարգութեամբ անուանի եղաւ Հռովմայեցւոց մէջ, իրենց տոմարն ալ շտկեց, անոր

համար իր անունով կոչեցին այս ամիսը. առաջ հինգերորդ կ'ըսուէր:



Իսկ առիւծին յիշատակն այս է. վերոյիշեալ Լերնեան լճին մօտ Նեմեայ անտառին քովերը ահագին մեծ առիւծ մը կար, զոր՝ ոմանք լուսնէն ինկած կը կարծէին, ոմանք ալ՝ չաստուածոց ծնունդ կը համարէին, ահկայ շատ վնաս կ'ընէր այն կողմերը եւ զէնքով չէր վիրաւորուեր որ սպաննէին: Երկու դուռով քարայրի մը մէջ կը բնակէր, որպէս զի միշտ փախչելու տեղ ունենայ՝ թէ որ զօրաւոր թշնամի մը գայ վրան: Հերակլէս դուռներուն մէկը գոցեց եւ միւսէն ներս մտնելով, որովհետեւ երկաթով չէր մեռներ առիւծը, ձեռքով սեղմեց, խեղդեց, մորթն ալ հանեց վրան հագաւ, անոր գլուխն ալ սաղաւարտի տեղ իր գլուխը կ'անցունէր: Ահա այս զարմանալի առիւծն է որ իբր թէ երկինք ելեր է:

Զ. Օգոստոս, կոյս.— Այս ամիսը առաջ վեցերորդ կ'ըսուէր, ետքը Օգոստոս կայսեր ի պատիւ անոր անունով կոչեցին:

Իսկ կոյսը կը ցուցնէ Ասդրէա չաստուածուհին, որ աշխարհի առաջին ոսկեդարին մէջ երկիր իջեր էր եւ արդարութեան չաստուած կը սեպուէր: Երբոր մարդիկ անիրաւութիւնը շատցուցին, Ասդրէան ալ կամաց



կամաց քաղաքները թողուց, գեղերը եկաւ, գեղերն ալ թողուց, երկինք դարձաւ:



Շատ անգամ անոր մէկ ձեռքը կշիռք կուտան, միւսը՝ սուր, որով արդարութիւն կը նշանակէ: Բայց ոմանք Աստրէայի տեղ կը կարծեն որ Երիկոնն ըլլայ այս կոյսը, որ Իկարոս թագաւորին աղջիկն էր: Հովիւները Իկարոսն երբ սպաննեցին, Երիկոն յուսահատութենէն ինքզինքը կախեց: Շատերն ալ կը կարծեն թէ Թէմիսն է որ երկնքի եւ երկրի աղջիկն էր եւ արդարութիւն սիրող աստուածուհի մը:

Է. Սեպտեմբեր, կշիռ.— Ամսուն անունը եօթներորդ կը նշանակէ լատին լեզուով, իսկ կշիռը կը ցուցնէ Աստրէայի կամ Թէմիսի արդարութեան կշիռը:



Ը. Հոկտեմբեր, կարիճ.— Ամսուն անունը կը նշանակէ ութերորդ. իսկ կարիճն կը ցուցնէ այն կարիճն՝ որ Արտեմիս չաստուածուհին խրկեց՝ Որիոն կամ Հայկ ըսուած քաջին ոտքը խայթելու. որովհետեւ այս կարիճը կը պարծէր թէ ամէն գազանի կը յաղթէ. Արտեմիս ալ անասնոց որսորդ ըլլալով՝ իրեն նախատինք սեպեց եւ ուզեց վրէժը առնել: Կարիճին թեւերը շատ տա-



րածուած կը նկատեն, որովհետեւ առաջ կշիռի տեղ կը գործածուէր:

Թ. Նոյեմբեր, Աղեղնաւոր.— Ամսուն անունը ին-ներորդ ըսել է լատինե-րէն, իսկ աղեղնաւորը նետ նետող կը նշանակէ



այս ամսոյ մէջ հովե-րուն սաստիկ փչումները եւ յիշատակը այս է. Աղեղնաւորը կը ցուցնէ Քիրո-նը, որուն հայրը Կռոնոս՝ ձիու կերպարանք մտնելուն համար, որդին ալ ձիամարդ եղաւ եւ Արտեմեայ հետ որսորդութիւն կ'ընէր լեռները, շատ արուեստներ սոր-վեցուց Յունաց, Աքիլլէսին ալ դաստիարակ եղաւ: Հե-րակլէս՝ Լեռնեան վիշապին արիւնը թաթխած նետով մը խոցեց Քիրոնը: Քիրոն աղաչեց Արամազդի որ իր կեանքը առնէ: Արամազդը լսեց աղաչանքին եւ զինքը կենդանակերպներուն կարգը անցուց:

Ժ. Դեկտեմբեր, Այծեղջիւր.— Ամսոյս անունը տասներորդ ըսել է, իսկ այծեղջիւրին համար կը պատմեն թէ Կրետէի թա-գաւորին Ամալթէա ա-նունով աղջիկը եղնիկի մը կաթով մեծցուց Արա-



մազդը, անոր համար եղնիկն ալ Ամալթէա ըսուեցաւ: Արամազդ այս եղնիկը երկու ձագերովը աստեղաց կարգը անցուց, անոր մէկ եղջիւրն ալ մուսայից ըն-ծայ ըրաւ, որ ինչ որ ուզեն՝ այն եղջիւրը տայ իրենց.



անոր անկէ հնարեցին Առատութեան եղջիւրը, որ Ամաղթեղջիւր ալ կ'ըսուի եւ շատ տեղ նկարուած կը տեսնենք մանաւանդ գրքերու վրայ, իբր զարդ:

ԺԱ. Յունուար, Ջրհոս.— Ամսուն անունը առ-նուած է Յանուարէս բա-ռէն, որ ըսել է Յանոսա-կանք, այսինքն Յանոս չաս-տուածոյն տօնը՝ տարւոյ սկիզ-բը: Ջրհոսը կը ցուցնէ այս



ամսոյ մէջ եկած յորդ անձրեւները, իսկ առասպել-եայ նշանակութիւնն է, Տրոյիոյ Գանիմետէս անունով որդին Արամազդայ սիրելի ըլլալով՝ իրեն մատռուակը եղաւ: Օր մը ասիկայ Իտա լերան վրայ որսի ելած ատեն, Արամազդի արծիւը խլեց զանի, տարաւ եր-կինք՝ կենդանակերպներու կարգը դասեց:

ԺԲ. Փետրուար. Ձկունք.— Ամսոյս անունը առած է Լատինացւոց Ֆէպր'ուս բայէն, որ քաւել կամ սըր-բել է, վասն զի ան ամսուն մէջ հին Հռովմայեցիք զա-նազան զոհեր կ'ընէին, իբր



թէ իրենց քաղաքին մեղքերը սրբելու նպատակաւ: Իսկ ձկները ըստ առասպելաց կը ցուցնեն այն ձկները, որոնց վրայ հեծան Աստղիկ եւ իր որդին Երոս եւ Տի-փոն հսկային ձեռքէն փախչելով Եփրատ գետն ան-դին անցան ազատեցան: Այս ձկներուն հայրն ալ, կ'ըսէ Ովիտիոս բանաստեղծը, օր մը Իսիս դիցուհւոյն ծար-ւած ատենը ջուր խմցուցեր էր:

# ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. ԹԱՎՈՒԳՃԵԱՆ

ԺԹ Դարուն սկիզբները Գանտիլլի կը հաստատուի ճգնազգեաց Տ. Երեմիա Եպս. Թավուգճեան, որուն եղբօրորդին է Յովակիմ Թավուգճեան, նահատակուած ու թաղուած 1843 Օգոստոս 10ին Գազըր Չէշմէի Ս. Յակոբ եկեղեցոյ շրջափակը: Երեմիա Եպս. աշակերտ Կաղզուանցի Զաքարիա Պատրիարքի, նախապէս մօրը հետ կը հաստատուի Պէյքօզ իբր քարոզիչ ու Գանտիլլիի Ազգ. Գերեզմանատան դէմ տեղ մը կը գնէ ու հոն կաթնտու կովեր պահելով իր մօրը միջոցաւ կաթ եւ մածուն ծախել կուտայ: Երեմիա Եպս. թէեւ ամենուն սիրելի, սակայն կունենայ նաեւ իր հակառակորդն ալ:

Պէյքոզի մէջ նպարավաճառ Գաբրիէլ եւ ուրիշներ ամբաստանագիր մը կը դրկեն Պատրիարքարան եւ կը խնդրեն հեռացնել զայն:



Պատրիարքարանն ալ գիր մը կ'ուղղէ Երեմիա Եպս.ին եւ կը յանձնարարէ հեռանալ գիւղէն ու անմիջապէս երթալ Միջագիւղ: Երեմիա Եպս. շատ դժնդակ պայմաններու ներքեւ կը հեռանայ գիւղէն, վասն զի նոյն օրը ծովը ալեկոծ էր ու անձրեւ կը տեղար. այսպէս Սրբազանը Պատրիարքարանի հրամանը տեղը տանելու համար նաւ կը նստի ու մայրը լալահառաչ ծովեզերքէն կը դիտէ իր զաւկին հեռանալը: Ատեն մը վերջ այդ Գաբրիէլը Պոլսէն նպարներ կը գնէ ու նաւակով եւ հանդարտ ծովով կը վերադառնայ գիւղ եւ երբ նաւակը կը մօտենայ Պէյքօզի, յանկարծ ծովը կ'ալեկոծի ու նաւակը շրջելով Գաբրիէլն ու նպարները ծովամոյն կ'ըլլան: Գաբրիէլի այս տեսակ մահ մը ունենալը Երեմիա Եպիսկ.ին անէծքին կը վերագրուի:

Այս եկեղեցականին համար զարմանալի անէքդոտներ կը պատմուին:

Գանտիլլիի մէջ կը գտնուէր Խալիլ փաշայի ապարանքը: Խալիլ փաշա ամուսնացած էր Սալիհէ Սուլթանուհիին հետ: Սուլթանուհին աչ-

քի ցաւն կը տառապէր, լսելով Երեմիա Եպ.ին ճգնազգեաց կեանքը, կը փափաքի որ ան իր վրայ Աւետարան մը կարդայ: Արքայազնը եղած հրաւէրին կը պատասխանէ ու կ'երթայ ապարանքը, բայց որովհետեւ իսլամ կիները Նամէհրամ էին, դժուար կ'ըլլայ զինքը մտցնել հիւանդին սենեակը: Անոր վրայ Երեմիա Եպս. նարինջ մը բերել կուտայ ու այդ նարինջին վրայ Աւետարան կարդալէ յետոյ կը յանձնարարէ տալ Սուլթանուհիին: Այս վերջինը կուտէ նարինջը ու կը բժշկուի իր ցաւէն:

Սուլթանուհին բնականաբար կ'ուրախանայ եւ կ'ուզէ նիւթապէս վարձատրել Արքայազնը. բայց Երեմիա Եպս. կը մերժէ ըսելով որ.

— Ես Աստուծոյ այս շնորհը ձրի առած եմ, անոր համար չեմ կրնար ընդունիլ անձնական վարձատրութիւն:

Սուլթանուհին այն ատեն կ'ըսէ թէ, կ'ուզէ իր (Հայ) ազգին օգտակար ըլլալ:

— Այդ պարագային, կը պատասխանէ Երեմիա Եպս., կը խնդրեմ որ դպրոց մը բանալու արտօնութիւն տրուի ինձ, որպէս զի աս մեր տղաքը ծովեզերք թափառելէ ազատին:



Սուլթանուհին կ'ընդունի այս առաջարկը ու իր թագաւոր հօրմէն կը խնդրէ ուզուած արտօնութիւնը, ինչ որ չզլացուիր:

Երեմիա Եպս. մեծ յարգ եւ վստահութիւն կը վայելէր Խալիլ փաշայի ապարանքը: Տեղացի Յոյները կ'ուզէին եկեղեցի մը շինել, բայց միշտ արգելքի կը հանդիպէին. վերջապէս Երեմիա Եպ.ի միջնորդութիւնը կը խնդրեն ու անոր շնորհիւ կ'ստանան այդ արտօնութիւնը: Տեղացի Յոյները մինչեւ ցարդ յարգանքով կը յիշատակեն Երեմիա Եպս.ին անունը:

Տեղացի հին ծերունիներ կը պատմեն թէ, օր մը Երեմիա Եպս. քահանայի մը հետ նաւակ նստած երբ Կայսեր. պալատին առջեւէն կ'անցնէր, յանկարծ գեղեցիկ ձայնով մը — որովհետեւ իր ձայնը շատ անուշ է եղեր — կը սկսի երգել զ'Քրիստոս փառաց Թագաւոր շարականը:

Քահանան.— Ի՞նչ կ'ընես, Արքայազն, պալատին առջեւէն կ'անցնինք կոր: Կտրէ ձայնդ:

— Ձգէ, Տէր Հայր, կը պատասխանէ, աս կարդացածս մէյ մը դուն, մէյ մըն ալ Ան (մատովը Երկինք ցուցնելով) կը հասկնայ:

Ահա այս քարի եկեղեցականը 1888ին կը վախճանի եւ մարմինը մեծ հանդիսաւորութեամբ կը թաղուի Գանտիլլիի գերեզմանատունը: Ունի եղեր Տապանագիր մը, սակայն Ընդհ. Պատերազմին ուրիշ շատ մը քարերու հետ գողցուեր է:

## ԳԱՆՏԻԼԼԻԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ գաղութ մը այս գիւղին մէջ կը հաստատուի 1700 թուականին. ասոր իբր ապացոյց կարելի է յիշել Գանտիլլիի Ազգ. Գերեզմանատան մէջ Ընդհ. Պատերազմէն առաջ տեսնուած Տապանաքարեր, որոնց ամենահնագոյնը կը կրէ ՌՃԿ 1711 թուականը: Կան ուրիշ տապանաքարեր ալ, որոնք կը կրեն 1751, 1754, 1755, 1817 թուականները: Գաղութին առաջին անդամը եղած է Տ. Սահակ անունով քահանայ մը, որ 1761ին վախճանած ու թաղուած է եկեղեցւոյ բակը:

ԺԹ. դարուն սկիզբները վանեցի Տ. Յարութիւն քահանայ Գանտիլլիի հոգեւոր հովիւ



կը կարգուի եւ ասոր օրով արդի վարժարանին գետինը կը գնուի, ուր կը հաստատուի դպրոց եւ հոգետուն: Դպրոցի եւ հոգետունի շինութենէ առաջ, երախայից մկրտութիւնը տեղի կ'ունենար Գուրու չեշմէի եւ Միջագիւղի եկեղեցւոյն մէջ: Տ. Յարութիւն բոլոր գիւղացիներուն սիրուած ու յարգուած եկեղեցական մըն էր: Այս քահանային օրովն է որ Երեմիա Եպիսկ. կը հաստատուի Գանտիլլի:

Աշնանեաններ օդափոխութեան կ'երթան Գանտիլլի, որոնք արդի եկեղեցւոյ տեղը կը գնեն: Աշնանեան Պօղոս եւ Տկն. Իսկուհի — կողակից նոյն Պօղոսի եղբօրը Խաչատուրի եւ քոյր Տատեան Պօղոս պէյի — անմիջապէս կը ձեռնարկեն շինութեան: Եկեղեցւոյ հիմնարկութիւնը կը կատարէ Մատթէոս Պատրիարք ու Եկեղեցւոյ օծումը կը կատարուի 1845 Սեպտ. 23ին Վարագայ Խաչին Բարեկենդանի Կիրակի օրը յանուն Ս. Առաքելոց Երեմիա Արքեպիսկոպոսի կողմէ, որ առաջին քարոզիչը կ'ըլլայ Գանտիլլիի:

Ներկայիս Գանտիլլիի մէջ 15 տունի չափ

*Հայ բնակչութիւն մը կայ. Եկեղեցին մնայուն քահանայ չունի, այլ հոգեւոր պաշտամունք երբեմն կը կատարուին Պատրիարքարանէ ղրկուած քահանայի մը միջոցաւ:*

*Շուրջ 2½ դարու մօտ հնութիւն ունեցող Ազգ. Գերեզմանատունն ալ շատ անխնամ վիճակ մը ունի, պատերը փլած եւ դուռ ալ գոյութիւն չունի:*

**ՅԱԿՈԲ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ**

---

## ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

---

**ՋԱՐԴ ՄԿԱՆՑ.— Քիչ մը չմարած կիր առ, անկանի մը մէջ փորէ, մէջը նոյնչափ շաքարի փոշի խառնէ ու մկանց յաճախած տեղը տարածէ, որովհետեւ մուկերը շաքար շատ կը սիրեն, հոտն առածնուն պէս մէկէն կ'ուտեն կը լափեն: Ստամոքսերնուն հեղուկը կիրին հետ միանալով մեծ բորբոքում կը պատճառէ, որով եւ խեղճ մկները կեցած տեղերնին անշնչացած կ'իյնան:**



# ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

## Տ. Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

---

Աստուածային ձեռքը երբ կազմեց այս բարի հօր հողանիւթ ծինուածքը, տուաւ անոր սրբութիւն, նկարագրի վեհութիւն, անձնուիրութիւն եւ անհուն կորով եւ այն սփռեց հազարաւորներու վրայ իր այդ գանձերը: Ոչինչ իրեն համար, ամէն ինչ իր հօտին. իր արիւնին վերջին կաթիլը, գրպանին յետին բնխանը, ու յորջորջուեցաւ **Հայ Միրիէլ**: Նիկոմիդիոյ շրջանը իր նուիրումին ասպարէզ եղաւ. քաղցր նահապետ, զուրգուրացող իր հոգեծին զաւակներուն վրայ, ծառայեց միշտ առանց անձնացոյց շռնդականի որովհետեւ իր կոչումին ձայնը ուժգին կը հնչէր հոգիին մէջ: Հայ Եկեղեցւոյ սրբութեանց արի պահակ եղաւ,



Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

իր կեանքը անոր խունկերու անուշութիւններով զմայլեցաւ, ահա այսպէս ողջունեց երջանիկ ալեւոյթ ու տանեցաւ փառք յաւերժական:

Ինչ որ Սօֆիայի հանդիսութեանց առթիւ Հոգեգալուստի տօնին հնչեցին դրուատիք եւ ծափեր անոր համար, անոնց արձագանգը մինչեւ հեռու աշխարհներ կը կրկնուի թէ՝ Ստեփանոս Սրբազան մեր ժամանակի պատմական դէմքերէն մէկն է, պէտք է ապրի երկար տարիներ:

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

**Ստեփանոս Սրբազան ծնած է 1846ին Նիկոմիդիա, աշխարհական անունով Մելքոն Սուրէն: Նախնական կրթութիւնը կըստանայ Իզմիրի Ազգ. Վարժարանին մէջ, յետոյ կ'անցնի Արմաշ, հոգեւոր ասպարէզի նուիրուելու: Վանքէն դուրս գալուն կը մտնէ Իզմիրի Առաջնորդ Ներսէս Վարժապետեանի քով եւ կ'աշակերտի Նուպար Տահնազարեանի, յետոյ կը ձեռնադրուի վարդապետ 1873ին Առաջնորդին ձեռքով: Անկէ վերջ կը սկսի անոր եկեղեցական գործունէութիւնը իբր առաջնորդ Նիկոմիդիոյ ընդարձակ վիճակին:**



# ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

## ՔՍԱՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿԸ [1905 — 1930] Ի ԳԱՀԻՐԷ

Ուրախութեամբ յափշտակուած կը դիտեմ որ երկու ազնիւ քոյրեր երանութեան բաժակը կը մատ-



Օրիորդք Սօֆի եւ Զարուհի Մանիսալեան

ռուակեն հայ ժողովուրդին, ինչո՞ւ այս իմ հրճուանք. որովհետեւ կը մտածեմ թէ ուրիշներու հետ միացած այդ բաժակը դրի տարիներ առաջ անոնց քնքուշ ափերուն մէջ: Թող դրուի ինձ երեւակայութեանս առջեւ գծուած պատկերը երեւան բերել: Ահա երկու ծաղկատի օրիորդներ, որոնք իրենց հասակակիցներուն նման պէտք էին միայն ծաղիկներ քաղել Իսկիւտարի դաշտերէն,

անոնք իրենց միտքերը զարդարել խորհեցան. իրենց սիրելի երգը եղաւ Ռ. Յ. Պէրպէրեանի յօրինած դպրոցական գ' ղօնը «Լոյս, լոյս, լոյս, դու կեանք



ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

մեր, կեանք մեր եւ լոյս»: Նուիրումի գաղափարը զիրենք արբեցուց. հաւատաւոր եռանդով կորովով զինուած ասպարէզ իջան: Ահա քսանեւհինգամեակ մը բոլորած կուզան, որպէս զի երախտագիտութեան դափնիներով պսակեն իրենց ճակատները: Ապրի՛, շատ ապրի Եգիպտահայը՝ որ կը վարձատրէ զանոնք իր սրտաբուխ համակրանքով: Եւ ես կը մաղթեմ որ անոնք ողջունեն յիսնամեակ մը ոչ երբեք ընկճուած ծերութեան ուժասպառումներէ, այլ միշտ առոյգ. քաջալերով ընդունին շնորհաւորութիւններ ինչպէս այժմ Դեկտ. 14ին, նոյնպէս յիսուն տարիներ վերջ, քաղցր ժպիտներով եւ փառքով շարժեն պարտականութեան դրօշակը: Կեցցեն Մանիսալեան քոյրերը:





# ԱԿՆԱՐԿ ՄԸ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՉԱՓԵՐՈՒ ՎՐԱՅ

**Չափը**, որ ո՛ եւ է եղանակի մը տեւողութեան ժամանակը կը ցուցնէ, երաժշտութեան մէջ անհրաժեշտութիւն մ'է. առանց չափի կամ առանց չափերը զատուած ըլլալու գրուած կամ երգուած ո՛ եւ է երաժշտական կտոր արժէքն շատ բան կը կորսնցնէ. մէկ խօսքով ըսենք որ չափը երաժշտութեան հոգին իսկ է:

Այս չափերը իրենց յատուկ անունները եւ ձեւերը ունենալով հանդերձ, բուանշաններով ալ կրնան ցոյց տրուիլ: Մեր եկեղեցական երաժշտութեան, ինչպէս նաեւ հայ ձայնագրութեամբ գրուած բոլոր երաժշտական կտորներու մէջ գործածուած չափերը՝ իրենց ձեւերով հետեւեալներն են, զորս կը ներկայացնեմ.

[ օ ] **Սուղ** [ ‥ ] **զոյգ կէս** [ . ] **կէտ**(*) [ , ] **ստոր** [ , , ] **երկստոր** [ ͻ ] **ծունկ** [ ͻ ͻ ] **ծնկներ**:

**Սուղը** համասար է չորս **բաղխումի** կամ չորս **չափի** կամ չորս **մասի**, **ստորը** $1/2$ **չափի** կամ երկու **մասի** **երկստորը** $1/4$ **չափի** կամ մէկ **մասի**,

[*] **Զոյգկէտին** եւ **կէտին** միացեալ ալ **եռակէտ** կ'ըսուի, որ կը գործածուի ի հարկին: Ծ. Գ.

ծունկը 1/8 չափի կամ կէս **մասի** **ծնկները** 1/16 չափի կամ 1/4 մասի: **Ութը** **ծունկ** կամ տասնեւվեց **ծնկներ** պէտք են մէկ **չափի** կամ չորս մասի հաւա-սար ըլլալու համար: Սոյն բաժանումը սա՛ ձեւով ալ կրնանք բացատրել: **Սուղը** կ'արժէ երկու **զոյգկէս** կամ չորս **կէս** կամ ութը **տոր** կամ տասնեւվեց **երկտոր** կամ երեսուներկու **ծունկ** եւ կամ վաթ-սուն եւ չորս **ծնկներ**:

Այս նշաններէն զատ կան նաեւ երեք նշաններ ո-րոնք կը կոչուին **բութ** [⋌] **կիսաբութ** [⌃] եւ **քա-ռորդ** **բութ** [x] որ քիչ անգամ կը գործածուի:

**Բութը** մէկ բաղխման 3/4 չափը, **կիսաբութը** 3/8ը եւ **քառորդ** **բութը** 3/16ը կը ներկայացնէ կամ կ'արժէ: Երաժշտական այս նշանները կը գործածուին հայ ձայնանիշերու վրայ դրուելով՝ եղանակներու չա-փին համեմատ:

Չափերը կամ բաղխումները ընդհանրապէս կը զատուին երեք տեսակ **յորդոր** կամ **միջակ**, **չա-փաւոր** եւ **ծանր**՝ երգուելիք կտորին համեմատ՝ անոր սկիզբը դրուելով սոյն **բառերը** միեւնոյն ատեն ու-շադիր զննուելով՝ չափերու կանոնաւոր եւ միօրինակ գնացքին:

Եկեղեցական երաժշտութեան մէջ եւս պէ՛տք է գործածել — եղանակին սկիզբը — ա՛յն չափերը, ո-րոնցմով գրուած է. օրինակ 2/4 կամ 4/4 եւ իւրա-



քանչիւր չափի [**տակտի**] լրանալուն, դնել յա-տուկ նշանը ինչպէս նաեւ վերջակէտի նշանը, երբ ե-րաժշտական կտորը լրացած է:

**Ձայնահատ** [Soupir] (*) նոյնիսկ տեւողութեան նշաններն են՝ որոնք կը գործածուին ձայնանիշերու ա-ռաջ կամ ետեւ, պէտք եղած ատեն, ձայնը կտրելու եւ շունչ առնելու համար:

Զանազան նշաններ ալ կան, որոնց գործածու-թեամբ երաժշտութեան մէջ ամենամեծ հաճելի եւ գե-ղեցիկ փոփոխութիւններ յառաջ կուգան: Օրինակի համար, **ընդհարում** կամ **զարկ** [**չարփմա**]. ասոնք փոքրիկ ձայնանիշեր են որոնք երգեցողութեան կերպի հաճոյականութեան համար՝ եղանակներու մէջ՝ մեծ ձայնանիշերու առջեւ, ետքը եւ վրայ կը դրուին եւ եղանակին հաճելի եւ գեղեցիկ **զարկ** մը կուտան:

**Ստորանիշ, բարձրանիշ, կիս վեր, կիս վար, կապ, անցանիշ. երկարում, վերադարձ, վերջակէտ, ձայն, խազ.** ասոնք ալ նշաններ են ո-րոնք կը գործածուին ի հարկին եւ ըստ պատշաճի եւ որոնց սակայն օրինակներով եւ իրենց ձեւերով բա-ցատրելու համար, Տարեցոյցիս սուղ էջերը անբաւա-կան են. ուստի կը բաւականանամ միայն անոնց ա-նունները տալով:

---

[*] Թուրք երաժշտութեան մէջ **էս** կամ **նուքթը** **տարպ** անունը կուտան: Ծ. Գ.

Ձայներու զօրութեան եւ մեղմութեան համար ալ կը գործածուին, **մեղմ, ուժգին, շատ մեղմ,** կամ **կրկին մեղմ** բառեր որոնց համառօտագրութիւնն է **մ. ուժ. շ. մ.** կամ **կ. մ.:** **Շատ ուժգինի** համառօտագրութիւնն է **շ. ուժ.:**

Երգելու ատեն ձայնը հետզհետէ զօրացնելու կամ մեղմացնելու համար երկու նշաններ ալ կը գործածուին, որոնց կ'ըսուի **զօրացուցիչ** եւ **մեղմացուցիչ** նշաններ: Երբեմն կը պատահի որ երկուքը մէկէն դրուած կ'ըլլայ, որ կը ցուցնէ թէ՝ մեղմ ձայնէն սկսելով ուժովցնել եւ հետզհետէ մեղմացնել պէտք է: Անոնք ձայնանիշերու վրայ դրուելով կ'երգուին:

Երանի՛ լաւ երգողին:

**ԱՐՔ. Ա. ՔՀ. ԷՊԻՉԵԱՆ**

13—8—930 Գնայր

---

## ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

400ին եկեղեցիներու մէջ զանգակներու գործածութիւն:

1453ին Կ. Պոլսոյ նուաճումը Թուրքերու կողմէ:

1800ին պատուաստի գիւտը:

1863ին Սուէզի ջրանցքին բացումը:

1898ին գիւտ անթել հեռագրի:



# ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՄԸ

## ԼԵՒՈՆ ՄԱՁԼԸՄԵԱՆ

---

Թուրքիոյ նոր տառերու յուշատախտակը որ մեր երկրին մէջ կատարուած մտաւորական մեծ յեղափոխութիւնը պիտի յաւերժացնէր, իսկապէս վերանորոգիչի դերով պանծալի ազատարար Կազի փաշային շնորհիւ, պէտք էր գեղարուեստական շքեղ հրաշակերտով մը երեւան գար ձեռընհաս արուեստագէտի մը կողմէ եւ փառաւորուէր գործիչը: Դժբախտաբար այս մասին մեր թերթերը պարզ լրատուութեան ձեւով ծանուցանելով գոհացան, իբր հասարակ դէպք մը արձանագրելով զայն: Միայն Տիար Արտաշէս Գալփաքճեան յօդուածի մը նիւթ բրաւ զայն (**Նոր Լուր**, 29 Մա-



ԼԵՒՈՆ ՄԱՁԼԸՄԵԱՆ

լիս թիւ 1989), եզական առիթ հրապարակագրութեան, որ է ներկայացնել մեր միջավայրի իրական արժէքները: Բայց քիչ յետոյ յիշեալ գրութեան պատասխանի մը Պետրոս Թիլքիեան ստորագրութեամբ (11 Յունիս 1930 թիւ 2002) Գալփաքճեանի գրածը նսեմացուց եւ փորձ հրապարակագիրը չփորձեց պատասխանել: Ինչո՞ւ այս երկչոտութիւնը, ձեռնպահութիւնը:

Ո՞վ է այդ Թիլքիեանը որ յանուն արուեստին ճշդումներ ընելու պատրուակին տակ գրիչ կը շարժէ մատնելով իր եւս փոքրոգի նախանձի մը, ցեղայի՞ն թէ ցեխային յատկանիշ, զոր դարեր առաջ Ղազար Փարպեցի այսպէս բնորոշած է, «խանդածութիւն հայ մարդկան», ինչպէս նաեւ Բամառ-Գափիկյա զըզ-ուանքով կը յիշէ զայն այսպէս, «Ճանաչեցի զքեզ, հայկական նախանձը»:

Հարցում մը Պ. Թիլքիեանի բան է. նախ, Պարոն, արդեօք ձեր բոլոր արուեստագէտները միացած պիտի կրնայի՞ն ի գլուխ հանել այս յուշատախտակը: Եթէ այո՛, ինչո՞ւ ուրեմն Հրանդ Պապազեան յուսահատէր, երբ Մազլըմեան հիւանդութեան պատճառաւ կ'ուզէր ակամայ ձեռնթափ ըլլալ իր ստանձնած գործէն: Երկրորդ՝ այդ յիշուածները եւրոպական հրապարակի վրայ ունի՞ն որ եւ է հռչակերս մը, իրական համբաւի արժանի:

**Դիտակ** եւս (26 Մայիս 1930 թիւ 245) մանրամասնութիւններ տուած է այս յուշատախտակի մասին, եւ թէպէտ բուն արուեստագէտը դրուատած է, բայց



միւս կողմէ անոր արժանիքը նուազեցուցած է, կցելով անոր անուան հետ Հրանդ Պապազեանի եւ ծանօթ մանրանկարիչ Ստեփան Ակայեանի անունները, իրենց յուսանկարներով ի միասին, այսպէս բաժնելով գործին յաջողութիւնը երեքի վրայ: Նոյն թերթը երկիցս յիշատակած է Պապազեանի անունը, որպէս նրբանաշակ խորհրդակից եւ Ակայեանինը չգիտեմ ինչ գրչի փայլփլումներ աններելի են, երբ անոնք իրականութեան հեգնանք կ'ըլլան եւ գիտակից ընթերցողք կը կը դատապարտեն այս ընթացքը:

**Փոլիփիքա** թերթն ալ, առանց վերահասու իրողութեան, խեղաթիւրած է զայն՝ ուրանալով Մազլըմեանի արժանիքը, պարզ **թէքնիքի** մը աստիճանին իջեցնելով զայն: Այդ դիտումնաւոր անճշդութեանց եւս ծածկուած կայ մէկը՝ որ գաղտագողի շարժման մէջ դրած է թերթեր եւ անձեր: Այս վիրաւորիչ հրապարակութիւններուն հզօր պատասխանն է Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովին՝ Լեւոն Մազլըմեանի ուղղած գնահատման իսկական օրինակը, զոր քիչ մը ետքը պիտի տեսնենք: Այժմ նուիրական պարտք կը համարիմ արուեստագէտ Լեւոն Մազլըմեանի կեանքին գլխաւոր գիծերը ներկայացնել հանրութեան:

ԼԵՒՈՆ ՄԱԶԼԸՄԵԱՆ ծնած 1869 Իսկիւտար Իհսանիէ, հօր անունն Ադամ, մօր անունն Աննա, շատ կանուխէն, այն է մանկութեան տարիներէն ինձ ծանօթ էր, որուն ուսուցիչ ըլլալու պատիւն ունեցած եմ իսկ.

Նոր-Թաղի ճեմարան վարժարանին մէջ, որմէ շրջանաւարտ եղած էր 1886ին. ի բնէ խոնարհ եւ պարկեշտ սիրելի եղած էր ուսուցչութեան՝ ոսկի մազերով այս տղեկը, կը յիշեմ թէ իր բարի հայրը, ամէն կիւրակէ անխափան, Ինասիէէն մինչեւ Նոր-Թաղ իր երկու որդիքը Լեւոնիկը եւ Սանդրիկը, երբեմն ալ Արուսեակ քոյրերնին կ'առաջնորդէր Ս. Կարապետ եկեղեցին եւ մինչեւ վերջ, ձեռնամած կանգնած տաճարին աջակողմի եզերքը կը կրթէր զանոնք բարեպաշտիկ ոգւով: Պ. Լեւոն ճեմարանի ընթացքը աւարտելէ վերջ 16 տարեկանին ոսկերչութեան կը հետեւի: Իր վարպետն էր Կիւմիւշճի Նիկողոս աղան բայց յետոյ բարեբախտ զուգադիպութեամբ մը եւրոպացի արուեստագէտի մը կ'աշակերտի, որմէ կ'իւրացնէ արուեստին գիտական նրբութիւնները: Այս կերպով կը նետուի ասպարէզ եւ հետզհետէ շահի գեղարուեստական յաղթանակներ:

Յիշենք այս առթիւ թէ մեր արուեստագէտներուն մեծ յանցանքն է իրենք զիրենք քողածածուկ պահել, արեւելեան ամօթխածութիւն՝ որու մասին իրաւամբ կը գանգատի Արմենակ Սագըզ Անահիտի մէջ թէ մեր վարպետները իրենց ձեռակերտներուն վրայ չեն դրոշմեր իրենց անունը եւ ոչ ալ իրենց կնիքը: Պէտք է սակայն երեւան գալ ի պատիւ գեղարուեստի:

Նուրբ ճաշակ. արուեստագիտութիւն բանաստեղծի խոյանք. ձեռքի ճկունութիւն անհրաժեշտ են ճաշակաւոր գործ մը արտադրելու, այնպիսի բան մը յօրինել, որ



ամէնէն ճարտար արուեստագէտն անգամ շուարեցնէ թէ ի՛նչպէս կարելի է գոյացնել զայն: Պ. Լեւոնի գործիքները այդ մոգական զօրութիւնը ունին եւ գիտեն թէ ի՛նչ պիտի արտադրեն: Այս պատճառաւ քառասուն տարիներէ ի վեր բարձրագոյն շրջանակներու հիացումին արժանացած են. յիշենք մէկ քանին.

Օսմանեան կայսրութեան շրջանին. Սուլթան Համիտի գահակալութեան 25 ամեակին առթիւ Սպարապետ Ալի Րիզա փաշայի կողմէ յանձնարարուած երկու մեծ քանդակազարդ չքնաղ ժամացոյցներ, որոնց համար չորրորդ կարգի Օսմանիյէ ստացաւ, դարձեալ նոյն նոյն առթիւ Եգիպտոսի խտիվին կողմէ յանձնարարուած Ալպոմի մը կողքը՝ գեղազարդուած ոսկեքանդակ եգիպտական բուրգերով, արմաւի տերեւներով զարդարուն՝ որ սքանչացումի առարկայ եղած է, իսկ իր գլուխ գործոցն է 1908 ին Պիոս Ժ. Քահանայապետին քահանայութեան յիսնամեակին առթիւ Պոլսոյ Հայ Կաթոլիկ հասարակութեան կողմէ նուիրուած կաղամարը (տես անոր պատկերը, էջ 188) որ պարծանք եղած է ոսկերչութեան, որուն համար Վատիկանի մէջ նոյն հանդիսութեանց ներկայ երեւելի արուեստագէտներ տարակոյս յայտնելով այսպիսի եզական գործ մը Արեւելքի մէջ պատրաստուած ըլլալուն ենթադրած են թէ Եւրոպայի մէջ հազիւ կարելի է պատրաստել այսպիսի հրաշակերտ մը, ուստի Պոլսոյ Կաթոլիկ Պատրիարքարանը յղացում ունեցած է կան-



Պիոս Թ. Հռոմայ Քահանայապետին յոբելեանին առթիւ ընծայուած կաղամարը Պոլսոյ Հայ Կաթոլիկ համայնքին կողմէ



խաւ Եւրոպա յանձնարարել զայն եւ իբր իրենց միջավայրի գործ նուիրած է Սրբազան Պապին:

Կ. Պատրիարքարանի պաշտօնականութեան ալս Թէչէնեան Լեւոն Արքեպս. հաւաստած է թէ հայ արուեստագէտ մըն է զայն պատրաստողը, Զուխաճի խանի իր աշխատանոցին մէջ: Քահանայապետը որ այս կարգի գեղարուեստական գործերու հաճակ ունէր, գնահատելով զայն՝ յայտնած է թէ «Ես կը ճանչնամ Արեւելքը, հոն կան մեծ արուեստագէտներ: Եւ ընդ երկար ի տես տուած է այդ նրբակերտ կաղամարը Վատիկանի մէջ եւ Ս. Պապին ընդունած շատ մեծարժէք նուէրներուն մէջ ամէնէն աչքառուն եղած է, որուն համար Կաթողիկոս-Պատրիարք Սարպաղեան Արքեպս. յատուկ օրհնութեան կոնդակ շնորհած է եւ մասնաւոր պաշտօնակութեամբ՝ գլուխ ունենալով Թէչէնեան Լեւոն Արքեպս. զայն յանձնած է Լեւոն Մագլըմեանի, այտնելով թէ «Մեր վսեմութեան մէջ յուսախաբ չեղանք: Դուք Ձեր այս չքնաղ յօրինուածքով ազգը պանծացուցիք, օրհնեալ ըլլաք»:

Անկէ զատ զահաժառանգ Եուսուֆ Իզզէտտին Էֆ.ի կողմէ յանձնարարուած երկու արաբական ոսկի շրջանակներ, որոնց մէջ իշխանը իր յուսանկարները զետեղուած էր, Անգղիոյ Եդուարդ Է. թագաւորին եւ թագուհւոյն նուիրուած: Այս շրջանակներէն 4 հատ շինուած է. որոնց երկուքը Պրիւքսէլի 1913ի ցուցահանդէսին մէկ ի տես դրուած է, որուն համար Մագլըմեան ար-

ժանացած է Médaille d'or hors Concours շքա-նշանին:

Գալով նոր տառերու յուշատախտակին, զայն Կազիին նուիրելու գաղափարը յղացած են խումբ մը յարգելի երեսփոխաններ եւ այս նպատակաւ մասնաւոր յանձնարարութեան համաձայն ոսկերիչ Հրանդ Պապազեան պատրաստել տուած է ուրուագիծ մը (croquis) Լեւոն Մազլումեանի, որուն յղուած է Քեազիմ փաշայի: Արդ, անցեալ ամառ Տօլմա Պահճէի պալատը կը հրաւիրուին Պօլսոյ երեւելի ոսկերիչներ: Անոնք տեսնելով այդ նախնական օրինակը[*], կը յայտնեն թէ Պօլսոյ մէջ միայն մէկը կայ շինելու կարող, այն ալ հիւանդ է (ակնարկելով Մազլումեանին) Հրանդ Պապազեան կ'առանձնէ գործը Լեւոն Մազլումեանի ձեռնհասութեան ապաւինելով եւ ինքնաբերաբար կը խոստանայ 6 ամիսէն գործը աւարտել, առանց կանխաւ իր արուեստագէտին կամքը շօշափելու: Դժբախտաբար անողոք հիւանդութիւնը (երիկամանց խանգարում) կը բռնանայ Մազլումեանի վրայ եւ այսպէս տառապագին վիճակի մէջ Մազլումեան ձեռքէ չթողուր իր գործիքները իր երկրին փառքը աւելցնելու փափաքով. բայց կուգան այն-

[*] Թէեւ Եւրոպայէն ալ գեղարուեստական օրինակներ բերուած են, բայց նախապատուութիւնը այդ օրինակին տրուած է:






Յուշատախտակ ոսկի տառերու

պիսի պահեր որ անկարելի կը դառնէր շարունակել Պապահեան շուարած է, ի զո՛ւր կը թախանձէ. բայց ի՛նչ կարելի է ընել, չիկայ ուրիշ մը՝ որ փոխանակուի այս ճարտար արուեստագէտին։ Պէտք է Եւրոպա երթալ եւ հոն լրացնել այս գործը։ Բայց վերջապէս Մազլըմեան կռուելով հանդերձ իր տկարութեան հետ կը յաջողի գործը աւարտել խոստացուած ժամանակին։ Հրանդ Պապահեան երբ կը տեղեկանայ գործին աւարտման, ուրախութենէն յափշտակուած կ'երթայ արուեստագէտին աշխատանոցը եւ հիացած կ'ուզէ համբուրել այն ձեռքերը՝ որ այս հրաշակերտը կերտեցին։

Անմիջապէս կը յանձնուի յուշատախտակը [*]

---

[Պատրաստուած սոյն գլուխ գործոցը կը ներկայացնէ 48×33 սանթիմ մեծութեամբ արծաթեայ յատակի վրայ համակ ոսկի նոր այբուբենի տառեր, շուրջը ռընէսանս ոճով ոսկի զեղաքանդակ վարդերով։ Այբուբենի ներքեւ մէջը կարմիր կիտուածաւոր ոսկի շրջանակի մէջ գրուած է յետագայ հատուածը.

«Թուրքիէէ Պէօյիւք Միլլէթ Մէճլիսի թարաֆընտան Րէյիսը ճումհուր Մուսթաֆա Քէմալ հազրէթլէրինէ» Դարար թարիհի 1 Իքինճի թըշրին 1928։ Իսկ ճակատը շրջանակին մէջտեղը ոսկեայ պսակի մը մէջ ճառագայթող կարմիր կիտուածին վրայ զետեղուած է T եւ C սկզբնատառերը ընդելուզուած (Թուրքիա Ճումհուրիյէթի)։ (Տես պատկեր էջ 191)




T. B. M. M.
İdare heyeti
Sayı
2163

Mazlumyan Levon Efendi
Kuyumcu , nuruosmaniye çuhacı
hanı Istanbul

Büyük Millet Meclisi Namına Reisicumhur Gazi Mustafa Kemal Hazretlerine takdim edilmek üzere yapmış olduğunuz altın harfler levhasını çok zarif ve nefis bir surette imale muvaffak olmuş bulunduğunuz takdir ve memnuniyetle beyan olunur Efendim .24/5/930

Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովին կողմէ գնահատման գրին պատճէնը՝ յղուած Լեւոն Մազլըմեանի

## ԼԵՒՈՆ ՄԱԶԼԸՄԵԱՆ ԷՖԷՆՏԻ

### Ո ս կ ե ր ի չ

Ն. Օսմանիյէ Զուհանի խան

ՊՈԼԻՍ

**Ազգ. Մեծ Ժողովին անունով՝ Հանրապետութեան Նախագահ Վսեմ. Ղազի Մուսթաֆա Քէմալ փաշայի մատուցուելու համար Ձեր կերտած ոսկի տառերու ցուցատախտակը շատ նուրբ կերպով եւ գեղեցիկօրէն յաջողած էք քանդակել: Ես գնահատեմ այս յաջողութիւնը եւ գոհունակութիւն կը յայտնեմ:**

**44—5—930** **(ԻՆԻՔ)**



Տարտանէլի երեսփոխան Շիւքրիւ պէյի, որ կը տանի զայն Էնկիւրիւ, երբ գումարուած էր մեծ ժողովը. երեսփոխաններ կը հիանան եւ բարձր կը գնահատեն այս գործը: Այս ամէնը հեռաձայնով կը հաղորդուի Պապաեան հաստատութեան, ուրկէ Մազլըմեանի ալ կը հեռաձայնուի: Հասնելուն հետեւեալ օրը Քեազըմ փաշա մասնաւոր հանդիսութեամբ կը տանի զայն Ղազի փաշայի, որ կարող է գնահատել այսպիսի գեղարուեստական գործեր, կը սքանչանայ հրաշակերտին վրայ եւ իր բարձր գոհունակութիւնը կը յայտնէ:

Հետեւեալ օրը Ազգ. Մեծ Ժողովին կողմէ գնահատման պաշտօնագիրը կուգայ Մազլըմեանի, թղթատարութեան միջոցաւ, կրկին յանձնարարեալ:

Պ. Լեւոն Մազլըմեան ընդհ. պատերազմի ընթացքին՝ փողերանոցի պատուանշանի, ճիւղին աշխատանոցին պետ կարգուած է, ուր ծառայած է հաւատարմօրէն, ոսկիներու անհաշուելի դէզերու մէջ փայլած է հայեցի առաքինութեամբ իբրեւ թուրք հայրենիքին պատուաբեր քաղաքացի. իր մաքուր անունը շահեցուցած է իրեն մեծ վարկ, անով այժմ եւս փողերանոցի կարեւոր արհեստական գործերու համար, երբ հարկ ըլլայ, կը կոչուի որպէս նոյն հաստատութեան մնայուն անդամ:

Թող ապրի երկար մեր համակրելի արուեստագէտը եւ իր ընտանեկան բոյնին մէջ շրջապատուած կնոջմով եւ սիրասուն զաւակներով վայելէ երջանիկ ալեւոյթ մը:

Ս. Գ.

# Պ. ՑՐԷՆՔ Տ. ՎԱՐԴԱՆԵԱՆ ԵՒ ԻՐ ԳԻՒՏԵՐԸ

**Փորթլէնտ Իվնինկ Էքսփրէս** թերթը իր Մայիս 22ի թիւով կը հրատարակէ յուսանկարը Պ. Ցրէնք Տ. Վարդանեանի եւ նկարագրութիւնը անոր հնարած նորանման մկրատին, որ արդէն մենաշնորհ (փաթէնթ) եղած է. Վարդանեանի հնարած մկրատը կը գործածուի ելեքտրականութեամբ եւ մեծապէս կը նուազեցնէ ձեռքի յոգնութիւնը, միեւնոյն ատեն աւելցնելով մկրատին կարողութիւնը: Տպագրիչներ, դերձակներ եւ կարուհիներ մեծապէս պիտի օգտուին, եւ թիթեղի թերթեր անգամ դիւրաւ պիտի կտրուին նոր մկրատով:

Այս հանճարեղ հայորդւոյ մասին խօսած ենք 1929ի մեր Տարեցոյցին մէջ եւ իր գիւտերը մասնանիշ ըրած ենք: Ան հնարած է եւ կատարելագործած զանազան տեսակ գործիքներ եւ առարկաներ, թուով 17 հատ: Օրինակ, պատուհանի մժղարգելները ինքնաշարժօրէն բանալու գործիք մը, սիկառէթի տուփ մը, ուրկէ սիկառէթը դուրս կ'ելնէ վառուած, երբ մատի փոքր հպում մը կ'ունենայ, շաքարի միացեալ աման մը, աղ եւ պղպեղ պարունակող հետաքրքիր աման մը, մեքենայ



մը որ հացը կը շերտէ եւ ուրիշ փոքր գործիքներ. սակայն այս բոլոր գործիքները կարելի եղած չէ արձանագրել տալ Ուաշինկթընի մէջ, որովհետեւ իրմէ առաջ ուրիշներ նման նորինակ գործիքներ արդէն արձանագրել տուած էին:

Պ. Ցրէնք Տ Վարդանեան յաջողած է վերջին երկու տարուան ընթացքին փաթէնթ ընել կազ վառող ինքնաշարժ գործիք մը, որուն համար խանի մը գործարանատէրներ կ'ուզեն իրաւունք ձեռք բերել իրմէ՝ զայն նարտարագործելու եւ ծախելու համար: Նոր տեսակ մկրատն ալ երկրորդն է: Ազնիւ պարոնը անցեալ տարի մահառիթ հիւանդութենէ մը հազիւ ազատած՝ շարունակեց ստեղծագործել զանազան գիւտեր եւ փայլեցնել հայ հանճարը տեղական թերթերու գովեստներուն արժանանալով ի Փորթլէնտ (Ամերիկա):

Պ. Ցրէնք Տ. Վարդանեան, բարի ծնողքի զաւակ, չէ մոռցած բնաւ իր հայրենիքը եւ ամէն առթիւ կը սիրէ ձեռնտու ըլլալ իր հայրենակիցներուն եւ իր բարեսիրութեան պտուղները բաշխելու համար կը փափաքի բարձր գիներով ծախել իր գիւտերը:

# ՄՈՒՍՈՒԼ

Միջագետքի պատմական քաղաքն է Մուսուլ, սփռուած Տիգրիսի արեւմտեան եզերքին վրայ՝ ընդարձակ դաշտագետնի մը վրայ: Հակառակ տիեզերական պատերազմի սեւ օրերուն իր ծոցին մէջ բազմաթիւ հայ խլեակներ պահած ըլլալուն, եւ հակառակ իր մէջ այժմ բաւականաչափ հայութեան մը գոյութեան, քիչ անգամ զբաղուած է անով Հայ Մամուլը: Մուսուլի հայութիւնը հեռո՛ւ կուսակցական անախորժ դէպքերէ, ինքզինքը տուած է կեանքի պայքարին՝ հայթայթելու օրական չորաբեկ հացը:

**Պատմական անցքեր.**— Պէտք չէ շփոթել այժմու Մուսուլը պատմական հին Նինուէի հետ, որ, ըստ յունական աղբիւրներու տեղեկագրութեան, մայրաքաղաքը եղած է հին Ասորեստանի (1250 Ն. Ք.) Բելի որդին հռչակաւոր Նինոսի ժամանակ: Այս իշխանն է որ Միջերկրականի եւ Ինդոսի միջեւ գտնուած ընդարձակ եւ անապատային երկիրները նուաճելէ վերջ, իր անունով շինած եւ յորջորջած է իր ձեռակերտ քաղաքը՝ Նինուէն, որ քառակուսի դիրքով եղած է փառահեղ մի քաղաք՝ ընդարձակ տարածութեան



վրայ՝ բարձր եւ հաստ պարիսպներով եւ բազմաթիւ աշտարակներով:

Նինուէի վերջին կործանումը տեղի ունեցած է (606 Ն. Ք.) Մետացի Կիաքսար աշխարհակալի եւ Բաբելացւոց Նաբոպոլասար իշխանի օրով, որոնք միանալով կը յաղթեն Ասորւոց վերջին թագւոր՝ Սարակոսին ու կը կործանեն անոր պետութիւնը: Սոյն թուականէն 200 տարի վերջ երբ մեծ պատմաբան Քսենեփոն այս կողմերէն կ'անցնէր, «Նինուէն աւերակոյտ մըն էր»:

Այժմ այս աւերակները կ'երեւան հին Նինուէի: Իսկ Նոր Նինուէն, որ Հին Նինուէի հարաւ արեւելեան կողմը կէս քիլոմէթր հեռաւորութեան մէջ կը գտնուի, 6—700 տուներով հասարակ գիւղ մըն է եւ ունի իր մէջ իբր ուխտատեղի Յովնան Մարգարէի գերեզմանը: Իսկ ներկայ Մուսուլ Տիգրիսի արեւմտեան եզերքին վրայ 96000 բնակիչով կարեւոր քաղաք մըն է: Արաբական նորագոյն պատմութեան համեմատ, այժմու Մուսուլի տեղը դաշտ մըն էր ու Նինուէն էր անոր մայրաքաղաքը: Այս ճշմարտութեան կենդանի վկաներ եղած են բազմայարկ աւերակներ եւ կիսակործան պարիսպներ որոնք կ'երեւան այժմ: Մաքուր եւ հոսուն ջուրի հեռաւորութիւնը, աւերակի կոյտերու վրայ հիմքեր հաստատելու անպատեհութիւնը եւ առաւելապէս պատերազմական դիրքի անյարմարութիւնները հարկադրած են ժամանակի ժողովուրդը մաս առ մաս

փոխադրուիլ այժմու Մուսուլի տեղը՝ Տիգրիսի ձախակողմին վրայ:

**Քաղաքին դիրքը** — Հեռուէն դիտողին կէս ձուկի երեւոյթը կ'ընծայէ քաղաքը՝ հիւսիսէն դէպի հարաւ երկարած: Գլխուն կողմը կը գտնուին **Այն Քիպրիթ** կոչուած ջուրի ակերը, որոնք ամենագեղեցիկ դարմաններ են բորոտներու, ուռուկներու եւ մորթային հիւանդութեանց եւ այն հաստաբեստ պարիսպին ու թագաւորական կիսակործան հին շէնքերու բեկորներ, որոնք նուազ հետաքրքրութիւն չեն շարժեր հնախոյզներուն: Քաղաքը զուրկ է գրեթէ ծառաստաններէ, թփաստաններէ եւ այլ կանաչութիւններէ: Դեռ նոր արթննալու վրայ են ժողովուրդի մէջ գեղեցկագիտական ճաշակ եւ վայելքի հաճոյք: Դէպի հիւսիս արեւմուտք կ'երկարեն Սինճարի լեռնագօտիները, ուր կը բնակին Եէզիտիներ, հին Ասորիներ [բէյարի] Քիւրտեր եւ այլ թափառաշրջիկ ցեղեր:

**Կլիմայ.**— Մուսուլի օդը ամառը սաստիկ տաք է եւ չոր, այլ սակայն առողջարար եւ անոյշ, քան Հալէպինը եւ Պէյրութինը: Տարուան բոլոր եղանակին մէջ չես տեսներ երբեք ո՛չ մլուկ, ո՛չ լու, ո՛չ մժեղ եւ ոչ ալ գիշերային ցող: Տեղացիք գրեթէ ամառանոց երթալու սովոր չեն: Ձմեռը եւ գարնան եղանակին մէջ միայն կ'անձրեւէ առատօրէն:

**Արտածում եւ ներածում.**— Մուսուլի գլխաւոր արտածումն է դէպի եւրոպական երկիրներ՝



բուրդ, արջառ, ոչխար, կենդանային մորթ եւ գդտոր: Իսկ ներածումը, որ աւելի շատ է, բամպակեղէն, ասուեղէն, շաքարեղէն եւ համեմներ են:

**Երկրագործութիւն.**— Ժողովուրդի հասարակ դասակարգի [ֆէլլահ] գլխաւոր զբաղումն է հողագործութիւն, զոր ի գործ կը դնէ տակաւին նախնական ձեւով: Իր այնքան ընդարձակ դաշտերը եւ անապատային գետինները կը բաւեն ամբողջ Միջագետքի եւ Սուրիոյ արմտիքի պէտքերուն, երբ աշխատուին նորագոյն մեքենաներով եւ դրութիւնով:

**Ջրաբաշխութիւն.**— Մինչեւ անգղիական կառավարութեան ի Մուսուլ մուտքի թուականը [918] ժողովուրդը իր ջուրի պէտքը կը հոգար ջրկիրներու տիկերով, իսկ սոյն թուականէն հազիւ 2 տարի վերջը, ջրաբաշխական մեքենաներու միջոցաւ ջուրը բաժնուած է խողովակներով քաղաքին ամէն կողմը, որով ամէն տուն ունեցաւ իր մասնաւոր հոսուն աղբիւրը:

**Ելեկտրականութիւն.**— Ջուրի առատութեան պատճառաւ քաղաքը օժտուած է ելեքտրական լոյսերով: Միայն, անիկա առանձնաշնորհեալ մեծ հարուստի մը սեփականատէր ըլլալով, ժողովուրդը հարկադրուած է սուղ գիներով հոգալ իր լոյսի եւ մեքենայի պէտքը: Այս անպատեհութեան առաջքը առնելու համար քաղաքապետութիւնը (Պէլէտիյէ) արդէն ձեռնարկած է շինելու ուրիշ մեքենաներ:

**Տեղական կրթ. վիճակ.**— Բացի ամէն թաղի

մէջ ծաղկոցներէ եւ նախակրթարաններէ, տեղացիներ ունին նաեւ երկրորդական վարժարան մը (Սէնէվիյէ), 375-400 աշակերտներով: Ունին նաեւ աղջկանց վարժարաններ: Ցաւալի է տեսնել միայն որ մանկապարտէզ գրեթէ գոյութիւն չունի, որով 4-8 տարեկան փոքրեր կը թափառին փողոցներու անկիւններն՝ աղտոտութեան, ցեխի եւ փոշիներու մէջ: Մուսուլի կրթ. պաշտօնեաներ աւելի երջանիկ են քան վաճառականներ, որովհետեւ նոյն իսկ ամենաստորին ծաղկոցի պաշտօնեան կ'ստանայ առնուազն 10-12 ոսմ. հնչուն ոսկի ամսական: 30-40 ոսկի ամսական ստացողներ նուազ թիւ չեն կազմեր: Բացի հայերէ միւս բոլոր իսլամ, քրիստոնեայ եւ հրեայ վարժարաններ կը կառավարուին պետական ծրագրով եւ պիւտճէով: Տիրող ընդհ. լեզուն արաբերէն է:

**Քաղաքակրթութիւն**. — 10 — 12 տարիներէ ի վեր հսկայաքայլ կը յառաջդիմէ Մուսուլ քաղաքակրթութեան մէջ: Այլեւս գրեթէ, չես հանդիպեր բոպիկ ոտքով թափառողներու, հագուստի, կապուստի ֆէլլահական հին տարազներու, մութ ու խոնաւ խրճիթներու մէջ ապրող ընտանիքներու, ինչպէս երբեմն: Մեծ պողոտաներու, հոյակապ շէնքերու, հանրային հաստատութիւններու թիւը տարուէ տարի կը բազմանայ: Կը բարեփոխուին նաեւ ժողովուրդի նիստ ու կացի, շարժուձեւի, յարաբերական եւ ընկերային կապակցութեան կերպերը:



**Հայ կեանք.**— Տիեզերական պատերազմի սեւ օրերուն մէջ, Մուսուլ իբրեւ ամենամօտիկ քաղաքը հայակուլ Տէր-Զօրի, եղած է հանգրուանը հայ բազմաթիւ խլեակներու, որոնք բերուած են Թրքահայաստանէն, Անատոլուէն, Կիլիկիայէն եւ նոյն իսկ Պոլսոյ շրջականերէն: Մարդկային արարածի այսքան մեծ զանգուածը գրեթէ փճացած եւ անհետացած է ահաւոր պայմաններու տակ:

Այժմ, քաղաքին ընդհանուր հայութեան թիւը, ըստ վերջին հայկական մարդահամարի, 215 ընտանիք է [1380] անձ: 1900ական թուականներէն առաջ հոս եկած հաստատուած են Սղերդէն 10—12 ընտանիքներ միայն, որոնք օգտուելով տեղացի ժողովրդեան ժամանակի յետադիմական ընթացքէն տիրացած են կալուածական, դրամական բաւական կարեւոր հարստութեան: Այժմ շնորհիւ անգղիական եւ արաբական բարեխնամ զոյգ կառավարութեանց աչալուրջ հսկողութեան, եւ առաւելապէս, գողերու եւ աւազակներու վրայ տրուած անօրինակ ճնշումներու եւ տուգանքներու, ամէն ոք ազատ է վայելելու ապրելու իրաւունքը եւ ճամբորդելու առանց վտանգի Միջագետքի ամէն անկիւններու մէջ:

Հայեր ունին փոքր եկեղեցի մը՝ իր առաջնորդարանով եւ քահանայի յատուկ յարակից 3-4 սենեակներով եւ՝ ժողովուրդի ազատ քուէով ընտրուած թաղականութիւն մը՝ ատենապետութեամբ ժրաջան Տոքթ.

Գրիգոր Աստարճեանի: Ունին նաեւ մնայուն քահանայ մը՝ Տ. Գրիգոր Տ. Յակոբեան: Ազգ. վարժարանը որ երեք–չորս տարիներէ ի վեր ստացած է կանոնաւոր ուղղութիւն՝ իր նախանձելի մակարդակով եւ ուսուցչական անձնուէր պաշտօնեաներով, իր տիպար օրինակելի մանկապարտէզով միասին ունի 195 երկսեռ աշակերտութիւն: Վարժարանի պիւտճէն կը գոցուի սոսկ տեղական միջոցներով՝ **Ազգ. Տուրքով**, ներկայացումներով, եկեղեցիի օժանդակութիւնով եւ բացառիկ նուէրներով:

Հայերու գլխաւոր զբաղումներն են մեքենավարութիւն, դերձակութիւն, կօշկակարութիւն: Խանութպաններ եւ առեւտրականներ կը կազմեն փոքրամասնութիւն:

Ազգային ընկերային կեանքը լճացած վիճակ մը կը ներկայացնէ: Չկան հայրենակցական ակումբ կամ միութիւն: Հակառակ վերջերս տնտեսական եւ առեւտրական ասպարէզի մէջ ս եղծուած ծանր տագնապի եւ հակառակ գրեթէ ամէն հայու բնակարանի ու գործատեղիի համար վճարուած ծանր եւ սուղ տարեվարձքի, տեղացի, քիւրտ եւ թափառաշրջիկ բազմաթիւ մուրացիկներու շարքին մէջ կարելի չէ հանդիպիլ հայու մ՚իսկ:

Խիստ գնահատելի է Արաբ կառավարութեան եւ արաբ ժողովուրդի Հայերուն հանդէպ ցոյց տուած բարեացակամ եւ հիւրասէր վերաբերմունքը եւ այս հետեւանք հայուն բնածին աշխատասիրութեան եւ ինքնատիպ ընդունակութեան, որոնցմէ միշտ կ՚աշխատին օրինակուիլ իսլամ եւ քրիստոնեայ տարրը:



Վիճակագրութիւն Մուսուլի եւ շրջակայ գիւղերու Հայերու.

| Քաղաք կամ գիւղ | Ընտանիքի թիւ | Անձ | Թիւ աշակերտութեան |
|---|---|---|---|
| Մուսուլ | 215 | 1380 | 195 |
| Քէրքիւք[*] | 120 | 685 | 80 |
| Զախօ [գիւղ] | 80 | 290 | Չունին |
| Քէշկան » | 50 | 210 | » |
| Պանութ » | 20 | 75 | » |
| Իսմայիլ աղա [գիւղ] | 10 | 90 | » |
| Տհօք [գիւղ] | 20 | 90 | » |
| Նոր գիւղ [գիւղ] [Պէսաթքի | 105 | 620 | » |
| | 620 | 3440 | |

ՍԻՐԱԿԱՆ ՕՐՋԱՆԵԱՆ

**10 Յլս. 930, Մուսուլ**

[*] Հոս են Մուսուլի հարստութիւնը կազմող նաւթահորերը, մեծ տէրութիւններու ընչաքաղցութեան ախորժակը գրգռող, որոնց ընդարձակ նկարագրութիւնը գալ տարուան Տարեցոյցիս մէջ պիտի երեւի, որովհետեւ Պ. Սիրական Օրջանեան մեր սիրելի աշխատակիցը հոն պիտի հաստատուի իբրեւ քահանայ, ընդունելով եկեղեցական սքեմ, միեւնոյն ատեն պիտի կոչուի տեսուչ տեղւոյն վարժարանին:

# ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

## Ա.

Հետեւեալ չորս բացատրութեանց համապատասխան չորս բառեր գտնել.

1.— Ասիոյ ամենէն զարգացեալ պետութիւնը:

2.— Հնդկաչինու մէջ ընդարձակ պետութիւն:

3.— Հոմանիշը բառի մը, որ կը նշանակէ նաեւ երկրագունդին առանցքին երկու ծայրերը:

4.— Ցայտարար հայկական անուն:

Գտնուած չորս բառերուն տառերը ճշդովին կազմելու են անունը յարգելի անձնաւորութեան մը, ամենուս ծանօթ, ամենուս սիրելի:

## Բ.

Հաճոյալից է վանկս առաջին՝
Աշխարհի չորս կողմ, մինչեւ իսկ Չին,
Ցաքուռ երկուքս կը կազմեն մէկ նաւ.
Չոր նախահայր մը, ո՛չ տեղեակ բնաւ



Նաւաշինութեան. կերտեց անվարան
Աղէտին ընդդէմ իբր պատսպարան.
Իսկ իմ ամբողջս՝ պէտք է որ ջանանք
Որ ո՛չ մենք ըլլանք, ո՛չ ալ ունենանք:

ՏԻԿ. ՋԻՄԻ ՊԷՆԵԱՆ

## ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՈՅ
## ՁՈՅԳ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

## Ա.

Տրուած վեց բացատրութեանց համապատասխան բառերն են՝

Սառ - կուր - գերի - Ներ - մի - Եմ

եւ այն բառերը իրենց տառերով ճիշդ առ ճիշդ կը կազմեն հետեւեալ առածը.

Գնա մեռիր, եկուր սիրեմ

## Բ.

Ոչ - խար - ոչխար

լուծած է երկուքը ի միասին ՎԱՀԱՆ ԿԻՒԼԻՒՋԵԱՆ (Ժառանգաւորաց վարժարան, Երուսաղէմ):

Իսկ Բ. հանելուկը միայն յաջողած է լուծելու ՕՐ. ԷԹԻԼ Մ. ՆՇԱՆԵԱՆ:

# ՀԱՈՒԸՐՏ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ՀՕՄ

## ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Բարիզէն գրեթէ 150 քիլոմէթր հեռու դէպի հարաւ արեւմուտք, Տուար եւ Շեր նահանգին մէջ է Տիար Միհրան Գարակէօզեանի գնած այս դղեակը 80 հէք-



**Հաուըրտ Գարակէօզեան Հօմ**

թար տարածութեամբ, անտառով շրջապատուած, ուր վեց տարիէ ի վեր հաստատուած է այս Հօմը, ընտանեկան տաքուկ բոյն, հոն որդեգրուած երկու հարիւրէ աւելի որբեր, մեծ մասը պատրաստուած գործնական



կեանքին: Հարիւրի կը հասնի թիւն այս սաներուն՝ որոնք շնորհիւ արհեստի մը այսօր ինքնաբաւ, ինքնապահ եղած են:

Հօմը ունի նախակրթական, լրացուցիչ դասարաններ եւ մի քանի արհեստանոցներ, կը գործադրէ Ֆրանսական կրթական ծրագիրը Ֆրանսացի եւ հայ ուսուցիչներով: 12 13 տարիքէն յետոյ սաները անհրաժեշտ կերպով պէտք է հետեւին Հօմի արհեստանոցներէն ոեւէ մէկուն [դերձակատուն, կօշկակարատուն, ատաղձագործարան, մօթէօրի սպասարկութիւն, պարտէզ, հաւնոց, ճագարնոց]: Արհեստի հետեւող սաներուն համար սահմանուած են հայերէնի եւ Ֆրանսերէնի լրացուցիչ դասընթացքներ: Հօմի ուսուցչութեան որոշմամբ այս տարուընէ սկսեալ բոլոր աւարտող սաներ պարտին հայերէնի քննութիւն մը անցընել: Փոխանցուցիչ արդիւնք չի տուող սաներուն ուսումնական շրջանը աւելի եւս կ՚երկարաձգուի:

Հօմի արհեստանոցներու մէջ որոշ փորձառութիւն մը ստանալէ վերջ սաները կը զետեղուին, Բարիզ, Թուլ, Լիոն կամ այլուր հայ կամ Ֆրանսացի վարպետներու մօտ: Հօմի վարչութիւնը վերին հսկողն է անոնց մինչեւ ինքնապահ ըլլալը, նոյնիսկ աւելի վերջն ալ: 1929—30 շրջանին Հօմը ունէր 90ի չափ աշակերտներ եւ 25—30 արհեստաւոր սաներ:

Հաստատութեան վերատեսուչն է Պ. Նուպար Գալիթեան, աջակցութեամբ իր մօրը Տիկին Արուսեակ Գալիթեանի: Ուսուցչական մարմնի անդամներն են

վերատեսուչի՝ Mr. et Mme Trépreau, ֆրանսերէնի համար, Պ. Գրիգոր Ճիզմէճեան, Տէր եւ Տիկին Փայլակ Սանասար, Պ. Արայ Պարթեւեան, այցելու երաժիշտ ուսուցիչ: Պաշտելի յիշատակի մը նուիրուած այս տուն՝ սպեղանի կը դնէ որդեկորոյս բարերարին վէրքերուն: Անոնք կը բուժուին երբ հոս այս տան մէջ հայ որբեր վայելելով գորով եւ պաշտպանութիւն իրենց ջերմ մաղթանքները կը վերառաքեն դէպի հոգիներու աշխարհը՝ անմոռանալի Հաուըրտին:

## ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
### ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ Ի ՓԱՐԻԶ

Վաթսուն տարիներու դադարէ մը վերջ Սամուէլ Մուրատեան վարժարանը բացուեցաւ 1928ին Վենետկոյ Մխիթարեանց նախաձեռնութեամբ, Փարիզու մէջ Սէնի ափանց գեղածիծաղ բարձրութեան վրայ հաստատուած, շուրջը ընդարձակ պարտէզով եւ մայրիներու անտառով, իր առողջ օդով եւ աննման խաղաղաւէտ դիրքով: Փարիզի գիտական միջավայրին առաւելութիւններէն օգտուելու սահմանուած այս ուսումնարան կարող է տալ աշակերտաց բազմազան եւ խոր ուսում, հաստեցնելով իր ծրագիրը տեղականներուն հետ, որպէսզի ուսանողութիւնը աւարտելով լէզէոնի դպրոցական շրջանը կարենան գաղիական



վարժարանաց հաւասար իրաւամբ յաճախելու որ եւ է պետական համալսարաններ եւ բազմարուեստից վա-



**Սամուէլ Մուրատեան վարժարան**

ճառականական եւ գեղարուեստից բարձրագոյն հաստատութիւններ:

Մխիթարեան եռանդուն եւ գիտակից վարդապետներ իրենց աջակից ունենալով տեղացի առաջնակարգ ուսուցիչներ՝ կը գործադրեն լաւ մշակուած ուսմանց ծրագիր: Տեսուչն է Հ. Սահակ Տէր Մովսէսեան:

Հասցէ՝

Direction du Collège Mechitariste S. Moorat

Rue Troyon 26 Sèvres [Paris]

# ԶՈՒԻՑԵՐԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Փոքրիկ Հելուետիոյ ժողովուրդը Թուրքիոյ զանազան քաղաքներուն մէջ [ի մասնաւորի Սեբաստիա] շարունակ հայ որբեր եւ ուսանողներ հոգացած է՝ 1896էն ի վեր: Անոր շնորհիւ Սկիւտարի Զուիցերահայ



**Ժընեւի երկսեռ սաներ**

դպրոցը 1922ին Զուիցերիա փոխադրուեցաւ իր [սաներու մէկ մասով: Որոնց վրայ նետզնետէ աւելցան



Յունաստանէն եւ ուրիշ գաղթակայաններէ սաներ, եւ այս հաստատութիւնը երկու մասով կ'ընթանայ 9 տարիներէ ի վեր:

Ա. մասը, որ փոքրերու յատկացուած է եւ կուտայ հայկական նախակրթութիւն մը, կը գտնուի Ժընեւի եւ Լօզանի մէջտեղը, Պրնեէն կոչուած գիւղին մէջ, ճուր



**Պրնեէնի հայ դպրոցը**

շէնքեր եւ մշակելի հողեր գնուած են այս նպատակաւ:

Բ. մասը կը կազմեն Ժընեւի մեծ երկսեռ սաներ՝ որոնք կը բնակին «Հայաստան» կոչուած շէնքը,

նոյնպէս սեփականութիւն հաստատութեան եւ կը յաճախեն քաղքին այլ եւ այլ վարժարաններ տեղացի ուսանողներու հետ:

Այս երկու բաժինները ունին շուրջ 110 երկսեռ աշակերտ, ընդհանրապէս որբ կամ չքաւոր:

Պ. Յովհ. Ասպետ տեսուչն է Ժընէվի տան: Իսկ Պընեէնի «Հայ դպրոցը» [Տես պատկեր էջ 213] կը կառավարուի հետեւեալներով. Պ. Ն. Պէկեան [Տնօրէն], Տիկ. Ե. Զօրեան, Տիկ Ի. Գարմէն, Պրֆ. Պ. Գէորգեան, Բ. Եղիայեան, Ա. Խանէտանեան, նաեւ այցելու ուսուցչուհիներ գծագրութեան եւ գերմաներէնի:

Պընեէնի աշակերտները՝ իրենց դասերէն դուրս կը սորվին պարտիզամշակութիւն, անասնապահութիւն եւ տպարանային աշխատանք:

Դպրոցին տպարանը ցարդ հրատարակած է երկոտասնեակ գործեր: 9 տարուան ընթացքին 150 սաներէն 40ը թողած են զայն, որոնց 30ը նախակրթութենէ զատ ստացած է վկայական մեքենագէտի, ելեքտրագէտի, գոհարագործի, վաճառականութեան, երկրորդական վարժարանի եւ նոյնիսկ համալսարանի:

Զուիցերական կոմիտէն այս կրթական գործին համար, ինչպէս նաեւ կարօտ եւ հիւանդ Հայերու համար այս փոքրիկ երկրէն կը հանգանակէ ու կը ծախսէ տարեկան 1 միլիոն ֆրանս. ֆրանքէ աւելի, ասոնց հաշուելու Ղազիրի կուրանոցը 100 հայ դժբախտնե. ով զոր գերմանական Զուիցերիան կը հոգայ համա-



տարմօրէն, նոյնպէս ուղարկելով հանդերձեղէն, սննդեղէն եւ դրամ՝ Մարսէյլի եւ Հալէպի հայ գաղթականներուն:



ՔՐԱՖԹ-ՊՈՆԱՌ

Դժբախտաբար գործին կրթական բաժինը նիւթական մեծ ճգնաժամ կ'անցընէ այժմ ինչ որ կ'սպառնայ չքացնել այս նուիրական գործը, ծանօթ մեծանուն Ա. Քրաֆթ-Պոնառ անհնարին ճիգերով ցարդ վարելով գործը, անկարող կզգայ այլեւս դիմադրելու տարուէ տարի դիզուող պարտքերուն եւ գործին փրկութիւնը կը փնտռէ հայ ժողովուրդի դրական մասնակցութեան մէջ:

Ժամ է խորհիլ այս կենսական գործը ապրեցնելու միջոցներուն վրայ:

Հայ զաւակներ են՝ որ մեր պաշտպանութիւնը կը հայցեն: Անոնց քաղցր ձայները պէտք է արձագանգեն մեր սրտերուն մէջ: Մեր պարտքն է չընդհատել այսպիսի վսեմ գործ մը, այլ մեր նպաստներով ապահովել անոր տեւականութիւնը:

# ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Ո՞րն է այն կեանքը որ կ՚ապահովէ մարդուն՝ փառք եւ երջանկութիւն, այս է խորհիլ իր նմաններուն բարօրութիւնը՝ մինչեւ իսկ օրհասականի պահերուն մէջ, իր բարոյական պարտքերը հատուցանել լիառատ եւ այնպէս մեկնիլ աշխարհէն: Համալսարանական ուսումներով ճոխացնել միտքը, հարստութիւններով ընկերային կարգի ամէնէն բարձրագոյն աստիճանները բարձրանալ, իմաստուն ղեկավար եւ տաղանդաւոր տնտես ըլլալով աշխարհիկ ձեռնարկներու, կոչուիլ վարելու մեծ հարստութիւններ, մինչեւ անգամ քաղաք մը կեր-



ՀԱՆԳ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ



տել, ամէն քայլերուն յաջողութիւններ ունենալ եւ ծափահարուիլ եւ հանդիսանալ դէմք մը ազնուական, առինքնող, ի՜նչ անհուն հրճուանք իր ցեղին: Այս գերազանց պարագաներու շրջանակին մէջ չամփոփուիլ միայն՝ այլ ինք Եգիպտոսի քաղաքացի, նախանձը ունենալ Նեղոսի հովտին մէջ կանգնուած վիթխարի բուրգերուն, ինքն ալ իր կողմէ կանգնել բարեսիրութեան բուրգեր, միլիոններ վճարելով: Պօղոս Նուպար իր պաշտելի կեանքին ամբողջ ընթացքին մէջ փափաքեցաւ որ նպաստելու մէջ առաջին ըլլայ, բանայ նոր ուղի մը՝ ուրկէ ընթանան շատ շատեր. իրենց հօր այս վեհագոյն դասը լաւ սորված են անտարակոյս իր սիրասուն զաւակներն Առաքել, Զարեհ, Վահրամ եւ իր միակ դուստրը կոմսուհի տ'Արսքօտ:

Յաւիտենական երանութիւն չքնաղ գործերով անմահացած նոր ժամանակներու այս իշխանին հոգւոյն՝ որ շիջաւ առկայծ կանթեղի պէս Յունիս 25ին եւ կը հանգչի այդ Բէդ Լաշէզ իր կնոջ եւ զաւկին քով՝ Անլռելի օրհնութիւններ անոր յիշատակին:

# ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

Ինչո՞ւ ընդհանուր սրտա՛բեկում այս ազնիւ հայորդիին կորուստին առջեւ, որովհետեւ ան իբր բարեսիրութեան ճնչաւոր արձան մը կարեկից դէմքով եւ քաղցր ակնարկներով կը դիտէր իրենները Ամերիկեան աշխարհէն: Ահա անսահման զորովի այս արձանը պիտի մնայ մեր երեւակայութեան մէջ իբր քաղցր յիշատակարան, որովհետեւ Պատրիկ Կիւլպէնկեան դժոխըմբեր պա տահարներէ անցնելով՝ կանուխէն կորսնցնելով չքնաղածիր տիկինը, խանդակաթ եղբայր մը, սիրասուն որդի մը եւ հուսկ ուրեմն հրեշտակատիպ Պօղոսիկ թոռնիկը, բայց անսասան մնաց օժտուած բարեզգած ոգով, խորան հայեցի առաքինութիւններու, ժառանգած պաշտելի հոգին իր դարաւոր գերդաստանին, իր միտքը



ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ



լարուած մնաց միշտ իրեններու բարօրութեան համար: Իբր գիտաւոր յուսոյ հետքեր թողուց հայ երկնքին վրայ. իր հոգին թռչլտեցաւ հայ տաճարներու, դպրոցներու, հիւանդանոցներու մէջ: Այժմ երանաւէտ հանգիստ պարգեւէ իր հոգւոյն իր նինջ յաւիտենական, օրօրուած բիւրաւորներու աղօթքներով եւ օրհնութիւններով: Անոր կեանքը ջերմիկ սիրոյ առարկայ, երբ ան Յունիս 12ին հրաժեշտ տուաւ աշխարհի, շատեր չհաւատացին, շատ նուազ թուեցաւ իր կեանքին շրջանը: Ամէն ոք կը հարցնէ.— Աւա՜ղ, ինչո՞ւ մարդ, աստուածային արարած, նուազ կեանք ունենայ քան բուն իսկ մարդուն ձեռակերտներ, որոնք դարերու կեանք կ'ապրին: Պէտք է որ Պատրիկներ հարիւրամեակներ ողջունեն: Խռոված անոր անդարձ մեկնումէն՝ կը կրկնեմ բանաստեղծին խօսքը. «Ասեմ զմեռեալն երանի, վայ որ մնայն կենդանի»:

Ս. Գ.

# ՏԽՐՈՒՆԻ

Այս տարի Տարեցոյցիս շատ մը էջերէն արգունք կը կարէ պատահած մեծ կորուստներու պատճառաւ Տխրունիի այս բաժինէն դուրս, որուն մէջ տխրագին կ'արձանագրենք հետեւեալները.—

**ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ**, ծնած Իզմիր 1842 Նոյ. 28 մեռած Մարսէյլ 1929 Դեկտ. 4: Նուպարեան կը վերաբերի Իզմիրի գրական կաճառին, սիրած է ցվերջ հայ մտաւոր մշակոյթը եւ պահած է իր միջավայրի ազնիւ տիպարներուն գեղեցիկ աւանդութիւնները: Իր հաճոյքը եղած է միշտ գրիչ շարժել, ունի տպեալ կամ անտիպ բազմաթիւ գործեր, յիշենք մի քանին, բառարան **Ֆրանսահայ**, ընդարձակ, առձեռն, գրպանի, **կատակերգք Մոլիէրի**, Վ. Հիւկոյի **Նօտր-տամ Բարիզի**, համառօտ պատմ. քաղաքակրթութիւն եւն.,

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ, աչազուրկ վանեցի բազմարդիւն ուսուցիչ, որ երկար տարիներ ծառայած է կրթութեան վսեմ գործին: Վանայ մէջ դպրոց հաստատելով, հասցուցած է բազմաթիւ սաներ եւ վերջին տարիներ թափառաշրջիկ կեանք մը ունեցած է, իր վերջին հանգրուանը եղած է Եգիպտոս, որուն ազգային սնտուկը ի վարձ անոր անցեալ ծառայութեանց՝ ապահոված է անոր ապրուստը. կը վախճանի 20 Դեկտ. 1929 Աղեքսանդրիոյ մէջ եւ եգիպտահայը պատուեց անոր յիշատակը ազգային յուղարկաւորութեամբ: Երամեան իր տարագիր կեանքին մէջ անգործ չմնաց, պատրաստեց յուշարձան մը՝ որ իր կեանքին պատմութիւնն է: Անոր հրատարակութիւնը եղաւ մեծ սփոփանք իրեն.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԷԹԵԱՆ. ուսուցիչ եւ բանաստեղծ, ծնած Պոլսոյ Օրթագիւղը 1852ին, մեռաւ Մարտ 27ին, Հէլիոպոլիս (Գահիրէ) 77 տարեկան. 1896ին փոխադրուեցաւ Եգիպտոս եւ Նեղոսի հիւրընկալ ափերուն վրայ շարունակեց ուսուցչական եւ տեսչական պաշտօններ. Իր յոբելեանը տօնուեցաւ 1913 Մայիս 25ին եւ այս առթիւ հրատարակուեցան իր քերթուածներու հաւաքածոյն **Արշալոյսէն վերջալոյս** խորագրով: Սէթեան մեր հին սերունդին վերջին շատ յարգելի եւ հազուագիւտ ներկայացուցիչն էր:

---

Տարեցոյցիս անձուկ էջերը չեն բաւեր շատ արժանաւոր անձերու կորուստները ներկայացնել մանրամասնօրէն, ուստի կը բաւականանամ անոնց յիշատակութեամբ միայն, ինչպէս ՅՈՐՈՒԹԻՒՆ ՄՈՍՏԻՉԵԱՆ նախկին դասատու, եւ վերջին տարիներուն՝ Կեդր.

Քաղաքական ժողովոյ ատենապետ, որ դժուարին պարագաներու մէջ պաշտօն վարեց խոհականութեամբ եւ պաշտօնական փորձառութեամբ. ՄԱՔՍՈՒՏ ՆԱՐԼԵԱՆ, առաջնակարգ վաճառական՝ որ ինքնօգնութեամբ յառաջանալով կարեւոր դիրք գրաւեց առեւտրական հրապարակին վրայ, ունեցաւ գործակցութիւն ազգային խորհուրդներու, վերջին տարիներ Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամակցութեան. — ՊԱՂՏԻԿ ՍԻՆԱՆԵԱՆ, փաստաբան, որ ազգային դատերու մէջ անձնուէր օժանդակութիւն նուիրած է.— Յիշենք նոյնպէս Տ. ՊԵՏՐՈՍ ՔՀՆՅ. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Մաքրիգիւղի, շրջանաւարտ Միլքիէի վարժարանին, լաւ տոմարագէտ եւ եկեղեցական խնյրոց հմուտ.— Հայ ուսուցչութիւնն ալ երեք կարեւոր ոյժեր կորսնցուց, մին է ՄԻՍԱՔ ՍՈՒՐԵԱՆ Արմաշու Դպրեվանքէն որ երկար տարիներ տեսչական եւ ուսուցչական պաշտօններ վարած է. հրատարակած է թերթեր վէպերու թարգմանութիւններ: Միւսն ԿԱՐԱՊԵՏ ՊՕՏԻԿԵԱՆ, երկար տարիներ Գատըգիւղի Արամեան վարժարանին տնօրէն, վերջերս Գարթալի դպրոցին, խղճամիտ աշխատութեամբ նուիրուած է իր պաշտօնին: Երրորդն է ԿԱՐԱՊԵՏ ԿԱՐՍԵԱՆ, Խասգիւղի Ներսէսեան վարժարանի տեսուչ, որ մասնաւոր գուրգուրանքով կապուած էր կրթական պաշտօնին, բի՛ւր օրհնութիւն ամէնուն յիշատակին.

---



Տարեցոյցիս այս սեւ էջերը կը փակեմ յիշատակութեամբ անձնուէր ամերիկուհիի մը կորուստին, նա է ՄԻՍ ՔԻՆԻ, տեսչուհի Իւսկ. Ամերիկեան վարժարանին օրիորդաց, որ վիրաբուժական գործողութեան հետեւանքով մեռաւ Փետր.ի մէջ 56 տարեկան հասակին մէջ. Այս վեհոգի օտարուհին իր մեծ ազգին պարծանք եղող ձիրքերով փայլեցաւ հայ ժողովուրդին մէջ, առատաձեռնելով կրթութեան բարիքներ: Ան եղաւ մշակուհին դպրոց դրախտին՝ ուր հայ օրիորդներ ուսման եւ գիտութեան ծաղիկներով պճնուեցան իրմով. իր հմայքը, քաղցրութիւնը, գուրգուրանքը նուիրեց ամէնուն: Ամէնէն վսեմ գործը դպրոցավարութիւնն ըլլալով կը խորհուի թէ արդեօք ի՛նչ հզօր ազդակներ ցնցեցին այս չքնաղ հոգին, որպէս զի ան լքէ ամէն ճոխութիւն, հանգիստ, բիւրատեսակ հաճոյքներ եւ իր ազնիւ կեանքը յծորդէ մերինին հետ եւ հայուհիէ մը աւելի գորով նուիրէ իր սաներուն: Ուստի բիւրաւորներ իրաւամբ ողբացին անոր կորուստը.

Իր յիշատակը պատող համակիրներու լիաբուռն ծաղիկներուն վրայ Տարեցոյցս ալ պարտք կը համարի անմեռուկի փնջիկ մը նուիրել անոր հողակոյտին.

---

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

**Առաւօտ**, այբենարան-ընթերցարան, **Սիմոն Գաբամաճեան**, Գին 25 դրուշ։

**Գանձեր**, փոքրիկ ճամբորդը Արեւելքի մէջ, հեղինակ՝ նոյն։ Գին 100 դրուշ։

## ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒ

**Նոր Քերական Ֆրանս.** լեզուի Է. տիպ. **Միհրան Յովհաննէսեան**, Գին 15 դրուշ։

**Ֆրանսերէն լեզու**, բարեկամ մանկանց, բառագրքոյկ եւ խօսակցական հայ. գաղ. տանկ նշումներով։ Փրոֆ. **Միհրան Աղաճանեան**, Գին 25 դ.ռ.

## Կ. Ն. ՄԱԳԱՍՃԵԱՆ

Արդիական տպարանի մը ամէն առաւելութիւններով օժտուած այս հաստատութիւնը կ'ստանձնէ գոհացուցիչ պայմաններով տպագրել հայերէն, ֆրանսերէն եւ թուրքերէն հրատարակութիւններ, առեւտրական ամէն կարգի հաշուեկշիռ, տոմս, շրջաբերական, եւն. եւն. ճաշակաւոր կերպով։

Տպարանիս նշանաբանն են ճշդութիւն, արագութիւն, պարկեշտութիւն։

# ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Անողոք հիւանդութեան մը ջղային պրկումներն եւ անոնց հետ ընկերացող խոշտանգումներ արգելք չեղան ինծի՝ որ կազմեմ այս գրական փոքրիկ ձեռնարկս, իբր հանոյական նուէր մը քեզ:

Տարեցոյցի մը սահմանն ըլլալով քիչ շատ ամէն նիւթի մշակութիւն, այդ ուղին ընտրեցի եւ ես: Մեր մէջ հրատարակուած բոլոր ընդարձակ տարեցոյցներ, **Փրկչեանը, Ծունահայը, Տաբեւը, Պարսկահայը** կը մրցին միմիայն գրական հատուածներով ճոխացնելու իրենց էջեր: Սխա՜լ ուղղութիւն: Լաւ չէ՞ միթէ որ անոնք **գործնական** ընթացքի մը հետեւին, ունենան վիճակագրական ընդարձակ բաժին, կարեւոր գիտելիքներ. եւն. եւն.:

Կը յուսամ թէ ներկայս, իր թ'երիներով մէկտեղ ներողամիտ գնահատման կ'արժանանայ եւ յաջորդ տարիներու մէջ, եթէ շնորհուի ինծի կեանքի արեւը վայելել, պիտի ջանամ որ սա՝ բազմակողմանի պարունակութեամբ սիրելի դառնայ ընթերցողին:

Իցի՜ւ թէ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0148387

13455